

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության և Ավստրիական զարգացման համագործակցության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Տեղական դերակատարների զորեղացում հանուն զարգացման Շիրակի մարզում» ծրագիրը և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ Ավստրիական զարգացման համագործակցության տեսակետները:



ՀՏԴ 008:39(=19)
ԳՄԴ 71+63.5(5Հ)
Գ 124

Աշխատանքը երաշխավորվել է հրատարակության Երևանի Պետական
Համալսարանի պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից:

Գաբրիելյան Մխիթար, Ծատուրյան Ռուզաննա

Գ 124 Մշակութային ժառանգությունը համայնքների զարգացման համար. «Արագած
հովիտ» Տեղական ակտիվ խմբի համայնքների մշակութային ժառանգության
վերլուծություն և առաջարկություններ / Մ. Գաբրիելյան, Ռ. Ծատուրյան.- Եր.:
Մշակույթը հանուն կայուն զարգացման, 2025.- 179 էջ:

Զարգացման մարդաբանության կամ կիրառական ազգագրության մոտեցումներով իրականացված այս
աշխատանքը բնութարկում է տեղական մշակութային ժառանգության դերը համայնքների զարգացման գործում՝
Եվրոպական միության և Ավստրիական զարգացման համագործակցության ֆինանսավորմամբ իրականացվող
LEAD4Shirak ծրագրի շրջանակներում ձևավորված «Արագած հովիտ» տեղական ակտիվ խմբի
համայնքներում հեղինակների կողմից իրագործված մշակութային ժառանգության հետազոտության
արդյունքների վրա:

Աշխատանքը ներկայացնում է նաև առաջարկություններ, քե ինչպես կարելի է տեղական մշակութային
ժառանգությունը ինտեգրել տեղական զարգացման ծրագրերում՝ համայնքի երկարաժամկետ զարգացմանը
նպաստող հնարավորություններ ստեղծելու համար:

Աշխատանքը նախատեսված է տարբեր խմբերի ու մարդկանց համար, ովքեր իրենց համայնքում ուզում են մի
լավ գործ անել իրենց և համայնքի ընդհանուր շահի համար՝ առաջնորդվելով հետազոտահեղինակ
մոտեցումներով և պահպանելով տեղական ժառանգության ներկայացման էթիկական սկզբունքները:

ՀՏԴ 008:39(=19)
ԳՄԴ 71+63.5(5Հ)

ISBN 978-9939-1-2135-2



Մշակութային ժառանգությունը
համայնքների զարգացման համար.
«Արագած հովիտ» Տեղական ակտիվ խմբի
համայնքների մշակութային
ժառանգության վերլուծություն և
առաջարկություններ



Բովանդակություն

Ինչո՞ւ է կարևոր հետազոտահենք մոտեցումը համայնքների զարգացման ծրագրերում	3
Ի՞նչ խնդիրներ են ուսումնասիրվել, ինչո՞ւ և ինչպե՞ս . հետազոտության հարցադրումներ և մեթոդաբանություն	7
Համայնքների մշակութային ներկա միջավայրը, լանդշաֆտը և բնակչությունը	24
Լանջիկ գյուղի մշակութային լանդշաֆտ.....	42
Նոր Կյանք գյուղ . մշակութային լանդշաֆտ	62
Պեմզաշեն գյուղի մշակութային լանդշաֆտ.....	83
Ձիթհանքով գյուղի մշակութային լանդշաֆտ	103
Տեղական խոհանոցային ժառանգությունը՝ որպես համայնքային ռեսուրս	121
Տոնական ավանդույթներ և համայնքային համախմբման հնարավորություններ	149
Ժողովրդական խաղերը՝ որպես սոցիալական կապեր ամրապնդող գործիքներ.....	157
Առաջարկություններ	175

Ինչո՞ւ է կարևոր հետազոտահենք մոտեցումը համայնքների զարգացման ծրագրերում

Մարդաբանությունը պահանջում է լայնախոհություն, որով պետք է նայել և լսել, զարմանքով ու հիացմունքով արձանագրել այն, ինչը հնարավոր չէր կանխատեսել:

Մարգարեթ Միդ

Ազգագրական հետազոտությունները իրենց ձևավորման պահից հիմնականում ունեցել են խնդիրներ լուծելու ուղղվածություն: Տարբեր ժամանակներում քաղաքական տարբեր համակարգերի պայմաններում ազգագրության ու հանրային հետազոտության առջև դրված լուծելիք խնդիրները միշտ տարբեր են եղել՝ սկսած քաղաքական համակարգերի հանձնարարությունները կատարել կամ հիմնավորել քաղաքական որոշումները, կամ գաղութատիրության շրջանում ուսումնասիրել ենթակա հանրույթներին՝ ավելի լավ կառավարելու ուղեցույցեր մշակելու համար, ավելի ուշ շրջանում ձևավորվեց կիրառական ազգագրության հիմնական մոտեցումը՝ այն է օգնել լուծել խնդիրները: Կիրառական ազգագրության/մարդաբանության տարբեր ուսուցողական դասընթացների ընթացքում մենք էլ բազմաթիվ առիթներ ունեցել ենք քննարկելու ի՞նչ է նշանակում այս սպասվող օգտակար միջամտությունը. օրինակ տարբեր դասընթացների ընթացքում համայնքի խնդիրների քննարկումների ժամանակ խթանել այս մտածողության ձևը՝ առաջարկելով լուծումներ գտնել այս կամ այն խնդրի համար՝ որոշումներ ընդունողների միջավայրում: Որպես կանոն այս բարձրաձայնվող լուծումները եղել են կարևոր, սակայն երբեք չի հնչել հարցը, թե արդյո՞ք գիտենք, թե ինչ կուզեին այն մարդիկ, ում համար մենք որոշում ենք ինչպես բարելավել իրենց կյանքը: Կիրառական ազգագրությունը/ մարդաբանությունը այս կամուրջն է՝ մարդկանց խնդիրների, դրանց տեղական ընկալումների և որոշում ընդունողների միջև:

Հանրային մարդաբանության հետազոտությունները հիմնականում անկախ իրենց մեթոդական կամ տեսական մոտեցումների տարբերություններից, մի քանի հիմնական հարցադրում ունեն, որոնց միտված է այս հետազոտությունների իրականացումը, մասնավորապես՝ ո՞րն է հիմնախնդիրը, ի՞նչ հնարավոր լուծումներ կան, և ի՞նչ հմտություններ և գիտելիք է անհրաժեշտ իրագործելու համար: Այս հետազոտություններում առանցքային հասկացություն է տեղեկատվությունը (ինֆորմացիան), գիտելիքի կիրառումը: Զարգացման մարդաբանության հետազոտություններում կարևորվում է նաև տեղին գիտելիքի և գիտելիքի կիրառման հնարավորությունների համար ժամանակին արված հետազոտության հարցը:¹ Եթե մենք հետազոտության ընթացքում ներառենք շատ տարբեր խնդիրներ, բայց չկարողանանք ցույց տալ կամ պարզել, թե որտեղ և ինչպես է դա հնարավոր կիրառել, այդ հետազոտության արդյունավետությունը բարձր չի լինի: Միաժամանակ, կան գործողություններ, որոնք արդյունավետ կարող են լինել միայն որոշակի ժամանակահատվածում: Պակաս կարևոր չէ նաև, թե այս հետազոտությունները ինչպես են հաղորդակցվում, այսինքն հասնում բոլոր այն շահառուներին, որոնք կարող էին օգտակար

¹ van Willigen, J. (2002) *Applied anthropology: an introduction*. 2nd edn. Westport, CT: Bergin & Garvey. P. 22



գործողություններ

պլանավորել

արդյունքում:

Այս բոլոր հարցերին այս կամ այն ինտենսիվությամբ կամ խորքայնությամբ բախվում են հանրային ոլորտի հետազոտողները, ինչպես մենք: Մի խնդիր է, երբ գիտական հոդված ենք գրում և «քննարկվելու» ենք գիտական հանրության կանոններով, մեկ այլ խնդիր, երբ հետազոտության արդյունքներով ձևավորվում են առաջարկություններ, տեղեկատվություն, որին հնարավոր է ծրագրի տարբեր կողմերը տարբեր մոտեցում ունեն, երբեմն ուրախանալով նոր հնարավորություններից, երբեմն տագնապելով նոր մարտահրավերներից: Անկախ իր ակադեմիական, թե կիրառական ընդգրկումներից մշակութային մարդաբանության/ազգագրության ոլորտի հետազոտողները միշտ ձգտել են ընդդիմանալ անարդարությունները խթանող քաղաքականություններին և վերափոխվել հասարակական հարցերի շուրջ քննարկումները՝ ինչպես գիտական, ակադեմիական միջավայրերում, այնպես էլ հանրային հաղորդակցության ժամանակ:

Մարդաբանական գիտության վերջին զարգացումներում շատ է կարևորվում հանրային հետազոտությունների դերը՝ ձևավորելով անգամ նոր մեթոդաբանական ուղղություններ, ինչպես օրինակ հանրային մարդաբանություն, զարգացման մարդաբանություն: Սովորաբար քննարկումները, թե որտեղ է սկսվում և ավարտվում մարդաբանական/ազգագրական հետազոտությունները մասնագիտական շրջանակներում շարունակվում են՝ մի կողմից տարբերակում և հստակ առանձնահատկություններ դնելով ակադեմիական ազգագրության և հանրային ազգագրության հետազոտությունների միջև, մյուս տեսակետով էլ այս երկու՝ ակադեմիական և կիրառական ուղղությունների մեջ տարբերակումներն այդքան էլ խիստ չեն կարող լինել, քանի որ կիրառվում է գիտականության և բարեխիղճ հետազոտության մեթոդները: Հետազոտողները հարց են տալիս, թե ե՞րբ է սկսվում հետազոտության հանրային կյանքը՝ այն պահից, երբ հետազոտողը ավարտում է տվյալների հավաքագրումը, վերլուծությունը, շարադրանքը և իրեն հարցնում են, թե ինչպես կարելի է կիրառել, թե՞ նաև այն հաշվարկով, որ ինչ կլինի հետազոտության արդյունքների հետ, եթե չտրվի կիրառականության հարցը²:

Կիրառական ազգագրությունը նպատակը չէ ստիպել մարդկանց փոխվել իրենց կամքին հակառակ, այլ՝ օգնելու, որ նրանք արտահայտեն իրենց կամքը:

Ներկայացվող հետազոտությունը կիրառական ազգագրության/մարդաբանության մեթոդաբանությամբ արված աշխատանք է, որը տարբեր մոտեցումներով կարող է ձևակերպվել որպես զարգացման մարդաբանության կամ ծրագրերի մարդաբանության կամ գործողության մասնակցային հետազոտություն ձևով: Այս հետազոտությունը՝ որպես մշակութային «բրոքեր»-ի դեր՝ միտված է տեղական զարգացմանը կամ այն ձևով փոփոխություններ բերելուն, որոնք նպաստում են համայնքի երկարաժամկետ հարմարվողականությանը:

² Sanjek, R. (2004) 'Going public: Responsibilities and strategies in the aftermath of ethnography', *Human Organization*, 63(4), pp. 444–456.

Այս ոլորտում հետազոտողները ի տարբերություն ակադեմիական հետազոտությունների ունենում են տարբեր հնարավորություններ և մարտահրավերներ: Եթե ակադեմիական հետազոտությունների ոլորտում մեր գիտությունը՝ մշակութային մարդաբանությունը, ազգագրությունը առաջնորդվում է «մի վնասիր» սկզբունքով, ապա կիրառական ոլորտի հետազոտություններում մենք պահպանելով «մի վնասիր» սկզբունքը՝ նաև ձգտում ենք ինչ որ մի լավ բան անել մարդկանց համար: Այնուամենայնիվ, էթիկան առանցքային դեր է կատարում կիրառական բնույթի հետազոտություններում: Թեպետ, հաճախ էթիկական խնդիրները , որոնք առնչվում է հետազոտողը հետազոտության ընթացքում կարող են անտեսանելի թվալ, բայց երբեմն «նույնիսկ ամենապարզ իրավիճակները կարող են վերածվել, թվում է՝ անլուծելի հակասություններով լաբիրինթոսի»:

Կիրառական նշանակություն ունեցող հետազոտությունները փաստում են, որ սոցիալական և տնտեսական առավելագույն օգուտներ ապահովելու համար ծրագրերը պետք է պետք է մի քանի սկզբունքներ ունենա՝

- 1.Մշակութային առումով ընդունելի, համադրելի, ընկալելի լինեն այն միջավայրին , որտեղ իրականացվում են
- 2.Արձագանքեն տեղի կարիքներին,
- 3.Ներգրավեն թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց՝ ծրագրավորված փոփոխությունների պլանավորման և իրականացման գործընթացում,
- 4.Օգտագործեն ավանդական կառուցվածքները,
- 5.Լինեն ճկուն:

Այս իմաստով մեր հետազոտությունը էթիկայի ու մոտեցումների առումով լիովին համընկնում է LEADER մեթոդաբանությանը, որով իրականացում են LEAD4SHIRAK ծրագրի նախաձեռնությունները: Կենտրոնական Տեղական Ակտիվ Խմբի (SUԽ-ի) բիզնես նախաձեռնության իրականացման շրջանակներում իրականացված այս ծրագիրը կիրառական մարդաբանության ոլորտի հետազոտություն է: Այս դեպքում մենք՝ որպես հետազոտողներ մեր դերը տեսնում ենք համայնքի մշակութային ներուժը, տնտեսական, սոցիալական, բնության հետ կապված ավանդույթները և դրանց կրողներին՝ որպես համայնքի զարգացման ներուժ դիտարկելը և այս ուղղությամբ ծրագիր իրականացնողներին ու համայնքին «կամրջելը»՝ առավել լավ արդյունքի համար:

Սովորաբար, տեղական ծրագրերում մշակույթը՝ որպես զարգացման ներուժ դիտարկելուն օգնում են հետազոտողները: Նրանք կարողանում են «տեղավորել» տեղական մշակույթը՝ մեծ համայնապատկերի մեջ, առանձնացնել այս մշակույթի առանձնահատկությունները և մշակութային արժեքների հետ ընդհանրությունները՝ հավելյալ արժեք հաղորդելով այն պատկերներին, որոնք շրջանառվում են տեղական միջավայրերում: Այս հետազոտությունը դիտարկում ենք որոշում ընդունողների, ծրագրեր իրականացնողների համար տեղական մշակութային ժառանգության «թարգմանություն»՝ առավել լավ որոշումների ակնկալիքով:

Իհարկե, ինչպես իմաստների ցանկացած մեկնություն ու փոխանցում, չենք հավակնում, որ մեր տեսածը, լսածն ու հասկացածը լիովին ընդունելի են համայնքների բոլոր բնակիչների համար: Բայց նաև գիտենք, որ աշխատանքը կատարելիս խիստ ենք եղել ինքներս մեր առաջ և առաջնորդվել ենք մի քանի էթիկական սկզբունքներով, որոնք մեզ համար կարևոր են տեղական մշակույթների շուրջ հետազոտություններ իրականացնելիս: Էթիկան դիտարկել ենք, ոչ միայն «կարելիներին ու չիկարելիների» պարզ ցուցակ, որին հետևել ենք, այլ բարոյական սկզբունքների համակարգ, մտածողության մոտեցում, որտեղ մշակութային միջավայրի մասնակիցներից յուրաքանչյուրի հանդեպ հարգանքը առանցքային է:

Մեր կատարած աշխատանքը համագործակցային է: Մենք կիրառական ոլորտի հետազոտություններ կատարելիս ամբողջովին միայնակ կամ անկախ չենք աշխատում, այլ համագործակցում ենք ծրագրի աշխատակազմի, համայնքի անդամների, մեր գործընկերների հետ՝ մտքում միշտ ունենալով մեր կարևոր սկզբունքը՝ պահպանել հետազոտողի էթիկան: Մեր աշխատանքը ներառում է բազմաթիվ շահագրգիռ կողմերի հետ համագործակցություն՝ հաճախ բարդ ու բազմիմաստ մշակութային միջավայրերում:

Հետազոտության պատվիրատուի, տեղական համայնքների պատկերացումների շահերի համադրումը բարդ աշխատանք է, որն ուղղված է խնդիրների լուծմանը:

Համայնքային զարգացումը բարդ խնդիր է և ենթադրում է շատ տարբեր տեսանկյուններ և հայացքներ, մասնակիցներ, որի նպատակը իր վերջո «ինքնօգնության» հմտությունների ու գիտելիքի ձևավորումն է, երբ « համայնքը ինքնակազմակերպվում է գործողությունների համար, սահմանում իրենց ընհանուր և անհատական կարիքներն ու խնդիրները, կազմում խմբային և անհատական ծրագրեր, հիմնվում համայնքային ռեսուրսների վրա և աջակցություն գտնում համայնքից դուրս»:³

Այս իմաստով առաջարկվող հետազոտությունը կարծում ենք շատ օգտակար կարող է լինել տարբեր խմբերի, ուլքեր իրենց համայնքում ուզում են մի լավ գործ անել իրենց և համայնքի ընդհանուր շահի համար: Մենք առաջնորդվել ենք ազգագրական գիտության սկզբունքներով՝ տեղական ժառանգություններում անձանոթը դարձնել ծանոթ, և սովորականը՝ անսովոր:

Մխիթար Գաբրիելյան, ազգագրագետ, Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ դասախոս

Ռուզաննա Ծատուրյան, ազգագրագետ, ԵՊՀ դասախոս, Մշակույթը հանուն կայուն զարգացման կազմակերպության համահիմնադիր

³ van Willigen, J. (2002) *Applied anthropology: an introduction*. 2nd edn. Westport, CT: Bergin & Garvey. P. 91

Ի՞նչ խնդիրներ են ուսումնասիրվել, ինչո՞ւ և ինչպե՞ս. հետազոտության
հարցադրումներ և մեթոդաբանություն

Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին գյուղական համայնքների զարգացման վրա ազդեցություն ունեցած ամենակարևոր գործողություններից մեկը համայնքների խոշորացումն էր, որն ի սկզբանե հակասական, իրարամերժ տեսակետներ էր ձևավորել ինչպես քաղաքական, այնպես էլ մասնագիտական, փորձագիտական շրջանակներում:

Իշխանությունների կողմից մշակված փաստաթղթերը որպես համայնքների խոշորացման նպատակ առանձնացնում էին *համայնքների համաչափ զարգացումը, տարածքային համաչափ զարգացման ապահովումը, խոշորացված համայնքների մեջ մտնող բնակավայրերի զարգացման անհամամասնությունների հաղթահարումը, բնակչության կարիքների ու պահանջմունքների բավարարման ավելի լայն ու ամբողջական հնարավորությունների ստեղծումը*:⁴

Կառավարությունը խոշորացված բազմաբնակավայր համայնքների զարգացման հիմնական ուղղություններից մեկը համարում է տնտեսության զարգացումը: «ՀՀ Կառավարության 2021-2026թթ. ծրագիր»-ը տնտեսական քաղաքականության նպատակներ է հայտարարել.

⁴2011թ. նոյեմբերի 10-ին ՀՀ Կառավարության կողմից հավանության արժանացավ «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգը»: Դրանով իսկ ՀՀ Կառավարությունը հաստատեց, որ վարչատարածքային բարեփոխումներն անհրաժեշտ են՝ համայնքների զարգացման շարունակականության ապահովման, համայնքի կողմից առավել որակյալ և մատչելի ծառայությունների մատուցման, խոշորացված համայնքների միավորված ռեսուրսների (մարդկային, ֆինանսական, հողային և այլն) առավել արդյունավետ օգտագործման տեսանկյունից: Այնուհետ, համայնքների խոշորացման գործընթացի անհրաժեշտությունը կարևորվեց նաև այլ փաստաթղթերում, մասնավորապես՝ ՀՀ Կառավարության տարեկան ծրագրերում, Կայուն զարգացման ծրագրում, ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում և այլն: Սկսած 2015 թվականից՝ վարչատարածքային բարեփոխումներն իրականացվել են 6 փուլերով՝ 2015թ. -ից մինչև 2022թ.:

-տնտեսական հնարավորությունների ընդլայնումը և դրանց հավասար հասանելիության ապահովումը,

- մարդու ստեղծարար հմտությունների զարգացման և իրացման միջոցով միջին խավի բարեկեցության աճն ու աղքատության կրճատումը,

- արտահանումը խթանող պայմանների ապահովումն ու միջավայրի ձևավորումը:⁵

Նպատակներից առաջին երկուսն ուղղակիորեն վերաբերում են գյուղական բնակավայրերին ու գյուղատնտեսությանը, իսկ երրորդը կարող է անուղղակիորեն նպաստել գյուղատնտեսության զարգացմանը:

«Ծրագրի»՝ գյուղատնտեսությանը, զբոսաշրջությանը, ժողովրդագրությանը և այլ ոլորտներին վերաբերող բաժիններում մանրամասն ներկայացված են նաև այն գործողությունները, որ պետք է ապահովեն տնտեսության և համայնքների զարգացումը:

ՀՀ Կառավարությունից բացի, մարզերում ու համայնքներում նույն նպատակը հետապնդող ծրագրեր իրականացնում են միջազգային ու տեղական կառույցներն ու կազմակերպությունները:

Շիրակի մարզում EULead4Shirak-ի կողմից իրականացվող «Տեղական դերակատարների գորեղացում հանուն զարգացման Շիրակի մարզում» ծրագրի նպատակն է *ինտեգրված, կայուն և մասնակցային գյուղական զարգացման միջոցով թիրախային մարզերում նպաստել աղքատության, անհավասարության և խոցելիության նվազմանը՝ կիրառելով Եվրոպական միության «LEADER»/Համայնքի կողմից առաջնորդվող տեղական զարգացման (ՀԱՏԶ/CLLD) մեթոդաբանությունը:*

Ծրագիրն ուղղված է խթանելու զբաղվածությունը, նպաստելու գյուղատնտեսության զարգացմանը, համայնքների հզորացմանը, բարելավելու գյուղական բնակչության կենսամիջոցներն ու ապահովելու դրանց կայունությունը՝

⁵ «Ծրագիր Հայաստանի Հանրապետության Կառավարության (2021-2026թթ.), էջ 22: [Microsoft Word - Program-2021-2026 -1 \(gov.am\)](#)

ընդամին պաշտպանելով շրջակա միջավայրը, ապահովելով գենդերային հավասարություն, ինչպես նաև օժանդակելով երիտասարդների և կանանց գորեղացմանը:⁶

Ծրագրի հատուկ նպատակներն են.

✓ Շիրակի մարզում տեղական դերակատարների համախմբման կայուն մեխանիզմի ստեղծումը ԵՄ «LEADER»/ Համայնքի կողմից առաջնորդվող տեղական զարգացման (ՀԱՏԶ/CLLD) մեթոդաբանության հիման վրա

✓ և Շիրակի մարզում համայնքային կարիքների վրա հիմնված նախագծերի իրականացման աջակցությունը՝ համաձայն «LEADER»/ Համայնքի կողմից առաջնորդվող տեղական զարգացման (ՀԱՏԶ/CLLD) մեթոդաբանության:

Ծրագրի գործունեության ընթացքում նպատակների և խնդիրների լուծման համար Շիրակի մարզում ձևավորվել են Տեղական ակտիվ խմբեր (ՏԱԽ), որոնք իրականացրել են ՏԱԽ-ի մեջ մտնող համայնքների տարածքային գնահատումներ և մշակել տարածքի զարգացման ռազմավարություն՝ նպատակ ունենալով կայացնել **«ՏԵՂԱԿԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ ԶՈՐԵՂԱՑՈՒՄԸ ՀԱՆՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ»** ծրագրի հիմնական գաղափարները:⁷

«Արագած հովիտ» Տեղական ակտիվ խմբի (ՏԱԽ) մշակած «Տարածքի տեղական զարգացման 2022-2026թթ. ռազմավարությունում» որպես զարգացման տեսլական ձևակերպված է **«Եկամտի տարբերակված հնարավորությունների ու արտադրողականության բարձրացման ապահովում՝ կրթական նախաձեռնությունների ու նորարարական լուծումների խթանմամբ»:**

ՏԱԽ-ն առանձնացրել է տեսլականից բխող ռազմավարական երկու առաջնահերթ ուղղություն.

⁶ Ծրագրի գործունեության մասին մանրամասն տես՝ [EU-LEAD4Shirak | Gyumri | Facebook](#).

⁷ «Արագած հովիտ» ՏԱԽ-ի նպատակների, խնդիրների ու գործունեության մասին մանրամասն տես՝ [Արագած հովիտ ՏԱԽ/Aragats Valley LAG | Facebook](#); [Գլխավոր - Aragatsvalley Lag](#).

- կրթական, սոցիալական, մշակութային հնարավորությունների ստեղծմամբ երեխաների ու երիտասարդների զարգացման համար ապահովել բարենպաստ ու անվտանգ միջավայր,

- գործընկերության ու նորարար տեխնոլոգիաների խթանմամբ գրանցել տեղացիների՝ գյուղատնտեսությունից ստացվող եկամուտների աճ:⁸

«EULead4Shirak» ծրագրին ներկայացված սույն հետազոտական առաջարկը՝ **«Արագած հովիտ» ՏԱԽ համայնքների մշակութային ժառանգության քարտեզագրում և մշակութային ժառանգության տարրերի ինտեգրում համայնքային զարգացման ծրագրերում»** բխում է մի կողմից՝ կառավարության և ծրագրի առաջնահերթություններից, մյուս կողմից՝ այն հետազոտական կանխավարկածից, որ մինչև օրս համայնքային զարգացման ծրագրերում, չնայած այս կամ այն կերպ ձևակերպված լինելուն, բավարար չափով ներառված չեն՝

ա. մշակութային (տեղական՝ հիմնականում համայնքային) ժառանգությունը որպես համայնքային, այդ թվում՝ ռազմավարական զարգացման կարևոր բաղադրիչ և

բ. մշակույթի և վերջինիս առանձին համալիրների գենդերային տեսանկյունը, որը կարևոր է համայնքների և առանձին բնակավայրերի համաչափ զարգացման համար:

Հետազոտական նման կանխավարկածի ձևակերպման հիմքում հեղինակների՝ շուրջ երեք տասնամյակի դաշտային ազգագրական հետազոտությունների և վերլուծական փորձառությունն է:

Համաձայն հետազոտական կանխավարկածի՝ մշակույթի հանդեպ վերաբերմունքի հիմքում (պետական քաղաքականության, տեղական ինքնակառավարման մակարդակներում), որպես կանոն, դրվում է երկու վիճարկելի մոտեցում.

⁸ Մանրամասն տես՝ «Տարածքի տեղական զարգացման 2022-2026թթ. ռազմավարություն», էջ 6: [Արագած հովիտ Ռազմավարություն.pdf \(aragatsvalleylag.am\)](#)

1. մշակույթի սահմանափակ, ոչ ամբողջական ընկալումը. մշակույթը ծրագրեր իրականացնողների և տարբեր ծրագրերում ներառվածների ընկալմամբ հիմնականում նյութական, մոնումենտալ մշակույթն է (հնագիտական հուշարձաններ, եկեղեցիներ, վանքեր, ամրոցներ և այլ) կամ ոչ նյութական մշակութային ժառանգության սահմանափակ թվով բաղադրիչները (տոներ, ծեսեր ու դրանց շուրջ կառուցված գործողություններ): Այս մոտեցումը որպես կանոն մեքենայորեն կրկնում է խորհրդային շրջանի ուղղահայաց, հիերարխիկ քաղաքականությունը, երբ կենտրոնը որոշում էր, թե ազգային մշակույթի որ բաղադրիչը և ինչ նպատակով պետք է շրջանառվի, իսկ տեղական մշակութային նախաձեռնությունները միտված էին գաղափարախոսական պետության առաջնահերթությունների սպասարկմանը:

Հետխորհրդային Հայաստանում, թեպետ համակարգային փոփոխությանը, մշակութային քաղաքականությունը շարունակվում էր ընկալվել ուղղահայաց և հիերարխիկ՝ սպասելով «կենտրոնի» ուղղորդումներին: Նման փորձի երկարամյա կիրառման արդյունքում համայնքներում թուլացել են տեղական մշակույթի արժևորման կարողությունները և մեծ մշակութային համայնապատկերում այն դիրքավորելու հմտությունները:

2. Մշակույթն ընկալվում է որպես անընդհատ ներդրում պահանջող միջավայր, որի հիմնական նպատակը կրթական, դաստիարակչական, ըստ անհրաժեշտության նաև քարոզչական գործառույթներ իրականացնելն է:

Այս երկրորդ մոտեցման հիմքում դեռևս խորհրդային շրջանում արմատավորված մոտեցումներն են, երբ գաղափարախոսական տարբեր խնդիրները լուծվում էին մշակույթի օգնությամբ (ֆիլմեր, ներկայացումներ, գեղարվեստական գրականություն, կերպարվեստ ու երաժշտություն): Միևնույն ժամանակ, խորհրդային համակարգը կրթական, դաստիարակչական, գաղափարախոսական խնդիրները լուծում էր մշակույթի «անընդհատ սպառումն» ապահովելով (գյուղական

գրադարաններ, ակումբներ, մշակույթի տներ, դրանցում անընդհատ կազմակերպվող միջոցառումներ, ներկայացումներ և այլն):

Այս մոտեցումները, ըստ էության, սահմանափակում են մի կողմից՝ մշակույթի լայն, ամբողջական ու համակողմանի ընկալումը, մյուս կողմից՝ նեղացնում են մշակույթի ստեղծարար, կիրառական ներուժի բացահայտումն ու ստեղծարար արդյունաբերության զարգացման հնարավորությունները համայնքներում ու գյուղական բնակավայրերում:

Հաշվի առնելով գիտական կանխավարկածի հիմքում դրված թեզերն ու մոտեցումները՝ որպես հետազոտության նպատակ ձևակերպվել է՝

- ուսումնասիրել «Արագած հովիտ» ՏԱԽ-ի մեջ մտնող համայնքների մշակութային ժառանգությունը՝ նյութական և ոչ նյութական,
- քարտեզագրել այն,
- ներկայացնել մշակութային ժառանգությունը համայնքային զարգացման ծրագրեր ներառելու վերաբերյալ առաջարկություններ,
- ներկայացնել տեսական և մեթոդաբանական կողմնորոշիչներ, որոնք հնարավորություն կտան ստեղծելու համայնքային մշակութային ժառանգության քարտեզագրման մեթոդաբանական հիմքեր:

Հետազոտված համայնքները

«Արագած հովիտ» ՏԱԽ-ը ներառում է ութ համայնք՝ Ձիթհանքով, Լանջիկ, Սառնաղբյուր, Քարաբերդ, Նահապետավան, Նոր Կյանք, Պեմզաշեն, Լեռնակերտ:

Ձիթհանքով, Լանջիկ, Սառնաղբյուր, Քարաբերդ բնակավայրերը խոշորացումից հետո ընդգրկված են Անի, իսկ Նահապետավան, Նոր Կյանք, Պեմզաշեն, Լեռնակերտ բնակավայրերը՝ Արթիկ խոշորացված համայնքի կազմում:

EULead4Shirak ծրագրի աշխատակազմի հետ քննարկումների արդյունքում որոշվեց հետազոտության ընտրանքը սահմանափակել 4 բնակավայրով: Տարբեր բաղադրիչների զուգորդմամբ ի վերջո առանձնացվեցին Լանջիկ, Ձիթհանքով,

Պեմզաշեն և Նոր Կյանք բնակավայրերը, երկուսկան յուրաքանչյուր խոշորացված համայնքից:⁹

Բնակավայրերի ընտրությունը կատարվեց տարբեր բաղադրիչների համադրմամբ.

- **կոմունիկացիոն կամ լոգիստիկ,** ինչը կարևոր է շարժունության, տնտեսական ակտիվության տեսանկյունից: Հաշվի առնվեց հիմնական ճանապարհներից, մայրուղիներից ունեցած հեռավորությունը (Լանջիկը Երևան-Գյումրի (Հյուսիս-Հարավ) մայրուղու անմիջական հարևանությամբ է, Պեմզաշենն ու Նոր Կյանքն ունեն միջին հեռավորություն, իսկ Ձիթհանքովը համեմատաբար ավելի հեռու է մայրուղուց),
- **գյուղատնտեսությամբ զբաղվելու հնարավորություններ** (սեփականաշնորհված հողատարածքների չափեր, ոռոգում, իրացման խնդիրներ). այս տեսանկյունից Նոր Կյանքը, Լանջիկը, Ձիթհանքովն ունեն միջին ապահովվածություն, իսկ Պեմզաշենն ունի հողի խնդիր, քանի որ նախկինում եղել է քաղաքատիպ ավան, ըստ այդմ ունեցել է սահմանափակ հողատարածքներ:
- **«Խորհրդային Ժառանգություն»**⁹ խորհրդային տարիներին, հատկապես 1950-1980-ական թթ. տնտեսության կառուցվածք, զբաղվածություն, արտագնացություն, արդյունաբերության տարբեր ճյուղերում ներգրավվածություն (պայմանավորված Արթիկ և Մարալիկ քաղաքներում, Պեմզաշեն քտա-ում արդյունաբերական ձեռնարկությունների գործունեությամբ):
- **Բնակչության կրոնական կազմ** (առաքելական (Նոր Կյանք, Պեմզաշեն), կաթոլիկ (Լանջիկ) հայերով բնակեցված և խառը (Ձիթհանքով) գյուղեր:

⁹ Հեղինակները շնորհակալություն են հայտնում Lead4Shirak ծրագրի աշխատակազմին, ինչպես նաև «Արագած հովիտ» ՏԱԽ համակարգող Նելլի Վարդանյանին՝ հետազոտության ընթացքում ցուցաբերած համակողմանի աջակցության համար:

Հետազոտության մեթոդաբանությունը: Ինչպես EULEAD4Shirak ծրագրի աջակցությամբ իրականացված նախորդ երկու ծրագրում, այս հետազոտությունում ևս կիրառվել է հետազոտության որակական մեթոդը: Հիմնական գործիքներ են կիրառվել խորացված հարցազրույցներն ու դիտարկումները:

Դաշտային ազգագրական հետազոտություններ իրականացվել են նշված չորս համայնքում: Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր համայնքում իրականացվել է շուրջ 6 անհատական խորացված ու փորձագիտական հարցազրույց: Նոր Կյանքում ու Լանջիկում իրականացվել են նաև ֆոկլու-խմբային հարցումներ երիտասարդների հետ, որոնց հետ զրույցից հետո արդեն գյուղի տարածքում նրանք ներկայացրել են գյուղի մշակութային լանդշաֆտը, սեփական պատկերացումները գյուղի զարգացման ու այս գործում մշակույթի կարևորության մասին:

Հարցազրույցներն անցկացվել են նախապես մշակված հարցարանի միջոցով (Հավելված 1), որը մեկնաբանություններով առաջարկելու ենք որպես համայնքի մշակութային քարտեզագրման ուղեցույցի նմուշ: Անհատական խորացված հարցազրույցները զրուցակիցների հետ համաձայնեցնելուց հետո ձայնագրվել են ու սղագրվել: Տեքստում դրանք, որպես կանոն, օգտագործվում են անանուն, նշվում են միայն բանասացի սեռը, տարիքը, բնակավայրը: Դաշտային ազգագրական հետազոտությունն իրականացված ուսումնասիրության մեկ բաղադրիչն է:

Դրան զուգահեռ՝ բնակավայրերում աշխատել ենք նաև դիտարկման մեթոդով՝ շրջել տարածքով, լուսանկարել, դիտարկել այս կամ այն միավորի տեղադիրքը, պահպանվածության վիճակը և այլն: Այս մոտեցումը նույնպես բավականին արդյունավետ էր, քանի որ թույլ տվեց ոչ միայն համայնքի ու շրջակայքի մշակութային լանդշաֆտը դիտարկել որպես ամբողջություն ու միաժամանակ դրանցում առանձնացնել առանձին ենթաշերտեր, այլ նաև հիմնավորեց կանխավարկածի՝ մշակույթի սահմանափակ ընկալմանն առնչվող դրույթը:

Չորս բնակավայրում դիտարկման ընթացքում լուսանկարվեցին հին տներ (100 և ավելի տարեկան), որոնք կա՛մ կիսավեր վիճակում էին, կա՛մ ծառայում էին որպես մառան ու գոմ, մինչդեռ իրականացված հարցազրույցներում նկատվեց այս հարցի շուրջ համայնքի բնակիչների, հատկապես երիտասարդների անտեղյակությունը:

Դիտարկումը հնարավորություն տվեց ավելի տեսանելի դարձնելու նաև համայնքի ոչ նյութական մշակութային ժառանգությունը: Դիտարկումների ընթացքում արվել են հարյուրավոր լուսանկարներ, որոնցից մի քանիսը ներկայացվում են վերլուծությունում:

Հետազոտության ևս մեկ բաղադրիչը փաստաթղթերի հետ աշխատանքն է: Դիտարկվել են առաջին հերթին «Արագած ՏԱԽ»-ին վերաբերող կամ վերջինիս կողմից մշակված փաստաթղթերը. «Արագած Հովիտ Տեղական Ակտիվ Խմբի (ՏԱԽ) Տարածքի Տեղական Զարգացման 2022-2026 թթ. Ռազմավարություն»-ը,¹⁰ «Տեղական դերակատարների գորեղացում հանուն զարգացման Շիրակի մարզում» ծրագրի հարավային ՏԱԽ-ի տարածքում իրականացված գնահատումների արդյունքները: Սրան գուցահեռ՝ դիտարկվել է ինչպես ծրագրի, այնպես էլ «Արագած Հովիտ» ՏԱԽ-ի ֆեյսբուքյան էջերի տեղեկատվությունը:

Փաստաթղթերի մեկ այլ խումբը կազմել են պաշտոնական փաստաթղթերը. խոշորացված համայնքների և առանձին բնակավայրերի զարգացման ծրագրերը՝ «Արթիկ համայնքի 2022-2026 թթ. զարգացման ծրագիր»¹¹, «Անի համայնքի 2018-2022 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը»,¹² ինչպես նաև առանձին բնակավայրերի զարգացման ծրագրերը, որոնք 2021թ. ավարտվել են:

Բացի պաշտոնական փաստաթղթերից, իրականացվել է նաև գրականության, իրականացված հետազոտությունների, հրապարակված նյութերի վերլուծություն:

¹⁰[Արագած հովիտ Ռազմավարություն.pdf](#) ([aragatsvalleylag.am](#))
[Արագած հովիտ Ռազմավարություն.pdf \(aragatsvalleylag.am\)](#)

¹¹ [61837.pdf \(mtad.am\)](#)

¹² [61836.pdf \(mtad.am\)](#)

Շիրակի մասին ստեղծված է բավականին հարուստ պատմագիտական գրականություն, որում այս կամ այն կերպ անդրադարձ է կատարվել նաև ուսումնասիրված համայնքներին:

Շիրակին անդրադարձել են դեռևս միջնադարյան հայ պատմիչները, որոնք հետազոտությունում ներկայացված չեն, քանի որ Շիրակի վաղ պատմության ուսումնասիրության խնդիրը դուրս է հետազոտական հարցադրումների շրջանակից: Նշենք միայն, որ պատմիչների վկայությունները վերաբերում են Շիրակի քաղաքական պատմությանը, ավելի ուշ շրջանում՝ Բագրատունիների հայոց տերության տնտեսությանը, մշակույթին, հատկապես Անի մայրաքաղաքին ու Շիրակի միջնադարյան նշանավոր եկեղեցիներին: Ավելի ուշ, Շիրակին բազմաթիվ անդրադարձներ կան տարբեր հետազոտողների և հատկապես Վենետիկի Մխիթարյան միաբանության հայրերի երկերում, որոնցից ամենանշանավորը թերևս հայր Ղևոնդ Ալիշանի «Շիրակ» աշխատությունն է:¹³ Շիրակին, հիմնականում Անիի ու Ճարտարապետության ուսումնասիրության համատեքստում անդրադարձել են հայ մշակույթի, պատմության ու Ճարտարապետության ուսումնասիրության բազմաթիվ երախտավորները՝ Ն. Մառ, Թ. Թորամանյան, Յ. Ստրժիգովսկի և ուրիշներ, որոնցից մի քանիսը եղել են նաև ուսումնասիրված այն բնակավայրերում, որտեղ կան միջնադարյան նշանավոր հուշարձաններ (Պեմգաշեն, Նոր Կյանք):

Խորհրդային տարիներին ևս Շիրակի հանդեպ գիտական հետաքրքրությունը պահպանվում էր, հրատարակվում էին Շիրակի պատմությանը, մշակույթին վերաբերող տարբեր մենագրություններ ու հոդվածներ:¹⁴ Դրանց մեծ մասը վերաբերում էր Շիրակի միջնադարյան ժառանգությանը, Անիին, տարածքի եկեղեցիներին ու վանական համալիրներին: Դրանցում, սակայն, անդրադարձ կար նաև ուսումնասիրված բնակավայրերին: Այսպես, Նոր Կյանքի եկեղեցու վիմագիր

¹³ Տես՝ Ղ. Ալիշան, Շիրակ. տեղագրութիւն պատկերացոյց, Վենետիկ – Սբ Ղազար, 1881:

¹⁴ Տես օրինակ՝ Հ. Եղիազարյան, Շիրակի լեռնահովտի պատմական հուշարձանները, Եր., 1975:

արձանագրություններին առանձին հոդված է նվիրել Հ. Մելքոնյան,¹⁵ իսկ բուն եկեղեցուն անդրադարձել է Վ. Գրիգորյանը:¹⁶ Պեմզաշենի ու որոշ այլ հուշարձանների վերաբերյալ հոդվածներ է հրատարակել Ալ. Մանուչարյանը:¹⁷

Անկախության տարիներին նույնպես հրատարակվել են մենագրություններն ու հոդվածներ, որոնցում այս կամ այն կերպ անդրադարձ կա ուսումնասիրված բնակավայրերին: Այդ շարքում արժեքավոր է հատկապես «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի թիվ X պրակը, որ վերաբերում է Շիրակի արձանագրություններին և որում առանձին դիտարկվում են ուսումնասիրված 4 բնակավայրերը:¹⁸ Առանձին բնակավայրերին վերաբերող ուսումնասիրություններից հիշատակելի են Ա. Հայրապետյանի մենագրություններն ու հոդվածները, որոնցում հեղինակը մանրամասն դիտարկում է Արևելյան Շիրակի բնակչությանը, ժողովրդագրական տարբեր ցուցանիշներին վերաբերող հարցեր:¹⁹

Հետազոտությունը իրականացրել և վերլուծական տեքստը պատրաստել են ազգագրագետ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, ԵՊՀ դասախոս Ռուզաննա Ծատուրյանը և ազգագրագետ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, ԵՊՀ դոցենտ Մխիթար Գաբրիելյանը:

¹⁵ Հ. Մելքոնյան, XI դարի վիմագիր Նոր Կյանք գյուղից//Լրաբեր հասարակական գիտությունների, 1983, 5, էջ 57-67:

¹⁶ Վ. Գրիգորյան, Վաղ միջնադարի հայ ճարտարապետության գմբեթավոր քառաթև երկու հուշարձան//Լրաբեր հասարակական գիտությունների, 1973, 4, էջ 35-44:

¹⁷ Ա. Մանուչարյան, Պեմզաշենի չհրատարակված մի արձանագրություն//Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի տեղեկագիր, հասարակական գիտություններ, 1965, 9, էջ 85-89; նույնի՝ Շիրակի չհրապարակված շինարարական արձանագրություններ//Լրաբեր հասարակական գիտությունների, 1967, 8, էջ 78-84:

¹⁸ Դիվան հայ վիմագրության, պրակ X. Շիրակի մարզ (կազմեց Ս. Բարխուդարյանը), Եր., 2017:

¹⁹ Մանրամասն տես՝ Ա. Հայրապետյան, Արևելյան Շիրակը XIX դարի առաջին կեսին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություններ), Գյումրի, 2005; նույնի՝ Ժողովրդագրական գործընթացներն Ալեքսանդրապոլի գավառում (XX դ. առաջին քսանամյակ). հոդվածների և նյութերի ժողովածու, Եր., 2020; Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIX դ. -XX դարասկիզբ) (փաստաթղթերի և նյութերի ժողովածու՝ աշխատասիրությամբ Ա. Հայրապետյանի):

Մշակութային ժառանգություն և համայնքային զարգացում: Համայնքային զարգացման ծրագրերում, ինչպես արդեն նշեցինք, տարբեր կերպ են ընկալվում ու ըստ այդմ ձևակերպվում մշակութային ժառանգություն, տեղական մշակութային ժառանգություն, համայնքային մշակութային ժառանգություն հասկացությունները: Որպես կանոն, մշակութային ժառանգության տակ հասկացվում են առաջին հերթին / հիմնականում նյութական մշակույթի հուշարձանները (հնագիտական հուշարձաններ, պեղավայրեր, եկեղեցիներ, վանքեր, մատուռներ, խաչքարեր), ինչի արդյունքում համայնքի, կոնկրետ բնակավայրի մշակութային ժառանգության շատ շերտեր ուղղակի դուրս են մնում և՛ հետազոտական հարցադրումների, և՛ տարբեր ծրագրերի շրջանակներից:

Ընտրանքի չորս համայնքները բացառություն չեն: Մշակութային ժառանգության ընկալման և կարևորման հիմնական փաստաթղթերից մեկը բնակավայրի մասին պաշտոնական տեղեկատվությունն է:

Համայնքի անձնագիրը, բնակավայրի մասին տեղեկատվությունը համայնքային պաշտոնական կայքերի ձևաչափի մաս են, որոնք սովորաբար տեղադրվել են համայնքների ձևավորման սկզբում և որպես կանոն ընթացիկ վերանայումների, վերախմբագրումների չեն ենթարկվում: Խոշորացված համայնքների դեպքում այն ներառվում է որպես համայնքի մեջ մտնող բնակավայրի մասին տեղեկատվություն, որը ևս՝ որպես համեմատաբար նոր տեղադրված, չի ներառում թիրախային տեղեկատվություն՝ համայնքների զարգացման հնարավորությունները շեշտադրելու և ուղղորդելու առումով:

Շիրակի մարզպետարանի պաշտոնական կայքի «Համայնքի մասին» բաժնում **Ձիթհանքովին** վերաբերող տեղեկատվությունում մշակութային ժառանգության մասին նշված է *«Ըստ հայտնաբերված հնագիտական հուշարձանների տեղագրության՝ տեղանքը բնակեցված է եղել դեռևս վաղ բրոնզե դարում:*

Բնակավայրի տարածքում պահպանվել են պատմամշակութային տասնյակ արժեքներ»։²⁰

«Անի համայնքի անձնագիրը» և՛ Ձիթհանքովի, և՛ մնացած բնակավայրերի մասով կրկնում է գրեթե նույն տեղեկատվությունը։²¹ Ավելի մանրամասն անդրադարձ խոշորացված համայնքի ու վերջինիս առանձին բնակավայրերի մշակութային ժառանգությանը չի պարունակում նաև «Անի համայնքի 2018-2022թ. հնգամյա զարգացման ծրագիրը»։²²

Լանջիկին վերաբերող տեղեկատվությունը հետևյալն է «Գյուղն ունի եկեղեցի, իսկ շրջակայքում կան գյուղատեղիի ավերակներ, գերեզմաններ»։²³

Նոր Կյանքը, որ Պեմզաշենի հետ Արթիկ խոշորացված համայնքի կազմում է, ուսումնասիրված համայնքներից միակն է, որի մասին գիրք է հրատարակվել «Նոր Կյանք գյուղի պատմությունը» վերնագրով։ Հեղինակը Մ. Կնյազյանն է։²⁴ Այդ պատճառով տարբեր կայքերում գյուղի մասին տեղեկատվությունն ավելի ընդարձակ է. «Նոր Կյանքում գտնվում են Մբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (VI-VII դարեր), «Թուխ Մանուկ» մատուռը (X-XII դարեր), «Անտոնենց» (մ.թ.ա. 1-ին հզմ.) և VIII դարի «Տապան կոտորուկի արտեր» գյուղատեղիները... Գյուղի հյուսիսարևելակողմի քանջարանոցներում կա բազալտե մի մահարձան՝ բաղկացած պատվանդանից և կոթողից։ Կոթողը խաչքար է, նրա զարդաքանդակները բնորոշ են 10-11-րդ դարերին։ Տեղացիք այդ մահարձանը «Հազամերխաչ» են կոչում. առաջներում այն եղել է ուխտատեղի։ Գյուղի արևելակողմի ձորակում կուտակված են զանազան տեղերից բերված 10-12-րդ դարերին բնորոշ քանդակազարդ խաչքարերի բազմաթիվ բեկորներ։ Գյուղից մեկ կիլոմետր դեպի արևելք կա «Անտոնենց խարաբեք» անունով բնակատեղի»։²⁵

²⁰ [Ձիթհանքով1.pdf \(mtad.am\)](#)

²¹ [Tu194091534025115_Tu194091049359115_.docx \(live.com\)](#)

²² [We186061059032115_Ani2018-2022--29.docx \(live.com\)](#)

²³ [Լանջիկ1.pdf \(mtad.am\)](#)

²⁴ Մ. Կնյազյան, Նոր Կյանք գյուղի պատմությունը, Եր., 2001։

²⁵ [Nor Kyanq.pdf \(mtad.am\)](#)

Պեմզաշենի վերաբերյալ տեղեկատվությունը հետևյալն է. *«Պեմզաշենում պահպանվել են V դարի բազիլիկ եկեղեցու հիմնապատերը, VI դարի եկեղեցիներ, Մակարավանքի սբ Սիոն (1001 թ.), սբ Աստվածածին (XVII դար), Առաքելոց վանքի (XI դար) եկեղեցիները, XIII-XIV դարերի խաչքարեր: Գյուղից հարավ-արևելք կան միջնադարյան բերդի պարիսպների հետքեր, գտնվել են մ.թ.ա. II հազարամյակի բրոնզե և երկաթե իրեր»*.²⁶

Այս տեղեկատվությունը վկայաբերվեց ցույց տալու համար, որ բնակավայրի մասին տեքստերում մշակույթը ներկայացվում է հիմնականում հուշարձանների թվարկմամբ:

Հետազոտությունում մշակույթը դիտարկվել է որպես ավելի լայն երևույթ, որը չի սահմանափակվում միայն պրոֆեսիոնալ մշակույթով կամ հուշարձաններով: Այն նյութական մշակույթից բացի, ներառում է համայնքի ոչ նյութական մշակութային ժառանգությունը՝ միաժամանակ մշակույթը դիտարկելով ոչ միայն որպես արդյունք (նյութական և ոչ նյութական արժեքների), այլ նաև որպես գործընթաց:

Ոչ նյութական մշակութային ժառանգությունը հանրության, խմբերի, որոշ դեպքերում առանձին անձանց կողմից որպես իրենց մշակութային ժառանգության մաս ճանաչված, կենցաղում հաստատուն տեղ զբաղեցնող սովորույթների, ավանդույթների, ծեսերի, պատկերացումների ու արտահայտման ձևերի, գիտելիքների ու հմտությունների, ինչպես նաև դրանց առնչվող գործիքների, առարկաների, ստեղծագործությունների և մշակութային տարածքների ամբողջությունն է:

Ոչ նյութական մշակութային ժառանգությունն ունի հետևյալ ոլորտները՝

- **Բանավոր ավանդույթներ և պրակտիկաներ**՝ կապված լեզվի և խոսքի հետ: Առած-ասացվածքներ, առակներ, հեքիաթներ, աղոթքներ և խոսքային այլ բանաձևեր, որոնք տվյալ համայնքի կյանքում որոշակի կարևորություն ունեն, կարգավորում են սոցիալական և միջանձնային հարաբերություններ:

²⁶ [Pemzashen.pdf \(mtad.am\)](#)

- Կատարողական արվեստներ ու հմտություններ՝ ձայնային ու գործիքային կատարումներ և դրանց դերը համայնքի կյանքում: Դրանք են մեներգերն ու խմբերգերը, խմբային ու անհատական պարերը, ժողովրդական թատրոնը:
- Սոցիալական այն պրակտիկաները և ծեսերը, որոնք շարունակում են կրել իրենց սոցիալական գործառույթները և չեն կորցրել իրենց բովանդակությունը:
- Ուտեստին առնչվող պրակտիկաներ:
- Բնության ու տիեզերքի մասին ժողովրդական գիտելիք:
- Ավանդական արհեստներ և դրանց առնչվող հմտություններ:

Հետագոտված չորս բնակավայրում էլ այս մոտեցմամբ մշակութային քարտեզն էապես փոխվում է, և որպես մշակութային ժառանգության հիմնական տարր ներկայացվող պատմաճարտարապետական հուշարձաններին ավելանում են նյութական մշակույթի և ոչ նյութական մշակութային ժառանգության տասնյակ տարրեր.

բնակավայրի և հարակից տարածքները՝ թաղամասեր, գետեր, լճեր, առուներ, ուխտագնացության տարբեր վայրեր,

բնակարանն ու բնակարանային համալիրը (չորս գյուղում էլ պահպանվել են 20-րդ դարի սկզբին կառուցված տներ)՝ դրա շուրջ կառուցված նարրատիվներով,

տնտեսական ու օժանդակ շինությունները (ձիթհան, ջրաղաց, դարբնոց, այլ շինություններ),

տնտեսական, առաջին հերթին գյուղատնտեսական ու արհեստագործական զբաղմունքները (գորգագործություն, ձիթհանություն, կաթի վերամշակում, հացաթխում, փայտագործություն, կավագործություն և այլ) ոչ թե որպես ինքնին համակարգեր, այլ առաջին հերթին մարդու գործունեության ու ներգրավվածության համատեքստում,

ուտեստը և հացկերույթի մշակույթը, որ, չնայած ընդհանրություններին, ունի նաև շատ հետաքրքիր տեղական դրսևորումներ:

Յուրաքանչյուր համայնքի ու բնակավայրի մշակութային քարտեզը, սակայն, չի սահմանափակվում միայն վերը թվարկվածով: Կան առաջին հայացքից գուցե աննկատ բազմաթիվ այլ տարրեր, որոնցից յուրաքանչյուրն ուրույն դերակատարում ունի համայնքի մշակութային ժառանգության քարտեզում ու միաժամանակ ավելի ամբողջական է դարձնում համայնքային կյանքը:

Մշակույթի քարտեզագրման ու մշակութային ժառանգության մասին պատկերացումները հաշվառելիս արդեն փոխվում են նաև զարգացման տեսլականներն ու ծրագրերը: Համայնքային զարգացման հայեցակարգերի հիմքում արդեն դրվում է ոչ միայն, թե ինչ ունի տվյալ համայնքը, այլև այն, թե ինչպե՛ս են համայնքը կամ վերջինիս առանձին ակտիվ խմբերն ունեցածը կիրառում համայնքային զարգացման ծրագրերում:

Այսինքն՝ *ինչ* հարցադրումից բացի, կարևոր է համարվում նաև *ինչպես հարցադրումը՝ որպես գործողությունների համակարգ:*

Այս մոտեցումը հնարավորություն է տալիս քարտեզագրելու նաև ոչ նյութական մշակութային ժառանգության տարրերը.

տոներ, ծեսեր ու դրանց շուրջ կառուցված արարողություններ,

ուխտագնացություններ,

ավանդական ու ժամանակակից խաղեր,

հացկերույթ, ուտեստային պրակտիկաներ, հանրային այլ պրակտիկաներ:

Համայնքի մշակույթի քարտեզի ամբողջացման համար կարևոր է նաև գենդերային մոտեցումը:

Մշակույթը, միայն կնոջ կամ միայն տղամարդու գործունեության արդյունք լինելուց զատ, նաև համատեղ գործունեության արդյունք է: Համայնքների ու բնակավայրերի մշակութային քարտեզներում, սակայն, հաճախ կնոջ գործունեությունը ոչ բավարար է ներկայացված այն դեպքում, երբ համայնքային զարգացման տասնյակ նախագծերում արդյունավետություն ապահովում են հենց կինն ու նրա ստեղծագործական կարողությունները:

Հետազոտության ընթացքում մենք փորձել ենք համայնքի մշակութային քարտեզագրումը կատարել այնպես, որ հստակ լինեն կնոջ ու տղամարդու, ինչպես նաև նրանց համատեղ գործունեության «կետերը»:

Այս մոտեցումը մշակույթը դարձրել է ավելի լայն ու ընդգրկուն, իսկ բնակավայրի, բնակչության կյանքը՝ ավելի «մշակութային»՝ ներառելով առօրեականությունը, զբաղմունքներն ու գործողությունները, որոնք մի կողմից՝ մշակութային են, մյուս կողմից՝ մշակույթով պայմանավորված:

Մշակույթի նման ընկալումն ու ուսումնասիրության՝ նման տեսանկյունից կառուցարկումը թույլ են տվել ակնառու դարձնել «մշակույթի միջոցով և մշակույթի հետ զարգացման» սկզբունքը, երբ մշակույթը դիտարկվում է ոչ թե որպես արդյունք, այլ գործընթաց:

Մշակութային ժառանգությունն ավելի ընդգրկուն տեսնելը հնարավորություն է տալիս ցանկացած բնակավայրի «մշակութային քարտեզը» դարձնելու անհամեմատ ավելի ընդգրկուն, միաժամանակ խիտ ու բազմաշերտ՝ միաժամանակ ցույց տալով, թե հուշարձանային, նյութական մշակույթի միջավայրը ի՞նչ է պատմում տեղական պատմության, միջավայրի և տեղացիների կյանքի ու սովորույթների մասին: Մշակութային պատմությունները, որոնք պատմվում են ուսումնասիրված համայնքներում, տեղացիների համար իրենց փոքր համայնքների ներքին պատմություններ են թվում, սակայն երբ այս պատմությունները դրվում են տարածքի, մարզի, հայկական մշակույթի պատումների համապատկերում, դրանք դառնում են խճանկարի այն մասերը, առանց որոնց ամբողջական պատկերը հասկանալի չի լինում:

Հետազոտական կանխավարկածի հիմքում դրված մոտեցումներից մեկն էլ այն է, որ մշակույթի հանդեպ այսպիսի՝ «ավելի լայն» վերաբերմունքը հնարավորություն կտա հաղթահարելու նաև դեռևս խորհրդային տարիներին արմատավորված այն

մոտեցումը, ըստ որի՝ մշակույթը «տնտեսության կրտսեր եղբայրն է» և պահանջում է անընդհատ ներդրումներ:

Համայնքների մշակութային ներկա միջավայրը, լանդշաֆտը և բնակչությունը


Ըստ Արագած ՏԱԽ-ի տեղական տարածքի զարգացման 2022-2026թթ. ռազմավարության և հետազոտության արդյունքների՝ ՏԱԽ-ի բնակավայրերում մշակութային կյանքն ակտիվ չէ, և մշակութային միջավայրերը բազմազան ու կենսունակ չեն: Համայնքներում մշակութային միջավայր ձևավորվում է մշակույթի տներում, գրադարաններում, դպրոցներում և որոշակիորեն՝ նախակրթարաններում:

Մշակույթի տները բացառապես խորհրդային «կուլտուրական շինարարության» ինստիտուտներ էին, որոնք ստեղծվում էին որպես նոր մշակույթի տարածքներ՝ ի հակակշիռ հին աշխարհի ու միջավայրերի, ինչպիսին էր, օրինակ, եկեղեցին, իրականացնում էին վարչական, պրոպագանդիստական և մշակութային ինքնադրսևորման և ինքնագործունեության խրախուսման գործառույթներ:

Խորհրդային Միության փլուզումից հետո այս տարածքները, մնալով որպես համայնքային սեփականություն, ամեն համայնքում ունեցան յուրովի զարգացում: Մի տեղում, ըստ տեղացիների բնորոշման, «սեփականաշնորհումից հետո ամեն ինչ հոշոտվավ» ձևակերպմամբ՝ ավերվեցին և փոշիացան, մեկ այլ տեղում որոշակիորեն պահպանվեցին, երրորդ տեղում էլ վերանորոգվեցին և կենսունակ մնացին:

Լանջիկի՝ 1970 թ. կառուցված և 2010 թ. վերանորոգված մշակույթի տունը ծառայում է որպես համայնքային կենտրոն, որտեղ գործում են համայնքապետարանը (այսօր՝ վարչական ղեկավարի աշխատակազմը), բուժկետը, 7300 գրքային ֆոնդով գրադարանը, գյուղի բնակիչների համար ժամանցի սենյակն ու Հայ կաթողիկե երիտասարդաց միության սենյակը:

Ձիթհանքով գյուղի մշակույթի տունը, որի կառուցումը սկսվել 1938թ. և ավարտվել 1955թ., իր շենքում ընդունել է բնակավայրի վարչական դեկավարի գրասենյակը, գրադարանը, բուժ. մանկաբարձական կետը, մարզադահլիճը, համայնքի բնակչության հանգստի և ազատ ժամանցի սրահը և հանդիսությունների դահլիճը: Ըստ համայնքապետարանի տվյալների՝ «Համայնքի բյուջեի, պետական բյուջեից կատարված հատկացումների և ներգրավված այլ միջոցներով 2010-2013 թթ. վերանորոգվել է մշակույթի տունը՝ վերակազմավորվելով համայնքային կենտրոնի: Անցկացվել է լոկալ ջեռուցման համակարգ, հագեցվել անհրաժեշտ գույքով և հանդերձանքով և մասնակիորեն կառուցապատվել է շինությանը կից հանգստի գոտին»: Հատուկ կահավորված է հանդիսությունների սրահը, որի տարածքում կազմակերպվում են գյուղի բազմամարդ խնջույքները (հարսանիք, հոգեհացի հացկերույթ, բանակ ճանապարհելու և այլ մարդաշատ խնջույքներ), միջոցառումները, ինչը ևս կարևոր է համայնքի կյանքի կազմակերպման, սոցիալական հարաբերությունների պահպանման տեսանկյունից:



Նոր Կյանք համայնքում մշակույթի տունը կարծես ավերված հունական «Պարթենոնը» լինի՝ աղբով լցված, բացարձակ ավերակ, առանց ծածկի: Գյուղի դպրոցահասակ երեխաների հետ քննարկման ընթացքում գյուղի մշակույթի տան հարցը նրանց կողմից բարձրացված առաջնային հարցերից էր՝ որպես պակասող մշակութային կամ հանրային տարածք. «Մշակույթի տունը, ասում են, երկրաշարժից հետո փլվել է, բայց վերանորոգում չի եղել, աղբ է լցված: Մենք գյուղի երիտասարդներով խոսում ենք, երագում ենք՝ մեծանանք, ակումբը վերանորոգենք,

երևի գյուղի բոլոր երեխաների երազանքներից է դա, իմ մաման պատմում է, որ էնտեղ կինո, թատրոն էին նայում, կամ մեծ դահլիճ կար»:



Նոր Կյանքի մշակույթի տան շենքը

Պենգաշենում խորհրդային շրջանում գոյություն է ունեցել երկու մշակույթի ակումբ՝ մեկը արդյունաբերական թաղամասի՝ «поселок»-ի համար, որը ներկայումս զարմանալիորեն սեփականաշնորհված է: Դրսից դիտարկմամբ, տարածքը բավականին ընդարձակ էր, ուներ հարթ, լայն բակ, ընդ որում բակում տեղադրված էր հուշարձան, որը, սակայն, չկարողացանք նկարել, քանի որ մասնավոր սեփականություն էր:

Ուշխորհրդային շրջանում նախագծված մշակույթի տան մյուս տարածքն էլ հիմքերը կառուցելուց հետո այդպես էլ մնացել է անավարտ՝ համալրելով գյուղի «խորհրդային ավերակների» համայնապատկերը:



Այդպես էլ չկառուցված շենքի պատկերը

Մեր հետազոտության մեջ ընդգրկված գյուղերում մշակութային միջավայրերի տարածքներ էին նաև արտադպրոցական տարբեր խմբակները՝ մշակութային ուղղվածությամբ՝ պար, երգ, երաժշտություն, նկարչություն:

Ձիթհանքով, Լանջիկ և Պեմզաշեն գյուղերում գործում են պարի խմբակներ:




Մարալիկի արվեստի դպրոցի պարուսույց Վարդուհի Ղազարյանը արդեն 4 տարի է՝ գյուղերում վարում է պարի դասընթացներ և հիմնել է պարի խմբեր (Ձիթհանքով՝ «Զարթոնք», Գուսանագյուղ՝ «Մուշ», Քարաբերդ՝ «Էրզրում», Պեմզաշեն՝ «Ախթամար, «Կիլիկիա», Մարալիկ՝ «Անի»), որոնք կարողանում են ելույթներ ունենալ և մասնակցել տեղական միջոցառումներին: Պարի խմբերն ունեն քեմական

հագուստ, որի ծախսերը հոգում են ծնողները, ինչպես նաև վճարում են ամսական որոշակի գումար: Այս փաստը ցույց է տալիս մշակութային առաջարկի պահանջարկը

գյուղերում, որտեղ մարդիկ, հատկապես երիտասարդ ծնողները պատրաստակամ են ներդրում ունենալու երեխաների մշակութային կրթության մեջ:

Պեմզաշենում գործում է նաև Արվեստի դպրոց՝ 7-ամյա երաժշտական դպրոցի ծրագրով՝ դաշնամուրի, ժողգործիքների՝ դիոլ, դուդուկ, պարի խմբով:



Նոր Կյանք գյուղում գործում է արվեստի/երաժշտական դպրոց՝ 12 երեխայի համար նախատեսված, որտեղ փաստացի հաճախում է 48 երեխա: Ընդ որում այս շենքը Նոր Կյանք գյուղի ամենահին շենքերից է՝ ավելի քան 100 տարեկան, և գտնվում է վթարային վիճակում, խիստ անբարեկարգ է և խարխիլված:



Լանջիկի մշակույթի տունը կիրառվում է որպես համայնքային կենտրոն, քանի որ այստեղ գործում է Հայաստանի կաթոլիկ եկեղեցու երիտասարդական կենտրոնը, տարբեր խմբակներ, համայնքի տարեց բնակիչների համար խաղասենյակ է կահավորված, մեկ տարի առաջ այստեղ հավաքված և ցուցադրված էին նաև գյուղի ավանդական կենցաղին նվիրված որոշ ցուցանմուշներ, որոնք 2023թ. ապրիլի դրությամբ դեռևս ցուցադրված չէին:





Մշակույթի տներում ներկայումս կազմակերպվող դիպլոմային բնույթի միջոցառումները չեն գոհացնում բնակիչներին, որոնք դեռևս հիշում են խորհրդային շրջանի մասշտաբային և նյութատեխնիկական բազայով ապահովված միջոցառումները. «Երգի, պարի համույթ ունեինք, միջոցառումներ էինք անում, դա շատ ուրիշ էր, շատ տարողունակ էր. . .»:

Ընդհանրական «խեղճությունը և մշակութային ստեղծարար միջավայրի բացակայությունը ևս հանգեցնում է գյուղերում հուսահատության պրակտիկաների ձևավորմանը, դատապարտվածության զգացման տիրապետող լինելուն, ինչպես նաև երիտասարդների՝ գյուղից դուրս աշխատանք և ժամանց գտնելու միտումներին:

Նշված բնակավայրերում մշակութային միջավայրեր են նաև գրադարանները.

- ❖ գյուղերում գործող դպրոցները վերջին տարիներին թարմացվում են նոր հրատարակված գրքերով, սակայն դպրոցական ծրագրին առնչվող: «Դպրոցը ևս ունի գրադարան, համալրվում է, օրինակ Շիրվանգադեի «Քառս»-ի նոր հրատարակությունն են ստանում, բայց նոր, մեզ հետաքրքրող գրքեր չեն ստանում»: (Նոր Կյանք, դպրոցականներ)

- ❖ գրադարաններ, որոնք հիմնվել են խորհրդային շրջանում, համալրվել են գրքային ֆոնդով, որն արդեն տասնամյակների ընթացքում չեն վերաիմաստավորվել և վերաթարմացվել:

Պեմգաշեն բնակավայրի գրադարանը, որը, երկրաշարժից հետո կորցնելով «տունը», տեղակայվել էր վագոն-տնակում, ներկայումս տարածք ունի համայնքային կենտրոնում: Այս գրադարանը բացառիկ է իր գրքային ֆոնդով, ունի 22,000 կտոր գիրք, որոնց մեջ արժեքավոր են պատմության, արվեստին նվիրված բաժինները, նաև անփոխարինելի պահպանված աղբյուր է խորհրդային հանրային քաղաքականության՝ գրականություն հանրային առողջապահության, առողջ սննդի, մեղվապահության, սպորտային կեցվածքի և այլ՝ հանրային հասանելի ու պահանջարկված գիտելիքի մասին, որը, նորովի ներկայացնելով, կբացահայտի նոր հնարավորություններ:

Նոր Կյանք գյուղի գրադարանը գտնվում է «Հայփոստ»-ի մասնաշենքի տարածքում, սակայն գրադարանից օգտվող երիտասարդների կարծիքով այն միջավայր չի ստեղծում, քանի որ անբարեկարգ է.



«Գրադարանի շենքը անբարեկարգ է, գնում ենք՝ գիրքը վերցնում ենք, գալիս, ո՛չ ընթերցելու տեղ ունեն, ո՛չ զուգարան, մենք անցյալ տարի մաքրեցինք, դասավորեցինք, բայց դե ինչ... մենք շատ կարիք ունենք էնպիսի մի տեղի, որ

կարդանք, հավաքվենք, հանդիպումներ անցկացնենք, ոչ թե գյուղապետարանում դա լինի»: (Նոր Կյանք, երիտասարդ աղջիկներ):

Նոր կյանք համայնքում մեր զրուցակից դպրոցականները ակտիվ էին ընթերցանության շուրջ քննարկումներում. *«Մեր դասարանում բոլորս շատ ենք կարդում, հիմնականում Գյումրիից կամ Արթիկից ենք գնում: Առավելապես Ագաթա Քրիստի ենք կարդում, գրքերը առնում կամ փոխանակում ենք, հաճախ գիրք ենք պատվիրում «Ջանգալ»-ից, փոստով գալիս է մեր տուն, մի շաբաթվա մեջ գալիս է: Մեր մեծերն էլ են կարդում, Բաֆֆու «Սամվելը» մամաս գնել է ու կարդում է, իմ պապիկն էլ է կարդում՝ «Վերջին ուսուցիչ»-ը: Ֆիլմը նայել էր, գիրքը դուրն էկել էր, ասեց՝ որտեղից գնեմ. ես Արթիկից գնեցի»:*

Խորհրդային շրջանում ձևավորված մշակութային այս միջավայրերը, հետխորհրդային շրջանում դիտարկվելով որպես ներդրումների ոչ արդյունավետ կամ իմաստալի ոլորտ, շատ թուլացան, ինչով լրջագույն վնաս կրեցին համայնքները՝ զրկվելով մշակութային, ստեղծարար միջավայրերի կենսունակ տարածքներից, ինչն էլ, ըստ տարբեր հետազոտությունների, ուղղակիորեն կապված է աղքատության, արտագաղթի և այլ տնտեսական ցուցանիշների հետ:

Նոր Կյանք, Պեմգաշեն, Լանջիկ և Ջիթհանքով բնակավայրերի մշակութային քարտեզի կարևոր բաղադրիչներից մեկը նյութական մշակույթի լանդշաֆտն է: Այն ունի մի քանի հազարամյակի պատմություն, մշակութային բազմաթիվ շերտեր և ձևավորվել է ավելի վաղ, քան այստեղ հայտնվել է նշված բնակավայրերի հիմնական բնակչությունը²⁷: Այս իրողությունը 4 բնակավայրի կարևոր ***առանձնահատկություններից մեկն է*** և ընդհանուր առմամբ բնորոշ է Շիրակի մարզի բնակավայրերից շատերին:

Արևմտյան Հայաստանի և Պարսկաստանի բնակավայրերից տեղափոխված հարյուրավոր ընտանիքներ, 19-րդ դարում հաստատվելով քրիստոնեության

²⁷ Բոլոր չորս բնակավայրերում ներկայիս բնակչության հիմնական խմբերը սկսել են հաստատվել 19-րդ դարից, մի քանի փուլով: Բնակավայրերից մի քանիսում (ինչպես Նոր Կյանքում, հիշատակվում են բնիկ շորագյալցիների ընտանիքներ, որոնց հետ և հաստատվել են գաղթածները):

«հետքեր» ունեցող գյուղերում, տասնամյակների ընթացքում վերահայացրել ու վերաքրիստոնեացրել են լանդշաֆտը:²⁸ Բնակավայրերում ու դրանցից դուրս լանդշաֆտն անընդհատ հագեցել է նաև նոր սիմվոլներով՝ եկեղեցիներ, մատուռներ, տներ, տնտեսական շինություններ (ջրաղաց, ձիթհան, դարբնոց): Տասնամյակների ընթացքում այս նոր, հատկապես հոգևոր սիմվոլները «խառնվում» էին հներին, փոխլրացնում միմյանց, ավելի ամբողջական ու ընկալելի դարձնում մշակութային լանդշաֆտը:

Հետազոտությունը ցույց տվեց, որ չնայած մեր օրերի փոփոխություններին, առօրյա կյանքը, հատկապես տոնական ու ծիսական միջոցառումները շարունակում են կազմակերպվել նույն տարածքում, նույն սիմվոլների շուրջ, հաճախ նաև նույն բովանդակությամբ: Գրառված լավագույն օրինակներից մեկը Նոր Կյանք գյուղի երիտասարդների շրջանում տարածված սովորույթն է, երբ դպրոցականները կարևոր իրադարձություններից, հատկապես քննություններից առաջ դասարանների խմբերով պարտադիր այցելում են գյուղի տարածքում գտնվող բոլոր մատուռներն ու մոմ վառում: Այս օրինակը ցույց է տալիս, որ հարյուրամյակների ընթացքում ձևավորված մշակութային լանդշաֆտը, իր բավականին հագեցած սիմվոլիկայով, դարձել է «պարտադրող» իրականություն ու ծիսական նշանակության գործողությունները կազմակերպվում են դրա շուրջ: Այս օրինակը վկայում է նաև, թե որքան կարևոր ու մինչ օրս չուսումնասիրված ու չգնահատված ներուժ ունի մշակութային լանդշաֆտը հատկապես համայնքային համախմբման ու համագործակցության տարբեր գործընթացներում:

²⁸ 19-րդ դարի առաջին երեսնամյակի գաղթականները, ինչպես գաղթականների բոլոր խմբերը, նոր բնակավայրի ընտրության կայուն սկզբունքներ ունեին. ջրի և բնակավայրի շրջակայքում բերրի հողերի առկայություն, հարմար պաշտպանական դիրք: Կարևոր սկզբունքներից էր հատկապես կա՛մ բուն տարածքում, կա՛մ շրջակայքում քրիստոնեական սիմվոլների առկայությունը՝ ավերակ կամ կիսավեր եկեղեցիներ, մատուռներ, խաչքարեր: Դրանք ավելի էին հեշտացնում նոր տեղում հարմարվելը, տարածքը մշակութային տեսանկյունից «սեփական» դարձնելը: Հենց այս սկզբունքով են հիմնվել 19-րդ դարի սկզբի հարյուրավոր գյուղերը Ախալքալակում, Ախալցխայում, Շիրակում, Վայոց ձորում, Գեղարքունիքում, որտեղ հաստատվում էին արևմտահայ և Պարսկաստանից տեղափոխված գաղթականների խմբերը:

Բնակավայրերի մշակութային լանդշաֆտի քարտեզագրումը բարդ գործընթաց է: Այն պահանջում է բազմամասնագիտական մոտեցում, ուրբանիստների, պատմաբանների, ճարտարապետների, ազգագրագետների, տնտեսագետների, այլ մասնագետների ներգրավվածություն:

Մշակութային լանդշաֆտի քարտեզագրման ազգագրական սկզբունք-մոտեցումը թույլ է տալիս որոշակիորեն վերացարկվել տեխնիկական, տեխնոլոգիական ու այլ սկզբունքներից և լանդշաֆտը դիտարկել որպես սիմվոլիկ տարածություն, միջավայր, որտեղ սիմվոլներից յուրաքանչյուրը (տուն, տնամերձ, եկեղեցի, դպրոց, աշխարհիկ տարբեր շինություններ) ունի իր գործառույթը, իր կարևորությունն ընդհանուր լանդշաֆտում: Ազգագրական մոտեցումը, այսպիսով, *ինչպես-ից* բացի, *ինչու* հարցի պատասխանների որոնում է, և լանդշաֆտը դիտարկում է ոչ միայն որպես առանձին սիմվոլներով հագեցած տարածություն, այլև որպես այդ սիմվոլների փոխադարձ կապերի ու ազդեցությունների, ինչպես նաև սիմվոլների ու մարդկանց բազմամակարդակ հարաբերությունների համակարգ:

Հետազոտությունը հնարավորություն տվեց ուսումնասիրված բնակավայրերի մշակութային լանդշաֆտը և՛ ժամանակագրորեն, և՛ տարածապես բաժանելու մի քանի շերտի:

Ժամանակագրական տեսանկյունից առաջին և ամենաերկար փուլը մինչև **19-րդ դար ձգվող շրջանն է**: Հենց այս ընթացքում են ստեղծվել նախաքրիստոնեական բազմաթիվ հուշարձանները, որոնցից մի քանիսը բավականին լավ պեղված են, իսկ մի քանիսի մասին պահպանվել են ուղղակի վկայություններ:

Երկրորդ փուլը ներառում է 19-րդ դարի առաջին երեսնամյակից մինչև խորհրդային կարգերի հաստատումը ընկած շրջանը: Այս շրջանում Արևմտյան Հայաստանից ներգաղթյալները հիմնում էին նոր բնակավայրեր, ծանոթանում գյուղի տարածքին, հուշարձաններին, դրանց հանդեպ վերաբերմունք ձևավորում: Այս փուլը կարելի է դիտարկել որպես **տարածքի վերահայացման և վերաքրիստոնեացման փուլ**, քանի որ լանդշաֆտը համալրվում է քրիստոնեական և աշխարհիկ նոր սիմվոլներով.

եկեղեցիներ, մատուռներ, սրբատեղիներ, տներ, տնտեսական շինություններ, այլ կառույցներ:

Երրորդ փուլը խորհրդային է: Այն ամենաբարդ ու հակասական փուլերից մեկն է, որն իր հերթին բաժանվում է տարբեր ենթափուլերի. մինչև Հայրենական պատերազմ, երբ մշակութային տարածքի փոփոխությունները դեռևս հեղափոխական չէին, ու նախկին մշակութային լանդշաֆտը հիմնականում պահպանվում էր (չնայած եկեղեցիների մեծ մասը չէր գործում, իսկ կառույցները վերածվում էին պահեստների), հետպատերազմյան տասնամյակներ, երբ փոփոխությունները դառնում էին ավելի ու ավելի նկատելի:

Այս փուլի հիմնական առանձնահատկություններից մեկը քրիստոնեական լանդշաֆտի, հատկապես եկեղեցիների գերակայության աստիճանական սահմանափակումն էր ու աշխարհիկ լանդշաֆտի տարբեր սիմվոլներով հագեցումը: Նոր Կյանքում, Լանջիկում, Պեմգաշենում քաղաքաշինական լուծումները հանգեցնում էին նրան, որ եկեղեցին ոչ միայն խորհրդանշորեն, այլև իրականում մնում էր ստվերում, շրջապատվում աշխարհիկ շենք-շինություններով ու դառնում աննկատ:



Պեմգաշենի եկեղեցին՝ շուրջկալված խորհրդային շինություններով



Նոր Կյանքի դպրոցը՝ որպես բաժանարար եկեղեցու և մշակութային ակունքի միջև

Մյուս կողմից, ըստ հետազոտության արդյունքների, այս տարիներին ակտիվանում է «ծպտյալ կամ ժողովրդական» քրիստոնեությունը: Գյուղերի քրիստոնեական մշակութային լանդշաֆտի կարևոր կետեր են դառնում բազմաթիվ մատուռները՝ կանգուն կամ կիսավեր, որոնք եկեղեցիների փոխարեն ստանձնում են հոգևոր ոլորտի սպասարկման գործառույթներ:

Այս մատուռները, որոնցից շատերն այսօր էլ կարևոր կետեր են գյուղերի մշակութային քարտեզում, առաջացել են տարբեր կերպ ու հետաքրքիր փոխակերպումների են ենթարկվել շուրջ երկու հարյուր տարվա ընթացքում:

Չորս բնակավայրում էլ կան մատուռ-սրբատեղիներ, որ եղել են հին տների տարածքում: Սկզբնապես հին տան որևէ անկյունում դրված է եղել Աստվածաշունչ, Ավետարան, Նարեկ կամ գաղթի ընթացքում բերած որևէ սուրբ գիրք, որի առաջ ընտանիքի անդամներն ու համագյուղացիները մոմ են վառել ու աղոթել: Գյուղերի ակտիվ զարգացման ու քաղաքաշինական փոփոխությունների պայմաններում այդ սրբերից շատերը մնում էին հին տանը, որոնց շարունակում էին այցելել

գյուղացիները.²⁹ Հետագայում արդեն այդ սրբերից մի քանիսի վրա շինություններ կառուցվեցին բոլոր գյուղերում:

Սա հավատի կարևոր ու հետաքրքիր փոխակերպում է, որ տեղի ունենցավ խորհրդային տարիներին: Մի կողմից՝ խորհրդային իշխանությունը փակում էր եկեղեցիները, քողարկում դրանք նոր կյանքի խորհրդանիշ համարվող շենք-շինություններով, մյուս կողմից՝ գյուղացին ստեղծում կամ վերակենդանացնում էր քրիստոնեական հուշարձանները, իր համար կարևոր հոգևորը՝ աղոթք, մոմավառություն, տնական դարձնելու համար: Այս միտումը շարունակվում է նաև այսօր, նոր մատուռներ են կառուցվում սրբերի՝ երազին այցելության գալու ու այլ պատճառներով:

Ուշագրավ է, որ չնայած եկեղեցիների փակվելուն, շարունակում էին կատարվել նաև մկրտություններ, նույնիսկ կոմունիստներն էին երեխաներին գաղտնի մկրտում Արթիկում, Լենինականում կամ հոգևորականին տուն հրավիրելով: ***«Էն ժամանակ մարդիկ քույլի (բոլորը) էլ խաչ են պաշտե: Ես էլ եմ կնքված, էրեխա վախտս կնքել են, էն ժամանակ Լենինական կկնքեին: Կոմունիստներից շատերն էլ էին կնքված: Ես էլ եմ իմ էրեխեքիս կնքել, բերել եմ, տերտերը տունը կնքել է: Քավորն էլ մեր գյուղացի էր, հնից քավոր էր»:* Անհատական հարցազրույց. Նոր Կյանք**

Այսպես. մի կողմից՝ խորհրդային իշխանությունը ձևավորում է «խորհրդային քաղաքացուն», մյուս կողմից՝ այդ մարդը իր հետ «վերցնում է» անցյալի այն մշակութային շերտը, որ չի խանգարում խորհրդային լինելուն ու միաժամանակ օգնում է ապրելու: Ի վերջո, որպես պատմություն, այս ժողովրդական կրոնական վայրերը՝ համակարգի մեջ համակարգին դիմադրության կետերն էին, որը ցույց էր տալիս որ համընդհանուր աթեիզմի՝ անաստվածության պայմաններում քրիստոնեական ինքնությունից հրաժարումը այդպես էլ տեղի չունեցավ:

²⁹ Ժողովրդական հավատալիքների համաձայն՝ սուրբը պետք է մնա այնտեղ, որտեղ եղել է, այլապես կարող է «նեղանալ», «պատժել»:



Չորրորդ կամ վերջին փուլը, որ սկսվեց 1991թ. Հայաստանի Հանրապետության անկախության հռչակմամբ, մենք դիտարկում ենք որպես մշակութային ինքնության փնտրտուքի ու վերաբանաձևումների փուլ:

Այս փուլում մշակութային լանդշաֆտը էական ֆիզիկական փոփոխությունների չի ենթարկվել, նոր շենքերի, շինությունների թիվը բավականին փոքր է: Դրանք հիմնականում անհատական բնակելի տներ են, որ կառուցվել են արտագնա աշխատանքից ստացված եկամուտներով: Մշակութային նյութական լանդշաֆտը կա՛մ ավերվել է, կա՛մ անտեսվել, կա՛մ համալրվել որոշ նոր սիմվոլներով՝ անկախության ու հայ ազատագրական պայքարով պայմանավորված:

Հետազոտությունը ցույց տվեց, որ այս փուլում գյուղական, հատկապես աշխարհիկ լանդշաֆտը դարձել է ավելի աղքատիկ, մաշված: Կառուցվում են հիմնականում նոր բնակելի տներ, կամ ընդարձակվում են եղածները, սակայն, ի տարբերություն խորհրդային տասնամյակների, լանդշաֆտի համալրումը կամայական է, անկազմակերպ: Գյուղերում գրեթե չեն առաջանում նոր թաղամասեր (վերջին այդպիսի թաղամասերը «անկեսուր մայլենք էին», որ կային բոլոր բնակավայրերում): Մաշվում ու ավելի աղքատիկ են դառնում հատկապես լանդշաֆտի մշակութային ու արտադրական բաղադրիչները:

Լանդշաֆտի աղքատացման ակնառու դրսևորումները տեսանելի են հատկապես Պեմզաշենում, որը նախկինում ուներ հզոր արդյունաբերական ձեռնարկություններ, երկաթուղային կայարան, իսկ այսօր մնացել են ընդամենը կիսավեր շենք-շինությունները, որոնց մեծ մասը սեփականաշնորհվել է և որևէ կոնկրետ նպատակի չի ծառայում:

Մշակութային լանդշաֆտի փոփոխությունները վկայում էին նաև համայնական կյանքի փոխակերպումների մասին, երբ արդեն աստիճանաբար թուլանում էին ազգակցական կապերը, փոխադարձ պարտավորություններին հետևելու հանրային պարտադրանքը, փոխօգնության պրակտիկաները: Փոխօգնության կամ համագործակցության ավանդական միջավայրերը կապված էին կա՛մ տնտեսական-

առօրյա կենցաղային աշխատանքների՝ վարուցանք, բերքահավաք, կաթի բաշխման ժողովրդական համակարգի՝ խաբուխագի սովորույթը, լավաշ թխելու, արիշտայի, տհալի (ղավուրմա) պատրաստման ընթացքում հավաքվելու, օգնելու, կամ կյանքի անցումային, շրջադարձային պահերին՝ հարսանիքի, հուղարկավորության ծեսերի, տան շինարարության, որևէ դժբախտության կամ անակնկալ ուրախության խնջույքի ժամանակ օգնության սովորությունների հետ: Ներկայումս այս սովորույթները զգալիորեն թուլացել են, քանի որ թուլացել են այս սովորույթներին առնչվող գործողությունների ֆունկցիոնալ նշանակությունը: Համայնքի տոների, հասարակական միջոցառումների նշման նվազեցումը և դրանք ռեստորաններում կամ սրահներում նշելու երևույթը ավելի են նպաստել այս համագործակցության ավանդական սովորույթների պահպանմանը: Ինչպես նշեց տարիքով պեմզաշենցիներից մեկը, ներկայումս հավաքվում են բանակի քեֆերին և թաղմանը: Հարևանի, ազգականի վշտին ապրումակցելու հանրային ազդանշանները ևս թուլացել են. «Առաջ որ հարևանի տունը մահ կար, մինչև քառասունք տեղեվիզոր չէինք միացնում, կամ մի տարի մեր հարևանը դեկտեմբերի 31-ին մահացավ, սաղ գեղը սեղանները հավքեց». հիշողություններով տարեցները քննարկում են համայնքի սոցիալական տեքստիլի փոփոխությունների և աստիճանական մեկուսացման խնդիրները:

Անկախության տարիներին լանդշաֆտի հաջորդ փոփոխություններից մեկը կապվում է մի կողմից՝ տրավմայի, մյուս կողմից՝ հիշողության ակտիվացման հետ:

Ուսումնասիրված համայնքներում Հայրենական պատերազմում զոհվածների հուշահամալիրների տարածքում/դրանց անմիջական հարևանությամբ կամ գյուղում կենտրոնական դիրք ունեցող այգիներում, պուրակներում ավելացել են խաչքարեր ու հուշարձաններ՝ Ցեղասպանության զոհերի հիշատակին, 1988թ. դեկտեմբերյան երկրաշարժի զոհերի հիշատակին: Արցախյան առաջին պատերազմը, 2016թ. ապրիլյան և 2020թ. 44-օրյա պատերազմները ավելի խտացրին նշված համայնքների «ցավի ու հիշողության» լանդշաֆտը: Առաջին արցախյան պատերազմից հետո բոլոր

բնակավայրերում կանգնեցվել են զոհված համազյուղացիների հիշատակի խաչքարեր: 1916թ. քառօրյա պատերազմից հետո դրանք կանգնեցվել են, եթե գյուղը զոհ է ունեցել: Ամենաշատ զոհերը գյուղերն ունեցել են 44-օրյա պատերազմում, և հիշատակի առանձին կետերը արդեն վերածվել են ամբողջական համալիրների:



Արցախյան պատերազմի զոհերի հուշահամալիր Պեմգաշենում



Արցախյան պատերազմներում զոհվածների հուշահամալիր Ձիթհանքովում

Տրավմայի ու հիշողության հուշարձանացման առումով առանձնանում է Ձիթհանքովը:

Այստեղ 1918թ. մայիսին գյուղի մարագներում թուրքերի կողմից սպանվել ու այրվել են գյուղի ու շրջակա բնակավայրերի կանայք, ծերեր ու երեխաներ: Այս դաժան իրադարձություններին զոհ գնացածների հիշատակին կոտորածի վայրում խաչքար է կանգնեցվել, նախատեսվում է նաև հուշահամալիրի ստեղծում: Ընդ որում,

իրադարձությունը՝ որպես տեղական պատմության առանցքային դրվագ, հաճախ էր պատմվում և հիշվում տեղացիների կողմից:



Այսպիսով, ժամանակագրական տեսանկյունից ուսումնասիրված չորս համայնքի մշակութային լանդշաֆտի ձևավորման պատմությունն ունի բազմաթիվ ընդհանրություններ: Որոշ տարբերություններ դիտարկվում են Լանջիկում, որտեղ բնակվում են կաթոլիկ հայեր, և Ձիթհանքովում, որտեղ բնակվում են կաթոլիկ ու առաքելական հայեր:

Տարածական տեսանկյունից նշված համայնքների մշակութային քարտեզը կարելի է պատկերացնել փոքրից դեպի մեծը ավելացող շրջանների տեսքով:

Ա. Բուն բնակավայրը ամենափոքր շրջանն է՝ հին ու նոր թաղամասեր, եկեղեցի/ներ, սրբատեղիներ ու մատուռներ, տնտեսական ու օժանդակ շինություններ, գերեզմաններ, բնակելի տներ, այլ շենք-շինություններ:

Բ. Գյուղի շրջակայքը հաջորդ ավելի մեծ շրջանակն է ու ներառում է գյուղի շրջապատը՝ մի քանի տասնյակից մինչև մի քանի կիլոմետր հեռավորությամբ կամ գյուղի սահմանները. արտեր, արոտներ, հանդամասեր, գյուղից դուրս եկեղեցիներ ու մատուռներ, հին գյուղատեղիներ: Այս շրջանակն անկանոն է, մի դեպքում այն կարող է գտնվել գյուղի անմիջական հարևանությամբ ու նույնիսկ աննկատ լինել հատկապես անձանոթի համար. Նոր Կյանքի ու Վարդաքարի միջև անցումը, օրինակ,

այդպիսին է, մեկ այլ դեպքում՝ ձգվել կիլոմետրեր մինչև Ձիթհանքովի ու Լանջիկի, Ձիթհանքովի ու Մաստարայի, Ձիթհանքովի ու Զարինջայի սահմանը: Լանջիկի դեպքում նման որոշակի սահման-շրջանակ է Երևան-Գյումրի մայրուղին, որը ասես նեղացնում ու սահմանափակում է գյուղը:

Գյուղերի շրջակայքի սիմվոլները, ըստ հետազոտության արդյունքների, ունեն նաև տարբեր բովանդակային ու գործառական ծանրաբեռնվածություն: Արտերը, արոտներն ու հողատարածքները կիրառական կարևորություն ունեն: Հուշարձանները (եկեղեցիներ, մատուռներ, խաչքարեր, այլ սիմվոլներ) գյուղացիների կողմից դիտարկվում են ավելի շատ զգայական հարթությունում:

Գ. Խորհրդային տարիներին որպես գյուղի մշակութային լանդշաֆտի մի մաս էին հանդես գալիս նաև սարատեղերը՝ ամառային արոտավայրերը՝ «յայլաները», որտեղ գարնանից մինչև աշուն տեղափոխվում էին տնտեսության անասունները, և բնակվում էին խաշնարածները: Այսօր դրանք այլևս չեն օգտագործվում կամ գրեթե չեն օգտագործվում, սակայն կարևոր տեղ են գրավում բնակիչների կուլեկտիվ հիշողությունում, քանի որ սարերի հետ են կապված բազմաթիվ ընտանիքների պատմություններ, որոնցում յայլաները դեռևս շարունակում են ընկալվել գյուղի սոցիալ-մշակութային լանդշաֆտում:

Ըստ բերված տիպաբանության, դիտարկենք 4 բնակավայրի մշակութային քարտեզի հիմնական սիմվոլները:

Լանջիկ գյուղի մշակութային լանդշաֆտ

Նախկինում գյուղը հայտնի է եղել Մուսլուխի, Մուսլուղլու, Մուսուղլի և այլ անուններով: Լանջիկ վերանվանվել է 1947թ. փետրվարին:³⁰

Լանջիկն ուսումնասիրված բնակավայրերից միակն է, որ այսօր գրեթե ամբողջությամբ հայ կաթոլիկներով է բնակեցված (արևմտահայ գաղթականների մի

³⁰ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Եր., 1986, հ. 2, ցուցակ 1, էջ 561:

քանի ընտանիք գյուղում հաստատվել է 20-րդ դարի սկզբին: Մինչ օրս այս ընտանիքները հենց այսպես էլ հայտնի են՝ «գաղթականներ»):

Գերազանցապես կաթոլիկ հայերով բնակեցված լինելը, ինչպես ցույց տվեց հետազոտությունը, որոշ տարբերություններ է ձևավորել գյուղի մշակույթում, հատկապես տոնածիսական կյանքում:

Ըստ տարբեր աղբյուրների՝ գյուղը հիմնվել է 19-րդ դարի սկզբին: «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ը գյուղի մասին գրում է. «1873թ. ուներ 411, 1897-ին՝ 664, 1926-ին՝ 663, 1939-ին՝ 719, 1959-ին՝ 699, 1970-ին՝ 837, 1979-ին՝ 777 բնակիչ, որոնց մի մասի նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի, Բասենի, Մուշի շրջանների գյուղերից 1829-30թթ.»: ³¹ Պիոն Հակոբյանը բերում է հետևյալ տեղեկությունները. *«Մուսլուղլի, գիւղական եկեղեցին՝ Ս. Աստուածածին, կառուցուած է 1857-ին, իսկ կէս դար անց՝ վերակառուցուած: Գիւղն ինքը հիմնադրուել է անցյալ (19-րդ) դարի 40-ական թթ. վերջերը, Ալաշկերտից, մասամբ էլ Մուշից եւ Բասենից գաղթած վերաբնակիչների ջանքերով»:* ³² Հեղինակը հետաքրքիր վկայություն է բերում Ձիթհանքովից ոչ այնքան հեռու Դըռլիս բնակավայրի մասին. *«Գիւղատեղին 1831-42թթ. դեռնս աւերակ էր, հետեւաբար հիմնադրուել է դրանցից յետոյ: Բնակիչները կապուած էին մուսլուղլեցիների հետ եւ գաղթել էին նոյն վայրերից ու ժամանակներում: 1873-ին գիւղում ապրում էին 317 հայ կաթոլիկներ: Եկեղեցին (Ս. Ստեփանոս) կառուցուած էր 1866-ին»:* ³³ Գյուղում էլ այս շարժերի մասին աղոտ հիշողություններ են պահպանվել. *«Գյուղացիների հիմնական մասը եկել է Մոլլա Սուլեյման գյուղից, Բգդիից անցել են Մեյմանդար, հետո շոգ է եղել, մոծակ, դուրները չի եկել, շարժվել են Սարչապետ: Որոշ մասը մնացել է, որոշ մասը եկել ուզեցել է անցնի Արևմտյան Հայաստան: Առաջ սարից են կողմ առու է եղել, ջրաղացներ են եղել, օդն էլ լավ է եղել, ասել են կարող ենք մնալ, ապրել»:*

³¹ Նույն տեղում:

³² Պ. Յակոբեան, Հայ կաթոլիկությունը պատմա-քննական լոյսի տակ//Հայոց հյուսիսային դարպասները. Ջավախք, Լոռի (հոգվածների ժողովածու), Եր., 2011, էջ 451:

³³ Պ. Յակոբեան, նշվ աշխ., էջ 451:

Ա. Հայրապետյանը Արևելյան Շիրակին նվիրված իր ուսումնասիրությունում ներկայացնում է այս հիշողությունների վիճակագրական «հիմնավորումները». *«Եթե Փամբակի տեղամասի համար XIX դ. 40-ական թթ. վերջը նշանավորվեց հայ տարրի արտագաղթով ու այլազգիների ներգաղթով, ապա Շորագյալի տեղամասում, հակառակը, այլազգիների և հատկապես մահմեդականների արտագաղթով ու հայերի ներգաղթով: Դրա շնորհիվ ընդամենը երեք տարվա ընթացքում՝ մինչև 1850թ. գավառակում մեկը մյուսի հետևից հիմնվեցին 12 գյուղեր (Բազարխանա (հետագայի Ջիթհանքով-հեղ.)... Մասուղլի, գյուղերի թիվը 76-ից հասցնելով 88-ի: Ընդ որում, ինչպես վերևում նշեցինք, այդ 12 նորաստեղծ գյուղերից յոթը հիմնվեց փամբակցիների կողմից, մեկը՝ Մասուղլին, 1849թ. Սարչապետից Շորագյալ գաղթած հայերի և եզդիների կողմից ու դարձավ խառը բնակչությամբ (եզդիների գերակշռությամբ) միակ գյուղն ամբողջ տեղամասում: 1852թ. կամերալ ցուցակագրման տվյալներով՝ գյուղում ապրող 45 ընտանիքներից կամ 250 մարդուց եզդիներ էին 28 ընտանիքը կամ 139 մարդը (71-ը՝ արական, 68-ը՝ իգական սեռի)»³⁴*

Սա գյուղի պատմությանն ու մշակույթին վերաբերող շատ հետաքրքիր վկայություն է, պահպանվել է նաև զրույցներում ու հիշողություններում և գյուղի մշակութային քարտեզին յուրօրինակություն է հաղորդում: Ա. Ղանալանյանի՝ գյուղի անվանման ստորև բերվող բացատրությունը նույնպես այս համատեքստում է. *«Մսուրլի-Մուսլուղլի անատունները ջրելու համար այստեղ շատ մսուրներ են եղել: Քրդերը անվա բրդով փակել են աղբյուրի ակը, որպեսզի ջուրը ցամաքի: Երբ հայերը եկել են այստեղ, բոլոր մսուրները արդեն չորացած են եղել: Մսուրների անունով գյուղի անունը դրել են Մսուրլի (մսուրներով հարուստ), որը հետո դարձել է Մուսլուղլի»³⁵*

Հետագա տասնամյակներում ևս գյուղի բնակչությունը շարունակում է մնալ խառը: Այսպես, 1852թ. հայերի թիվը հետևյալն է՝ 17 ընտանիք, 61 տղամարդ, 51 կին, ընդամենը՝ 111 մարդ: Դավանանքը նշված է հայ առաքելական, ինչը, սակայն,

³⁴ Ա. Հայրապետյան, Արևելյան Շիրակը, էջ 162:

³⁵ Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Եր., 1969, էջ 185-186:

կարծում ենք, վրիպակ է: Եզդիները, ըստ ցուցակի, 28 ընտանիք են, 71 տղամարդ, 68 կին, ընդամենը՝ 139 մարդ, իսկ դավանանքը տոհմում նշված է կռապաշտ:³⁶ Սրանից ընդամենը երեք տարի առաջ՝ 1849թ. վերաբերող այլ տվյալներում բերվում է բնակչության նույն թիվը, դավանանքին վերաբերող տողը դարձյալ նույնությամբ կրկնվում է այն տարբերությամբ, որ հստակ նշված է նաև որտեղից եկած լինելը՝ **Սարչապետ: (Լոռու մարզի Տաշիր համայնքի գյուղերից՝ հիմնված Արևմտյան Հայաստանից գաղթած կաթոլիկ հայերի կողմից)**³⁷

Հետագա տասնամյակներում ևս բնակչությունը էական փոփոխությունների չի ենթարկվում: Շորագյալի տեղամասի 1860թ. կամերալ ցուցակագրում գյուղի բնակչությունը 266 մարդ է, 24 ընտանիք, 140 տղամարդ, 126 կին: Դարձյալ հիշվում են որպես հայ առաքելականներ, ինչը, նախորդ դեպքերի նման, մեր կարծիքով, վրիպակի արդյունք է: Այս ցուցակում չկան եզդիները, ուստի կարելի է ենթադրել, որ նրանք արդեն հեռացել են գյուղից:

1850-60-ական թթ. շարունակվում էր գաղթը Թուրքիայի տարբեր նահանգներից դեպի Ալեքսանդրապոլի գավառներ: 1855թ., օրինակ, հայ կաթոլիկների 2 ընտանիք, 10 տղամարդ, 7 կին, ընդամենը՝ 17 մարդ, հաստատվել է Մուսլուղլիում:³⁸ Գործընթացը շարունակվել է հետագա երկու տասնամյակում նույնպես: 1871թ. հայ կաթոլիկների ևս մեկ ընտանիք է հաստատվել գյուղում (5 տղամարդ, 3 կին, ընդամենը 8 մարդ):³⁹ 1867թ. մեկ ընտանիք գյուղ է տեղափոխվել Լոռու տեղամասից (6 տղամարդ, 4 կին, ընդամենը 10 մարդ):⁴⁰

Վիճակագրական տեղեկությունները ցույց են տալիս, որ բնակչության տեղաշարժերով հանդերձ, 1860-70-ական թթ. իրավիճակը կայունանում էր: Գյուղում 1865թ. բնակվում էր 30, իսկ 1875թ. 33 ընտանիք, 411 մարդ, հայ կաթոլիկներ:⁴¹ 1886թ.

³⁶ Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XX դարասկիզբ), (փաստաթղթերի և նյութերի ժողովածու՝ աշխատասիրությամբ Ա. Հայրապետյանի), Եր., 2011, էջ 49-50:

³⁷ Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XX դարասկիզբ), էջ 55:

³⁸ Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XX դարասկիզբ), էջ 81:

³⁹ Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XX դարասկիզբ), էջ 123:

⁴⁰ Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XX դարասկիզբ), էջ 127:

⁴¹ Նույն տեղում, էջ 132:

գյուղի բնակչությունը արդեն կազմում էր 576 մարդ, 64 ընտանիք, 297 տղամարդ, 279 կին:⁴²

Բնակչության թվի աճը պայմանավորված է բնական աճի ցուցանիշների աճով, իսկ ընտանիքների թվի աճի հիմնական պատճառներից է այն, որ խոշոր ընտանիքները սկսել էին բաժանվել ու հաշվառվել որպես առանձին ծուխ, որպես կանոն՝ համայնքի համաձայնությամբ:

1906թ. գյուղի բնակչությունն արդեն բավականին աճել է և կազմում է 706 մարդ (110 ընտանիք, 368 տղամարդ, 338 կին):⁴³

Գաղթականները, որոնցից մի քանի ընտանիք բնակվում է գյուղում, հաստատվել են հիմնականում 1915թ., չնայած որ ինչպես ավելի վաղ հաստատվածների դեպքում, նրանցից շատերը տեղից տեղ են անցել մինչև վերջնական հանգրվան գտնելը: 1915թ. իրականացված մեկօրյա հաշվառման համաձայն՝ գյուղում հաստատվել է արևմտահայ գաղթականների 7 ընտանիք (26 տղամարդ, 39 կին, ընդամենը՝ 65 մարդ):⁴⁴ 1915թ. հոկտեմբերին արևմտահայ գաղթականների թիվն աճել էր ողջ Շիրակում, այդ թվում՝ Լանջիկում: Տարեվերջին գյուղում հաստատվել էր արդեն 162 գաղթական (45 տղամարդ, 47 կին, 70 երեխա):⁴⁵

Ընդհանուր գծերով սա է Լանջիկի բնակչության ձևավորման պատմությունը 19-րդ դարում-20 -րդ դարասկզբին:

Խորհրդային տարիներին ևս գյուղի բնակչությունը շարունակել է աճել, չնայած 1960-70-ական թթ.-ից գյուղի ու գյուղատնտեսության զարգացման ընդհանուր բացասական միտումներով թելադրված, սկսվել է երիտասարդության արտահոսք,

⁴² Նույն տեղում, էջ 143:

⁴³ Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XX դարասկիզբ), էջ 216:

⁴⁴ Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XX դարասկիզբ), էջ 241: Գաղթական ընտանիքներից մեկի ժառանգը այսպես է ներկայացնում իրենց ընտանիքի պատմությունը. «Մեզի մինչ օրս անվանում են գաղթական կամ *«կարմրեցի տակով անցած մարդիկ»*: 1915թ. հորական ու մորական կողմն իրար հետ փախել են: Փնացել են Հոկտեմբերյանի տարածք, պապս գնացել է Ադիաման գյուղ, ընտեղ մնացել են: Մամասս միշտ ասում էր տնաշեն պապդ էլ տեղ չգտավ, էգավ էս *«քարոքամբախ Լանջիկը»*: Ինչի՞ համար: Ըստեղ պանիրը, մենք լոռ կսենք, չի փտի: Ջանդամն էղներ էդ լոռը: Ավելի լավ էր մնայինք Արմավիրի տարածքում: Երևի Ադիամանում էլ լոռ են սարքել»:

⁴⁵ Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XX դարասկիզբ), էջ 243:

Ժամանակի ընթացքում աճել է նաև արտագնա աշխատանքի մեկնողների թիվը: Գյուղում մինչ օրս բողոքում են ոռոգման ջրի բարդություններից: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 20-րդ դարի սկզբին նույնպես ոռոգումը խնդիր է եղել: 1906թ. գյուղում տնամերձները կազմել են 16.35 դեյաատին, անջրդի վարելահողերը՝ 818.19 դես, արոտավայրերը՝ 289.64 դես, ընդամենը հողատարածքները՝ 1124.18 դես: Գյուղն ունեցել է 872 գլուխ խոշոր և 252 գլուխ մանր եղջերավոր անասուն:⁴⁶

Գյուղի մշակութային լանդշաֆտի հուշարձաններից մի քանիսը ներառված են հուշարձանների ցանկում:

ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատվել են գյուղի տարածքում ու շրջակայքում գտնվող հետևյալ հուշարձանները.⁴⁷

Լանջիկ գյուղ

ԱՄՐՈՑ	Ք.ա. 2-1 հազ.	առե մասուն
Բնակատեղի	Ք.ա. 2-1 հազ.	ամրոցի մոտ
Ղամբարանաղաշտ	Ք.ա. 2-1 հազ.	ամրոցի շրջակայքում
ԱՄՐՈՑ	Ք.ա. 1 հազ.	1.5 կմ հվ-առե
ԲՆԱԿԱՏԵՂԻ	Ք.ա. 3 հազ.	գյուղի մոտ
Ղամբարանաղաշտ	Ք.ա. 3 հազ.	բնակատեղիի մոտ
ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	10-20 դդ.	հս-առե մասուն
ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	13-17 դդ.	հս-ամ եզրին, բլրի վրա
Տապանաքար	1671 թ.	գերեզմանոցում
ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	16-20 դդ.	հս եզրին
ԳՅՈՒԴԱՏԵՂԻ	6-10 դդ.	1.5 կմ հվ-առե
Գերեզմանոց	6-10 դդ.	գյուղատեղիում
ԳՅՈՒԴԱՏԵՂԻ «ՓԱՐԱՔԱՐ»	15-20 դդ.	1 կմ հվ
ԵԿԵՂԵՑԻ	1908 թ.	գյուղի մեջ
ԶԻԹՀԱՆ	19 դ.	հս մասուն
ԶԻԹՀԱՆ	19 դ.	հս մասուն
ՄԱՏՈՒՌ «ԿԵՆԱՑ ԽԱԶ»	19 դ.	հվ-առե կողմում

Գյուղի տարածքի ու շրջակայքի հուշարձաններին համառոտ անդրադարձ կա «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի Շիրակին վերաբերող հատորում. *«Գյուղի վաղ հնագիտական հուշարձաններից հատկանշելի են մ.թ.ա. II-I հազարամյակների ամրոցների, բնակատեղիների, զամբարանաղաշտերի մնացորդները: Միջնադարյան հուշարձաններից են գյուղից 1կմ հարավ գտնվող «Փարաքար» գյուղատեղն ու տարբեր դարերին հարազատ գերեզմանոցները: Գյուղի*

⁴⁶ Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XX դարասկիզբ), էջ 227:

⁴⁷ ՀՀ Կառավարության 2004թ. սեպտեմբերի 9-ի թիվ 1270-Ն որոշումը ՀՀ Շիրակի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին// arlis.am/DocumentView.aspx?DocID=105447:

մեջ է 1908թ. կառուցված (հրականում վերակառուցված) Ս. Աստվածածին բազիլիկ եկեղեցին: Այստեղ է գտնվում նաև XIX դ. «Կենաց խաչ» մատուռը, որի շուրջ պահպանվել են նաև գյուղատեղիի ավերակներ ու գերեզմաններ: Նորակառույց «Զարիաթ» սրբատեղում կա մի խոյատապան, որի դիմաց նաև հարթ տապանաքար. երկուսն էլ արձանագիր են, սակայն, անկապակից: Արձանագրություններն արված են անվարժ գրչի ձեռքով, բացի այդ, քարի մակերեսը խիստ մաշվել ու մասամբ ջարդվել է, ինչի հետևանքով գիրն անընթեռնելի է դարձել: Երկու արձանագրությունն էլ հավանաբար արված են XVI-XVII դդ. ».⁴⁸

Գյուղի տարածքի մշակութային լանդշաֆտն ավելի բազմաշերտ է: Մեծահասակների պատմելով, ինչպես նաև հին տների մնացորդներից դատելով, գյուղի առաջին բնակիչները հաստատվել են ներկայիս եկեղեցու հարևանությամբ գտնվող տարածքում:

1908թ. վերակառուցվել է գյուղի եկեղեցին, որի հարևանությամբ փոքր գերեզմանոց է: Եկեղեցին գործող է, համայնքը՝ ակտիվ, կաթոլիկ հոգևորականը կանոնավոր պատարագներ է մատուցում և ժամերգություններ է կատարում համայնքում, քանի որ բնակչության մեծամասնությունը կաթոլիկ քրիստոնյա է, ունի ակտիվ ծխական համայնք, երիտասարդների ներգրավվածություն, որոնք ոչ միայն տիրապետում են դավանաբանական բովանդակությանը, այլև մասնակից են տարբեր ծրագրերի և համայնքային նախաձեռնությունների: Դրանք կազմակերպվում են Հայ Կաթողիկե եկեղեցու և կազմակերպությունների, օրինակ, Հայկական Կաթիտասի կողմից:

⁴⁸ Դիվան հայ վիմագրության, պրակ X, Շիրակի մարզ (կազմեց Ս. Բարխուդարյանը), Եր., 2017, էջ 20:




Հանջիկի Ս. Աստվածածին կաթոլիկ եկեղեցին կաթոլիկ հոգևորականի տապանաքար եկեղեցու հարևանությամբ



մատուռը, այժմ գյուղում չէ, այլ Բաբոյի տոհմի տղամարդկանցից մեկի տանը:

Գյուղի այս հատվածը, ինչպես նշեցինք, ամենահինն է: Ենթադրաբար, հենց այստեղ են 19-րդ դարի առաջին երեսնամյակում կառուցվել առաջին տները: Դրանցից մի


Եկեղեցու մերձակայքում է գտնվում «Բաբոյի կենաց խաչ» անունով մատուռը: Այն, գյուղացիների պատմելով, կառուցվել է Բաբո անունով անձի կողմից: Մատուռը վերանորոգվել է խորհրդային շրջանում, իսկ բուն «Կենաց խաչը», որի համար կառուցվել է



քանիսը ձևավորվելով ու նորոգվելով դեռևս պահպանվում են: Կան նաև կիսավեր տներ՝ պատեր, առանձին սենյակներ: Դրանք հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու ընտանիքների կազմի մասին:

Ավանդաբար, նման տներում բնակվել է մեկ գերդաստան՝ ծնողներից, եղբայրների ընտանիքներից կազմված: Այս տների ծածկը նույն այն տեսակն է, որ հայտնի ողջ Շիրակում «հազարաշեն» անվանումով: Գյուղացիները, հատկապես մեծահասակները, մինչև օրս հիշում ու պատմում են, որ այս տների գերանները բերվել են Սարիղամիշից, որը համարվում է փայտի մշակման հայտնի կենտրոններից: Այս հատվածում պահպանվել են մի քանի այլ հին տներ ևս:

Կիսաքանդ տուն





Հին տներից մեկի խոտածածկ երդիկը

*



Գյուղում, չնայած եկեղեցու առկայությանը, բացի Բաբոյենց խաչից, կան այլ մատուռներ ևս: Դրանցից մեկը Զայրաթում է: Գյուղացիներն այս խաչի մասին տարբեր պատմություններ են հիշում. **«Զայրաթի խաչը փոքր բլրի վրա է: Մեր գյուղացին երազ էր տեսել, թե քանդե՛ք, մի 3 մետր իջե՛ք, սուրբ կա ու ջուր»:**

Գյուղում է նաև Ճապոյի խաչը. **«էդ տան տերն է: 1970-ական թթ. առանձնացրեց տան մեջ, էղավ խաչ: Սովետական տարիներին էլ կար: Երեք տեղն էլ սովետական տարիներին գնացել ենք»:**

Անկախության տասնամյակների հետաքրքիր միտումներից մեկը տարբեր գյուղերում նոր մատուռներ կառուցելն էր: Դրանք, որպես կանոն, կառուցվում էին երազ տեսնելուց հետո, երբ երազին եկած սուրբը կամ հրեշտակը կոնկրետ նշում էր վայրը, որտեղ պետք է փորել կամ մատուռ կառուցել: Լանջիկում էլ այս միտումը կա: **«Հմի նորից սրբեր կան. Բենիկենց դուռ. էսի վերջին տարիներին են սարքել: Մե**

հատմ էլ կա Վաչոյի սուրբ. իրանց հայաթի մեջն է: Իրա տատինն ու պապին տարիքավոր մարդիկ էին, 1941թ. պատերազմի ժամանակ իրեք տղա ունեին, իրեք տղեն էլ զոհվան: Թոռները թաղեցին: Իրենց տան մեջը սուրբ ունեին, սրաբապատկերներ: Կարող է ն ընտելից (Արևմտյան Հայաստանից) են բերած»:

Գյուղն ունեցել է երկու ձիթհան՝ ձեթ ստանալու ավանդական «գործարան», ինչը զարմանալի է այս փոքր գյուղի համար: Զիթհանների մասին հիշողությունները կենսունակ են, քանի որ գյուղացիների հիշելով՝ դրանք գործել են խորհրդային տարիներին: *«Երկու ձիթհան ենք ունեցել, մեկի քարը կա: Ճանապարհի վրա դրած է: Մեկը Գրոներինն է եղել, մեկը՝ Դավիթներունը: Դավիթները հարուստ են եղել: Երկար ժամանակ ձիթհանի տարածքը կար, բայց ես աշխատելով չեմ տեսել: Շենքն էլ կանգնած վիճակում չեմ տեսել, մենակ քարը: Քարն էլ տրակտորը քաշեց բերեց ճանապարհի վրա»:* Զիթհանի մասին ավելի կոնկրետ հիշողություններ ուներ նաև դրանցից մեկի տերերի ժառանգը. *«Գյուղում երկու ձիթհան է եղել (ձիթխաց)՝ Գրոներու ու Դավիթներու: Գրոները Վարդանի տղեն է եղել, տղու՝ Գրիգորի անունով ասել են Գրիգոր: Ես ձիթհանը տեսել եմ, մինչև 1991թ. ձեթ է հանել. եզներով աշխատել է հին ձևերով: Հետո մնաց հողի տակ: Փետերը հանեցին վառեցին, ինքը հիմնական գետնափոր էր, հիմնական հողի տակ էր, բարձր էր, բայց երևի մի երկու մետր վերև էր, իրեք մետր ներքև: Եզների տեղն էլ կար: Գյուղում դեռ մարդիկ կան, որ ձիթհանում աշխատել են: Փայտերը՝ փալուտ, բերել են Արևմտյան Հայաստանից: Սվեդլոն երևի մի երկու մետր երկարություն ուներ (պողոսիկի մասին է խոսքը): Քարերն էլ կային, բովելու տեղն էլ կար, պոեսի տեղն էլ քարի տակ էր կոխած: Մյուսը երևի ավելի շուտ է դուրս եկել»:*

Այսօր, բացի քարից, ձիթհաններից գրեթե ոչինչ չի մնացել, չնայած տեղը դեռ երևում է:




Ձիթհանի քար գյուղի կենտրոնում



Գյուղի ձիթհաններից մեկն այստեղ է եղել

Գյուղի անմիջական հարևանությամբ, գյուղացիների հիշելով, ընդհուպ մինչև 20-րդ դարի կեսերը առու է հոսել, որի վրա ջրաղացներ են եղել: Ջրաղացները վաղուց չկան, մնացել են միայն հիմքերի առանձին հատվածներ: **«Գյուղն ունեցել է**



ջրաղացներ: 4 հատ ջրաղաց ենք ունեցել: Հմի պատերն են մնացել, ուրիշ բան չկա: Ես եղել եմ տատիս հետ, ցորեն ենք աղցել: Մինչև 50-ական թվականները մեկը հաստատ կար, էնոնք չէ: Ես ջրով աշխատելով տեսել եմ, տատիկիս հետ գնացել ենք: Աշխատողի անունը Յուզունի Վասիլ էր՝ Տոլոների շարունակությունը: Ջրաղաց ունեցել են Դավիթենք, Աթոռակալներ են ունեցե, մյուսը չեմ հիշե: Ջրաղացները եղել են գյուղի հետևի մասում՝ սարի այն կողմը՝ Փարաքարի մոտ: Կռուզում էր սարը Փարաքարն է: Մյուս ջրաղացները /իրեք հատը/ էն կողմն էն էղե սարի, մե գծի վրա: 50-60 մետր առաջին երկուսն էին իրարից հեռու, էն մյուսն էլ երևի մի 200 մետր»: Ոչ շատ մեծ գյուղի համար 4 ջրաղացը քիչ չէր: Դրանք ծառայում էին ոչ միայն Լանջիկին: Ջրաղացների այցելուներն էին հարևան գյուղերի բնակիչները: Ազգագրական նյութերը ցույց են տալիս, որ ջրաղացները հավաքատեղիներ էին, զրույցի ու խոսակցությունների, հետաքրքիր պատմությունների վայրեր: Կարող ենք ենթադրել, որ նույնն է եղել նաև Լանջիկի ջրաղացներում, որտեղ հանդիպել ու միմյանց հետ զրուցել են հարևան գյուղերից եկած տասնյակ տղամարդիկ:

Գյուղի ավանդական արհեստները

Արհեստավորները, հատկապես դարբիններն ու փայտագործ վարպետները գյուղում կարևոր դեր էին խաղում: Մարդիկ օգտագործում էին նրանց սարքած գործիքները, նրանց էին դիմում այս կամ այն հարցով:

Լանջիկն էլ բազմաթիվ հայտնի արհեստավորներ է ունեցել: Գյուղում դարբնոց է եղել, որը, սակայն, չի պահպանվել: *«Լավ դուրգյարներ ենք ունեցել: Մի հատ էշի կաշկա էր շինե Հակոբ պապը, Միսակի հերը՝ Մարդոներից, նայեիր, հրաշք բան էր: Ունեցել ենք Յուզունենց Եզոր. դարբին է եղե, դարբնոց է ունեցե: Հետո տղեն աշխատավ: Դարբնոցը քանդեցին, Գրոների տունն էր, օգտագործել են: Կոլխոզն առանձին դարբնոց ուներ, Հակոբի տղեն էր: Մե հոգիմ էլ կար՝ Սոլոյի Մելիքը: Անիվ էին սարքում, չթերն էին վերանորոգում: Քարի գործ անողներ էլ կային, քար կտրող*

վարպետներ կային: Հայտնի էր Մեթոն, Մարկոսը, ըդոնք լավ քար կտրող էին, բայց մենակ մեր գյուղի համար էին: Դարբնոցից հմի մնացել է միջի եղացածը, բայց փակ է: Դարբնի թոռն էլ դարբին է:

Գյուղերում արհեստավորներին թվարկելիս սովորաբար կանանց «մոռանում են», և միայն երկար հարցուփորձից հետո է հնարավոր լինում պարզել, որ կանայք էլ են կարևոր դեր ունեցել գյուղական կյանքում. *«Գյուղում կավ էղել է. կճուճ են շինե, բղիկ են շինե: Երկու կին են էղե՝ Գրոյի Վարսեն, Փաշոյի Յուղիկ: Բղիկ են սարքե թթու դնելու համար, կճուճ, պուտուկ, փոքր թասեր: Մինչև հիմա տներում կա նրանց սարքածներից: Թոնիր սարքող չի էղե, մենք առել ենք Սառնաղբյուրից: Պատրաստի բերել ենք, ըստեղ թրծել: Թրծելու համար աթար ենք վառել թոնրի կողքից այնքան, մինչև դրսից ու ներսից լավ կարմրեր:*

Գյուղում սանդերք էլ կար, բուրդ գզել, նասկի, սվիտեր, գործած ժակետ: Տասու էլ, մամս էլ գործել են: Համարյա սաղ էլ գործել գիտեին, մայրերն ու տատերը պարտադրում էին, ամեն մարդ իր ընտանիքում սովորում էր»:


Խորհրդային առաջին տասնամյակներին գյուղի լանդշաֆտը, ինչպես նշեցինք, պահպանվում էր առանց էական փոփոխությունների:

Լանջիկում դեռևս 1902թ. դպրոց է գործել: 1930-ական թթ. արդեն սկսեցին ավելանալ նոր շինությունները՝ դպրոց, գրասենյակ, խանութ, պահեստներ, այլ շինություններ: Մեծահասակներն այսօր թվարկում են խորհրդային տարիներին կառուցված բազմաթիվ շենքեր՝ *«գյուղապետարանի շենքը, մշակույթի տունը, երկու դպրոց, խանութ: Հին դպրոցը փոսի մեջ էր, պուլերը տարեկան կփտեին: Մե 50 մետր հեռավորության վրա նորը կառուցեցին: Առաջին դպրոցը 1960-ական թթ. էր, երկրորդն էլ՝ 90-ականներին: 1908թ. սարքած դպրոց է էղել, խանութի կողքը: Ամենահին շենքը սակայն չկա, քանդեցին սեփականաշնորհումից հետո: Մինչև 1969թ. էդ դպրոցը գործել է: Էն ժամանակ յոթամյա էր, հետո դառավ ութամյա: Մեր երեխեքը գնում էին հիմնականում Սառնաղբյուր, ոտքով 3 կմ ճանապարհ էր: Սկզբնական շրջանում Ձիթհանքով էլ են գնացել:*

Մշակույթի տան շենքի պատմությունը. 65 թվին գնացել եմ բանակ, նամակ էկավ, որ 66-ին ակումբ են սարքում: 68 թվին եկել եմ, մե օյադ էր սարքած: 69 թ. շինարարության վրա աշխատել եմ: Հետո աշխատել եմ հին ակումբի շենքը, սեփականաշնորհեցին, դարձրին անասնազոմ: Շենքը շատ դանդաղ էր բարձրանում, 1977թ. նոր գործերը պրծան, տեղափոխվանք ըստեղ»:

Գյուղում հետպատերազմյան տասնամյակներին նաև նոր տներ սկսեցին կառուցել: Տուֆը խնդիր չէր, տուֆի լավագույն հանքերը հարևանությամբ էին: Այսօր էլ, թեկուզ ոչ վստահ, հիշում եմ տների մասին բազմաթիվ պատմություններ. *«Նոր տները սկսեցին 60-ական թթ. սարքել: Առաջ էլ տուֆով տներ կային, ես կհիշեմ՝ 4 հատ գեղը կար՝ կարմիր քարով: 60-ական թթ. էս կողմ նոր դառավ մասսայական: Մինչև էդ տուֆով... Մարկոսենց տունն էր, ուրիշ տներ էլ կային: Առաջին 2 հարկանի տունը գյուղում սարքեց... հիմա Թիֆլիս կապրին, 67-68 թվերին էկան, հոր տների վրա երկուհարկանի տուն սարքեց Տարոյի Հովհաննեսը: Հետո կառուցեց Գրոյի Հովսեփը: Էն ժամանակները 2 հարկանի տուն սարքելը դժվար էր. եկամուտ, բան պտի ցույց տայիր»:*

Գյուղական լանդշաֆտի կարևոր բաղադրիչ, սկսած 1950-ական թթ., դառնում էին Հայրենական պատերազմում զոհված համագյուղացիներին նվիրված հուշարձանները: Լանջիկում էլ նման հուշարձան կա, որ կառուցվել է ավելի ուշ՝ 1990-ական թթ.:



Պատերազմում զոհվածների հուշարձանը

Առաջին Արցախյան, քառօրյա և 44-օրյա պատերազմները, ինչպես նաև 1988թ. դեկտեմբերյան երկրաշարժը փոփոխություններ առաջացրին գյուղական լանդշաֆտում: Լանջիկում, Հայրենական պատերազմում զոհվածների հուշարձանի հարևանությամբ, համագյուղացիներից մեկը խաչքար է կանգնեցրել զոհված համագյուղացու հիշատակին: Ժամանակի ընթացքում գյուղի այլ տարածքներում էլ են ձևավորվում պուրակներ, փոքր այգիներ, որտեղ խաչքարեր և հուշարձաններ են կանգնեցվում: Նման մի փոքր այգի-պուրակ ձևավորվել է նաև Լանջիկում: Այստեղ երկրաշարժի զոհերի հիշատակի խաչքարն է, Արցախյան գոյամարտում զոհված հերոսների հուշաքարը:



Գյուղական կյանքը, տնտեսությունը, առօրյան, համագոծակցությունը

Համայնքների դինամիկ զարգացման արդի հայեցակարգերում կարևոր տեղ է տրվում առօրյա կյանքին, շփումների ու հաղորդակցության մեխանիզմներին, քանի որ որպես կանոն հենց դրանք են եղել այն միջավայրերը, որտեղ պահպանվել ու վերարտադրվել է ավանդական մշակույթը՝ իր տարբեր տարրերով: Այսօր էլ բազմաթիվ համայնքներ նաև ավանդական մշակույթի ճիշտ ուսումնասիրությամբ ու հանրայնացմամբ են փորձում դիրքավորվել ոչ միայն զբոսաշրջային շուկայում, այլև զարգացման տարբեր ծրագրերում:


Լանջիկում, ինչպես ուսումնասիրված մնացած համայնքներում, չնայած նախախորհրդային ու խորհրդային շրջանի էական տարբերություններին, կյանքը կազմակերպվել է որոշակի կենտրոնների շուրջ:

19-րդ դարում գյուղում հիմնական տնտեսական զբաղմունքը եղել են հողագործությունն ու անասնապահությունը: Բերված թվային տվյալները ցույց են տալիս, որ գյուղը հարուստ չի եղել վարելահողերով, ուստի ընտանիքները մեծ ջանքեր են գործադրել իրենց գոյությունն ապահովելու համար: Այս տարիներին գյուղում ցանել են հիմնականում ցորեն ու գարի: Խորհրդային տարիներին նույնպես տնտեսությունն էական փոփոխությունների չի կրել: Գյուղում մինչև Հայաստանի անկախացումը, գործել է կոլեկտիվ տնտեսություն, որը մշակել է հիմնականում ցորեն ու գարի: Մինչև 1960-ական թթ. գյուղում զարգացած է եղել նաև խոզաբուծությունը, որ հետո վերացել է: Ինչպես նախկինում, մեր օրերում ևս գյուղում բավականին զարգացած է անասնապահությունը: Խորհրդային տարիներին գյուղի անասունը ամռանը պարտադիր սար է տեղափոխվել, որ եղել է ներկայիս Աշոցքի շրջանից Տաշիր տանող հատվածում: Այստեղ գյուղը նաև շուրջ 150 հեկտար արոտ ու խոտհարք է ունեցել: Անասունները սար տեղափոխվել են մինչև անկախությունը, դրանից հետո սար տեղափոխվող ընտանիքների թիվը նվազել է, այսօր անասունը պահում են հիմնականում գյուղի շրջակա տարածքներում: 1970-ական թթ.-ից, գյուղացիների հիշելով, սարում պայմաններն է՛լ ավելի տանելի դարձան. քարե տներ

սարքեցին, որտեղ ապրում էին կթվորուհիներն ու անասնապահները: Կաթը վերամշակվում էր հիմնականում սարում կամ մթերվում էր տարբեր գործարանների կողմից:

Կոլեկտիվ տնտեսությունը, սակայն, ժամանակի ընթացքում դառնում էր ոչ գրավիչ, քանի որ երիտասարդները հրապուրված չէին ցածր եկամուտ ապահովող գյուղատնտեսական զբաղմունքներով: Բարձրագույն կրթություն ունեցողները գյուղ չէին վերադառնում կամ վերադառնալու դեպքում նախընտրում էին ոչ գյուղատնտեսական զբաղմունքները:

Այս տարիներին, որպես գյուղատնտեսության այլընտրանք, հանդես էր գալիս արտագնա աշխատանքը՝ «խոպանը». *«Ես ծնվել եմ, խոպան էղել է: Մեծերը նույնիսկ ասում էին, որ Թիֆլիս է էղել խոպան գնալ-գալը: Գյուղից շատ են Թիֆլիս գնացել: Երևի առաջիններից մեկը Հաջի Մանուկն է գնացել»*: Հետո արդեն հիմնական ուղղությունը դարձավ Ռուսաստանը: Գյուղացիները հիշում են, որ շատ են գնացել հատկապես Օրենբուրգի մարզ: Այս դեպքում էլ սցենարը նույնն է. գյուղից եղել են այստեղ բանակում ծառայածներ, որոնք կապեր են ստեղծել, հետո արդեն շինարարական բրիգադներ տարել: Հիշում են, որ ամենաշատ բրիգադները տարել են Աբաջյան Մոսիկը, Գրոյի Սեթոն, Գասպարներից են եղել բրիգադ տանողներ: Խորհրդային տարիներին մինչև 1970-ական թթ. գյուղից խոպանը տարածված է եղել, ու հենց խոպանն է ապահովել հիմնական եկամուտները. *«Հեջի պես 50-ից ոչ պակաս տղամարդ խոպան էր գնում: Մեզոնին գյուղում մարդ չկար: Մի ժամանակ կար, որ նեղում էին, բայց դե՛ գնացողը գնում էր: 71-72 թվերին էր էդ խստությունը»*: Գնում էին, որովհետև կոլտնտեսությունն արդեն չէր կարողանում բոլորի համար զբաղվածություն ապահովել, իսկ ամենաշատ աշխօրն ու փողը ստանում էին հովիվներն ու կթվորուհիները: Լավ խոպանչիները մինչև 7000 ռուբլի փող էին բերում սեզոնին, ինչը առնվազն 2-3 անգամ շատ էր գյուղի եկամուտներից: Բնական է, որ նախապատվությունը տրվելու էր արտագնա աշխատանքին:



Գյուղական կյանքի հետաքրքրություններից մեկն այն է, որ մինչ օրս հիշում են նաև առաջիններին. *«Գյուղում էդ թվերին ավտոները քիչ էին: Գասպարի Լուվան է ունեցել առաջին ավտոն, հետո՝ քեռու տղունը, երկուսն էլ՝ «Մասկվիչ», հետո Լուվան Մասկվիչը ծախեց, «21» առավ: Առաջին կոմբայնավարին են հիշում՝ Մարդոյի Սերոժ, Յուզոններից՝ Բեննատարի առաջին վարորդին»:*

Գյուղի կյանքում էական փոփոխություններ կատարվեցին Մարալիկի բամբակամանվածքային կոմբինատի բացումից հետո՝ 1980-ական թթ.: Այստեղ աշխատանքի անցան ավելի քան 100 կին և տղամարդ, ինչը նվազեցրեց նաև արտագնա աշխատանքի տեմպերն ու ծավալները: Լավ աշխատողները մինչև 250-300 ռուբլի փող էին ստանում, ինչը տնամերձ հողամասերից ստացվող եկամտի հետ ապահովում էր ընտանիքի համեմատաբար բարեկեցիկ գոյությունը:

Խորհրդային տարիներին կինն էլ գյուղում դառնում էր ավելի տեսանելի: Գյուղում հիշում են ագրոնոմ Վալենտինա Պետրոսյանին, բրիգադիր Շողիկ Միրզոյանին: Պատմում են՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Հռիփսիմե Գալոյան-Միքայելյանի մասին, որ դեռ ողջ է: Հիշում են նաև պատերազմի վետերան, բուժքույր Մարգարիտ Առաքելյանին:

Գյուղական կյանքն ուներ նաև իր ոչ պաշտոնական հետաքրքիր կողմերը: Մեծահասակները այսօր հաճույքով են պատմում գյուղի կալերի (ցորենի հասկից հատիկն առանձնացնելու համար նախատեսված հարթ տարածք) մասին, որտեղ վաղ մանկության տարիներին օրեր են անցկացրել. *«Կոլխոզի կալը ընդհանուր էր, մի կալ էր, երկու բրիգադ: Մեծ կալ էր, կալի տակ 4 հեկտար տարածք էր էրգու բրիգադի համար: Ամեն բրիգադ իրա տեղն ուներ, կալը կիսած էր: Կամեր կար, ես կամ եմ քշել, 7-8 տարեկան եմ էղել: Սկզբից եզ էր, հետո դառավ ձի, ետև դառավ տրակտոր: Յորենը գերընդով քաղեինք զր: Ես մալատիլկա տեսել եմ առաջին անգամ երևի 50 թվերին, մինչև 60 թվերը: Մինչև էդ կամն էր, եզը մնաց մինչև երկրաշարժը, էդ ժամանակ եզներ կային: Էդ ժամանակ մինչև Գրոների ձիթխացը կաշխատեր»:* 88 թվին կաշխատեր, մինչև երևի 90 թվերի սկիզբը աշխատել է: Ամեն բրիգադի տարածքի վրա

7 կամ մե կողմն էր, 7 կամ՝ մեկել կողմից: 14 կամ՝ հակընդդեմ: Ջահել էին, հովն օր կընգներ, արդեն կխառնեինք իրար: Եզները կոլխոզինն էին, հատուկ գոմեր կային: Ձի դառավ, որովհետև եզները բաժնեին զր գյուղի ընտանիքների վրա, որ տանեին լողացնեին, տաք ջրով, որ ձմեռվա կեղտը, քոսը, ոջիլը դուրս գար: Ձիով կալը վերացավ, երբ կոմբան էգավ: 1959-62 թվերին մալատիլկեն էր, երևի 64-66 թվերից կոմբաները մուտք գործեցին»:

Այս բավական երկար մեջբերումը ներկայացրինք ցույց տալու համար, որ աշխատանքային միջավայրը համայնքային համագործակցության համար կարևոր նշանակություն ուներ. համատեղ աշխատանքը, ամենօրյա շփումները վերաբերմունք էին ձևավորում ինչպես միմյանց, այնպես էլ տարածքի հանդեպ: Դրանք նաև փորձի, գիտելիքի ու հմտությունների փոխանցման ինստիտուտներ էին, որ թուլացան սեփականաշնորհումից ու անհատական գյուղացիական տնտեսությունների հիմնումից հետո:

Հետագությունը ցույց տվեց, որ մեխանիզմների նորովի կիրառումը կարող է նպաստել համայնքային համագործակցության մեխանիզմների ակտիվացմանը, ըստ այդմ նաև համայնքային զարգացման ծրագրերում մշակութային կրթության բաղադրիչի ուժեղացմանը:

Առօրյա կյանքի կազմակերպումը նույնպես համագործակցության հետաքրքիր մեխանիզմներ ուներ: Տասնամյակներ շարունակ՝ ընդհուպ մինչև հետպատերազմյան առաջին տարիները, դա օդան էր՝ ավանդական տների հյուրասենյակը, ու օդա նստելը՝ մեծահասակների զրույցներով, պատմություններով. **«Մեծերի համար գոմի օդաներ կային: Հաջիի գոմը ավելի շատ, ամառ ժամանակ ցորենի հորերի քովն էին, տեր Սահակի հորերի քովն էին հավաքվել, ձմեռը նաև ձիթհանն են հավաքվել, ուշի են խաղցե վեց հոգով: Ձիթխացը դեկտեմբերից փետրվար էր: Ամենալավ պատմող ու երգող էղել է Սումբաթը, խանջու: Հեքիաթ պատմող Վասիլն էր, Յուզունի, Խնդեի Ափոն՝ պատերազմի վետերան, Պողոտյի Մերուժը լավ հեքիաթ պատմող էր: Օդա մինչև 61-62 թվերին էր, հետո գնացին ակումբը, հետո տելեվիզորն էղավ»:** Այստեղ

հավաքվում էին հիմնականում տղամարդիկ, կարող էին միանալ նաև երեխաները՝ լսելու հեքիաթներ, երգեր և պատմություններ:

Ընդհանուր գծերով սրանք են Լանջիկի մշակութային լանդշաֆտի հիմնական բաղադրիչները:

Հետազոտությունը ցույց տվեց, որ այս բաղադրիչներն այսօր օրգանական համակցություն չեն, գյուղական լանդշաֆտը չեն դարձնում մեկ միասնական օրգանիզմ ու տարածք: Լանդշաֆտի բաղադրիչներից մի քանիսը ինքնուրույն ու անհետացող բաղադրիչներ են, մի քանիսը, ինչպես, օրինակ, խորհրդային շրջանում կառուցվածները, կորցրել են իրենց նախկին գործառույթները, չեն ծառայում իրենց նախնական նպատակին, ըստ այդմ՝ դուրս են մնացել գյուղական մշակութային լանդշաֆտից:

Պատահական չէ, որ լանդշաֆտի այս բաղադրիչները չկան նաև համայնքային զարգացման ռազմավարություններում ու տարբեր ծրագրերում:

Լանջիկին ու մարզի այլ համայնքներին վերաբերող փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նույնիսկ զբոսաշրջային տարբեր ծրագրերում ու նախագծերում լավագույն դեպքում կարևորվում, «տեսանելի» են դառնում հիմնականում քրիստոնեական լանդշաֆտի առավել կարևոր ու տեսանելի բաղադրիչները՝ միջնադարյան եկեղեցիները: Այս կառույցները կարևոր լինելով, միննույնն է, չեն կապվում համայնքի պատմության հետ, այլ ուղղակի ներկայացվում են որպես համայնքի տարածքում գտնվող կառույցներ:

Նոր Կյանք գյուղ . մշակութային լանդշաֆտ

Նոր Կյանք գյուղի մշակութային լանդշաֆտի մասին գիտելիքը բավականին կենսունակ էր գյուղացիների, անգամ դպրոցահասակների շրջանում: Պատճառների վրա ազդող գործոններից է հավանաբար գյուղի մասին Մ. Կնյազյանի հեղինակությամբ գրքի հրապարակումը, որը կարծես կայունացրել է պատմության տարբեր պատումները և հնարավորություն է տալիս ընտանիքներում, պարբերաբար

թերթելով գիրքը, գտնելու իրենց և սեփական տոհմի կամ ընտանիքի պատմությունը՝ այդպիսով կապվելով գյուղի պատմության հետ:

Նոր Կյանքը նախկինում հայտնի է եղել Մաչողի, Մաջիթի, Մեջիդլու ու այլ անվանումներով: Նոր Կյանք է վերանվանվել 1940թ. հունիսի 1-ին: Բնակիչների նախնիների մի մասը եկել է Կարսից, Խնուսից:⁴⁹

Ինչպես 19-րդ դարում ձևավորված գրեթե բոլոր գյուղերի դեպքում, Նոր Կյանքում ևս բնակչությունը հաստատվել է տարբեր հոսքերով: Որոշ ընտանիքներ հաստատվել են, մի քանիսը հեռացել, ապա վերադարձել: Այս շարժերի մասին տարբեր վկայություններ կան. «Այսպես, օրինակ, 1828-1830թթ. գաղթերի արդյունքում Շորագյալի գավառի... Մեջիթի գյուղ է տեղափոխվել 17 ընտանիք կամ 159 մարդ (97-ը՝ արական, 62-ը՝ իգական սեռի): Բայց թե դրանց մեջ կոնկրետ որքան էին պարսկահպատակներ, և որքանը՝ արևմտահայեր, ինչ վայրերից էին գաղթել, այս մասին փաստաթուղթը լռում է»:⁵⁰ Ըստ այլ տվյալների՝ Մեջիթի-Նոր Կյանքում պարսկահպատակ հայերը տեղավորվել են բնիկ շորագյալցիների հետ:⁵¹ Սրա մեկ այլ վկայությունը տեսնում ենք Փամբակ-Շորագյալի ուղեմասի Շորագյալի տեղամասի 1826թ. ցուցակագրում, որը Մեջիթիում հիշատակում է 14 ընտանիք, 38 տղամարդ, 34 կին, ընդամենը՝ 72 մարդ, հայ առաքելական:⁵² Մեկ այլ վկայության համաձայն, 1827-1832թթ. Մեջիթի-Նոր Կյանքում հաստատված ընտանիքները եղել են Պարսկաստանից և Խնուսից՝ 17 ընտանիք, 97 տղամարդ, 62 կին, ընդամենը՝ 159 մարդ, հայ առաքելականներ:⁵³ Այս տեղեկությունները, փաստորեն ցույց են տալիս, որ 19-րդ դարի սկզբին գյուղում եղել է բնակչության առնվազն երեք հիմնական շերտ՝ բնիկ շորագյալցիներ, պարսկահպատակ հայեր և Խնուսից տեղափոխվածներ:

⁴⁹ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Եր., 1998, հ. 4, ցուցակ 1, էջ 29:

⁵⁰ Ա. Հայրապետյան, Արևելյան Շիրակը XIX դ. առաջին կեսին, էջ 87:

⁵¹ Ա. Հայրապետյան, Արևելյան Շիրակը, էջ 91:

⁵² Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XX դարասկիզբ), (փաստաթղթերի և նյութերի ժողովածու՝ աշխատասիրությամբ Ա. Հայրապետյանի), Եր., 2011, էջ 19:

⁵³ Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XX դարասկիզբ), էջ 29:

Ընդամենը մի քանի տարվա կտրվածքով, գյուղը փաստորեն «արձագանքել» է ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներին և ընդունել է այստեղից տեղափոխված գաղթականների բավականին մեծ խմբերի:

Հետագա տասնամյակներում էլ գյուղում նոր ընտանիքներ են հաստատվել, մի քանիսը հեռացել են: 1860թ. գյուղում բնակվել է 62 ընտանիք (301 տղամարդ, 297 կին, ընդամենը՝ 598 մարդ), բոլորը՝ հայ առաքելական: 1868թ. գյուղում հաստատվել է Թուրքիայից տեղափոխված 1 ընտանիք (2 տղամարդ, 1 կին, ընդամենը՝ 3 մարդ), հայ առաքելական:⁵⁴ 1865-75թթ., տասը տարվա կտրվածքով, գյուղում ընտանիքների թիվը բավականին աճել է. 1865թ. գյուղում բնակվել է 62, իսկ 1875թ.՝ 100 ընտանիք, 732 մարդ:⁵⁵

1885թ. վիճակագրական տվյալներում հիշատակվում է նաև գյուղի Սբ Ստեփանոս եկեղեցին, երկու հոգևորականով, իսկ բնակչության թիվը նշվում է 650:⁵⁶ Այն, որ այս տարիների վիճակագրական տվյալներում բավականին մեծ հակասություններ կան, վկայում են նաև հետազոտողները: Բնակչության թվաքանակի մեծ տարբերություններ կարող են լինել նույնիսկ մեկ կամ մի քանի տարվա կտրվածքով: Նույն Մեջիթլի-Նոր Կյանքն էլ այս տեսանկյունից բացառություն չէ: 1886թ. ընտանեկան ցուցակները այստեղ բնակչության թիվը նշում են 933 մարդ (127 ընտանիք, 497 տղամարդ, 436 կին):⁵⁷ 1878թ. գյուղն ընդունել է Թուրքիայից գաղթած ևս երկու ընտանիքի՝ 13 մարդով (6 կին, 7 տղամարդ), հայ առաքելական:⁵⁸

Մի շատ ուշագրավ տեղեկության ենք հանդիպում 1887թ.: Փաստաթղթերից մեկում նշվում է, որ Մեջիթլիից այս տարի 80 ընտանիք, 200 մարդ քոչվոր է տեղափոխվել Ալագյազ:⁵⁹ Գյուղում անցկացրած հետազոտության ընթացքում գյուղացիներն այս մասին ոչինչ չեն պատմել կամ գուցե չեն էլ հիշել: Դարձյալ որպես ենթադրություն կարելի է ներկայացնել, որ քոչվորները գյուղի շրջակա

⁵⁴ Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XX դարասկիզբ), էջ 122:

⁵⁵ Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XX դարասկիզբ), էջ 132:

⁵⁶ Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XX դարասկիզբ), էջ 138:

⁵⁷ Նույն տեղում, էջ 143:

⁵⁸ Նույն տեղում, էջ 154:

⁵⁹ Նույն տեղում, էջ 168:

տարածքներում ժամանակավոր հաստատված անասնապահներ են: 1888թ. գյուղը Հոռոմի գյուղական հասարակության կազմում է և ունի 928 բնակիչ, 125 ընտանիք, գյուղում գործում է եկեղեցին:

1902-1910թթ., ինչպես նախորդ տասնամյակներին, գյուղը դարձյալ ընդունել է արևմտահայ գաղթականների. 1 ընտանիք, 11 տղամարդ, 6 կին, ընդամենը՝ 17 մարդ:⁶⁰

1906թ. գյուղի բնակչությունը 1330 մարդ է (152 ընտանիք, 700 տղամարդ, 630 կին), ինչը կարող է վկայել մի կողմից՝ կայունացած բնական աճի, մյուս կողմից՝ ներգաղթի հետևանքով բնակչության համալրման մասին:

1906թ. նաև տնտեսության ու հողատարածքների չափի վերաբերյալ վիճակագրական տվյալներ են պահպանվել, որոնց համաձայն՝ գյուղում տնամերձները կազմում են 35.55 դես, ջրովի վարելահողեր չկան, իսկ անջրդի վարելահողերը կազմում են 1168 դես, խոտհարքները՝ 15.5 դես, արոտավայրերը՝ 405.29 դես, ընդամենը՝ 1625.13 դես: Գյուղն ունի 1027 գլուխ խոշոր և 1196 գլուխ մանր եղջերավոր անասուն:⁶¹ Եթե հաշվի ենք առնում բնակչության թվաքանակը, ստացվում է, որ ինչպես ուսումնասիրված այլ գյուղեր, Նոր Կյանքը նույնպես տնտեսական բարվոք պայմաններ չունի, և բնակչությունը լուծում է ընդամենը տարրական գոյատևման հարցերը:

Քսաներորդ դարասկզբին աղբյուրները վկայություն ունեն նաև դպրոցի մասին՝ նշելով, որ այն շենք չունի, իսկ ստանալիք նպաստը պետք է կազմի 300 ռուբ.:⁶² Դպրոցի այս շենքը դեռևս կանգուն է և արժե ներառել հուշարձանների ցանկում:

Ինչպես մնացած գյուղերը, Նոր Կյանքը ևս 1915թ. ընդունել է արևմտահայ գաղթականներին. 33 տղամարդ, 40 կին, 73 երեխա, ընդամենը՝ 146 մարդ, որից աշխատունակ է ընդամենը 23-ը:⁶³

⁶⁰ Նույն տեղում, էջ 206:

⁶¹ Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XX դարասկիզբ), էջ 227:

⁶² Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XX դարասկիզբ), էջ 233:

⁶³ Նույն տեղում, էջ 243:

Սրանք են գյուղի բնակչության մասին հիմնական տվյալները 19-րդ դարի-20-րդ դարասկզբի համար: Գյուղի մասին գրքի հեղինակ Մ. Կնյազյանը ներկայացնում է այս ամենի անձնավորված պատկերը. «Գյուղում մինչև հայերի հաստատվելը ապրել են հույներ, ովքեր և գյուղը կոչել են Ծերագյուղ: . . . Առաջին մարդիկ Նոր Կյանք եկան մոտակա վայրերից՝ Կարսի մարզից, ապա Բասենի և Ալաշկերտի դաշտավայրերից, իսկ ավելի ուշ՝ Խնուսի գավառից և այլ վայրերից: Այսպես, Չոբանօղունց Սարգիսը իր Դովլաթ կնոջ հետ առաջինն է հասել Նոր Կյանք գյուղ: Երկրորդ բնակիչը եղել Մոսեսի ընտանիքը, հետո Դանելենք են, որոնք, ըստ մեր եզրահանգումի, պիտի եկած լինեին Վանի նահանգի Լեզգ գյուղից»: Չորրորդ ընտանիքը Խարցունց տոհմն է, որոնք եկել են Կարսի Խար գյուղից. . .»:⁶⁴ Ռուս-թուրքական 1828-29թթ. պատերազմից և դրան հաջորդած գաղթից հետո գյուղում հաստատվել են նաև Խնուս գավառի Խոզլի գյուղից ընտանիքներ:⁶⁵

Ահա այսպես է տասնամյակների ընթացքում ամբողջացել Նոր Կյանք գյուղի բնակչությունը: Մարդիկ այսօր էլ հիշում են հին ու նոր եկածներին, այս կամ այն ազգատոհմի՝ որտեղից եկած լինելը: Հիշում ու ներկայացնում են նաև, թե որ տոհմը որտեղ է բնակվել, գյուղի որ հատվածում:

Սա գյուղի տարածքի, մշակույթի ընկալման յուրահատուկ մոդել է, որ միայն Նոր Կյանքին չէ, որ բնորոշ է:

ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատվել են գյուղի տարածքում ու շրջակայքում գտնվող հետևյալ հուշարձանները.⁶⁶

⁶⁴ Մ. Կնյազյան, Նոր կյանք գյուղի պատմությունը, էջ 28-33:

⁶⁵ Նույն տեղում:

⁶⁶ Տես՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2004թ. սեպտեմբերի 9-ի թիվ 1270-Ն որոշումը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին// arlis.am/DocumentView.aspx?DocID=105447:

7.87 Նոր Կյանք գյուղ

1	2	3	4	5	6	7	8	9
1				ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	10-19 դդ.	ան եզրին, սարալանջին	<	
	1.1			խաչքար	10 դ.	գերեզմանոցի հվ կողմում	<	
2				ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	19-20 դդ.	հվ-ան եզրին	S	
3				ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	5-10 դդ.	1.5 կմ ան, «Անտոնենց խարաբեք» վայրում	<	
4				ՂԱՄԲԱՐԱՆԱՂԱՇ	Ք.ա. 2-1 հազ.	1.5 կմ ան	<	
5				ԵԿԵՂԵՑԻ ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ	6 դ. 2-րդ կես	գյուղի մեջ	<	
6				ԽԱԶՔԱՐ	11-12 դդ.	գյուղի մեջ	<	Գ. Պետրոյանի տնամերձում
7				ՀՈՒՆԱԿՈԹՈՂ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՋՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1978 թ.	հվ-ան եզրին	S	
8				ՄԱՏՈՒՈՒ ՍԲ. ԳԵՎՈՐԳ	10-13 դդ. վերակառ. 19 դ.	հս-ան մասում	S	
	8.1			խաչքար	9 դ.	մատուռում	<	
	8.2			խաչքար	10 դ.	մատուռում	<	

Ցանկը ցույց է տալիս, որ այս տարածքում մարդիկ բնակվել են հազարամյակներ շարունակ, մինչև գյուղի հերթական ու վերջնական վերահայացումը:

Մ. Կնյազյանը ներկայացնում է տարածքի ու շրջակայքի հուշարձանների հնարավորինս մանրամասն պատմությունը: «Մաթոսի ձոր» կոչվող տարածքի հարավային կողմում գտնվող «Մերյելենց խամեր» կոչվող հանդամասում նոր ջրամբար կառուցելու աշխատանքների ժամանակ բացվել են գերեզմաններ: Տարածքում կատարված հնագիտական պեղումներին անդրադարձել է «Կումայրի» պետական պատմաճարտարապետական արգելոց-թանգարանի ավագ գիտաշխատող Հովհաննես Աղեկյանը. «Արթիկի շրջանի Նոր Կյանք գյուղի շրջակայքում կառուցվող ջրամբարի շինարարական աշխատանքների ընթացքում հայտնաբերվել են մի քանի սալարկղային դամբարաններ, որոնք, ինչպես հետազայում պարզվեց, վերաբերում էին երկաթի վաղ յուրացման դարաշրջանին: 1987թ. ամռանը ՀՍՍ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի և հուշարձանների պահպանության և օգտագործման վարչության նախաձեռնությամբ կազմակերպվեց գիտական արշավախումբ, որը պեղումներ անցկացրեց ժամանակավոր ընդհատված շինարարական աշխատանքների տեղանքում: Տեղանքի

նախնական հետազոտությունները ցույց տվեցին, որ կառուցվող ջրամբարի տարածքը զբաղեցնող դամբարանադաշտը ներառում է հարյուրից ավելի դամբարաններ: Դրանք ընկած են Հոռոմի հայտնի բրոնզեդարյան բնակավայրից դեպի հարավ-արևելք, եզրափակում են այդ հռչակավոր հուշարձանախումբը և վերաբերում են հենց նույն բնակավայրին»:⁶⁷

Այս վկայությունը ցույց է տալիս, թե մշակութային լանդշաֆտի ճիշտ քարտեզագրումն ինչքան կարևոր է ոչ միայն մշակութային, այլև ընդհանրապես ռազմավարական պլանավորման գործողությունների համատեքստում, և ժառանգության ճիշտ մշակումն ու հանրայնացումը ինչպես կարող են ազդել համայնքային զարգացումների վրա:

Գյուղացիները՝ կին ու տղամարդ, մինչ օրս հիշում ու մանրամասն ներկայացնում են գյուղի ու հարակից տարածքների բազմաթիվ այլ հուշարձաններ ևս, քանի որ մանկության ու պատանեկության հիշողությունների մեծ մասը հենց այս տարածքների մասին է. **«Գյուղի մատուռները. մատուռ կար ձորի մեջը, քարքմ դրած էր, էդ քարի տեղը հմի շենք են շինե որպես մատուռ: Ուղղակի ըստում էին՝ էրթանք մատուռը: Ջեյրո մամի սուրբը. մե գիրքքմ դրած էր տունը, հմի էդ էլ Լյովան է շինե: Քեշողլու Օսկանի սուրբը, Բադոյենց: Քուրոջս տունն էլ կար սուրբ, Ափրամենց սուրբը»:** Անհատական խորացված հարցազրույց, տղամարդ, 88 տարեկան:



⁶⁷ Հ. Աղեկյան, Դամբարանների պեղումներ//Բանվոր, թիվ 292, դեկտեմբերի 20, 1987: «Հոռոմ» քաղաքատեղին Շիրակի հնագույն բնակավայրերից է: Ամենաարժեքավոր հուշարձանը Հոռոմ գյուղի հյուսիսարևելյան կողմում գտնվող Ք. ա. 3-2-րդ հազարամյակի ամրոցն է, որի շրջակայքում հայտնաբերվել է հիշյալ պատմական ժամանակաշրջանին վերագրվող դամբարանադաշտ:



Գյուղերում հարցազրույցների ընթացքում տպավորություն է ստեղծվում, որ կանայք ավելի մանրամասն են ներկայացնում տարբեր հուշարձանները, երևի նրա համար, որ ավելի հաճախ են տատիկների կամ մայրերի հետ գնացել մոմ վառելու. *«Ջեյրոյի սուրբը, Մատուռը, Քեշողուն սուրբը՝ Կարմիր վանքը: Ըդման են ըսըմ: Ամեն շաբաթ պտի էրթայինք սրբի տները, սաղինը պտտվեինք գայինք: Շաբաթ իրգուն տնեցիք էլ կէրթային մոմ վառելու, ընտից մտնըմ էին մեզելը: Կարմիր վանքը՝ Քեշողուն սուրբը, ըսում էին՝ շատ գորավոր է: Սուրբն օր համբուրեինք զը, պտի անպայման շորն էլ երեսներիս քսեինք: Ուրիշ գեղերից էլ գուկային: Մե խաչքարըմ էլ կար, «Հագամեր» էին ըսըմ, իջնըմ էին, ըդուր վրա շոր գցում, գալիս էին: Գուջոյի Գեղեցի տան քով: Ով օր հիվանդ էր, տաներ շորը քցերը զը քարի վրա, գուկար: Կսեին՝ ըդիկ հազ կբուժեր»:* Անհատական խորացված հարցազրույց, կին, 88 տարեկան:

Գյուղում ու շրջակայքում այլ մատուռներ ու սրբեր էլ կան. *Սուրբ Գևորգը, Խչոյենց հմայիլը, Մատնահարը, Աբրահամենց Սուրբը, Չախալի Մարկոսի Սուրբը, Մլեմենց Նարեկացին, Հերաբենց Նարեկացին, Վրդեյենց Նարեկացին, Զոբոնց սուրբը* և այլ սրբեր ու սուրբ գրքեր:⁶⁸ Երիտասարդները ևս, բավականին տեղեկացված լինելով գյուղի կրոնական լանդշաֆտին, շարունակում են կենսունակ պահել այս ավանդույթները:

Այս մատուռները վկայում են ոչ միայն կրոնականության, այլև հարակից հմտությունների մասին՝ շինարարությունից մինչև զարդարանք, խնամք և հոգատարություն: Այս տարածքներին նվիրված ասեղնագործ աղոթքներից, ներսույթի

⁶⁸ Մ. Կնյազյան, նշվ. աշխ., էջ 49-56:

ձևավորումից պատկերացում ենք կազմում տեղի բնակիչների գեղագիտական ընկալումների, նյութերի օգտագործման և տարբեր ժամանակների հանդիպումների մասին, ինչը ևս կարող է դառնալ ոչ ֆորմալ կրթական ծրագրերի բաղադրիչ:



Ջեյրո մամի սուրբը, որտեղ պահվում է հաջողություն բերող ձեռնափայտը

Ահա այսպես, կարճամիտի նկարագրություններով ամբողջանում է գյուղի մշակութային լանդշաֆտը:

Մ. Կնյազյանը շատ ավելի մանրամասն է ներկայացնում գյուղի շրջակայքը. *«Մեծ ձոր, Տափան կոտորուկի արտեր, Մկնկերների արտեր և այսպես շարունակ... Նոր Կյանք գյուղի արևելյան մասի բլուրները տեղացիներն անվանում են Մատուռի սար... Այդ սարի արևելյան լանջին մինչև վերջերս կանգուն էր «Թուխ Մանուկ» կոչվող սրբավայրը... Գյուղից 1.5 կմ արևելք դաշտերի ու բլուրների վրա տարածված է «Անտոնենց խարաբեք» գյուղատեղը... Հին գյուղին թիկունք տված երեք բլուրներից ամենաբարձրը Սև բլուրն է, որին մեր պապերն անվանել են «Ղարալ թափա», երկրորդն անվանել են Դիմացի դոշ, իսկ հետագայում՝ Մշեմենց սար, երրորդը Մատուռի սարն է... Մատուռի սարն աղեղնաձև ձգվելով հասնում է*

Մաղարա բլրակին, որից կոնաձև միանում է Աբրահամենց քարափին».⁶⁹ Հեղինակը բազմաթիվ այլ տեղանուններ էլ է նշում՝ Ֆիդոյենց ձոր, Մաթոսի, Պողոսի կամ Բդեյի ձոր և այլն:⁷⁰

Ինչպես այլ գյուղերի դեպքում, Նոր Կյանքում նույնպես մանրատեղանունների այս խտությունը ցույց է տալիս, որ ընդամենը մի քանի տասնամյակում հայ գյուղացին կարողացել է ճանաչել տարածքը, յուրացնել այն՝ հենց տարածքին անուններ տալով:

Գյուղի շրջակայքում եղել են նաև ջրաղացներ. *«Ղարաղունի ջրի վրա 4 հաստ ջրաղաց կար երևի՝ Ափրամենց, Շրբբղդրնի, Արոյենց, քաղբցու: Աշխատցնողները էս գյուղից էին: Էդ մեկը գյուղից հեռու էր, էլի կար, բայց էս օր արդեն հասկցա, արդեն քանդել էին: Չիդեմ՝ ումն էր: Մինչև էներգիա տալը ըդոնք ջրով աշխատան, 50 թվերը: Էդն էլեկտրական ջաղացք դառավ: Մաղ ջաղացքները մե աչքում ունեին, համարյա սաղ դինգ էլ ունեին: Մերոնք խառը կտանեին աղալու, կապ չունեի ում մոտ: Ես էլ եմ ջաղացք գնացել, մե ջաղացքը դայրոցի մոտն էր»:* Ջրաղացների հետ կապված են նաև մանկության բազմաթիվ հիշողություններ. *«Ջրաղացներ՝ Աբրամենց, Քեջողունց՝ էս շատ եմ գնացել էրեխա ժամանակս: Մեծ տոութա էր, մենք էլ մտնեինք գր տոութի մեջ, լողնայինք գր: Տոութեն երկաթ էր, լեն տոութա էր: Ձավար ծեծելու էլ ուներ: Օր ջուր էղներ, հերթով սաղ գեղացիք ձավար ծեծեին գր: Վարդաքարը չուներ, իրանք ըստեղ գուկային: Մանթաշի ջուրն էր: Ջաղչրպանը Երվանդն էր, մեծ մարդ էր, Շարֆաղրենցեն: Ցորենը եզով սելով կտանեինք: Եզը կոլխոզինն էր, մենք սեփական չունեինք: Եզը կոլխոզը կուտար: Մեկերն ու եզները ահագին մնացին... Հարի 60 թիվը կար: 58 թվին եմ ամուսնացել, էդ վախտը կար»:* Անհատական խորացված հարցազրույց, կին, 88 տարեկան:

Գյուղերում, ինչպես տեսնում ենք, ջրաղացների մասին պատմությունները կենսունակ են: Դրանք, սակայն, ինչպես մշակութային ժառանգության մնացած տարրերը, որևէ կերպ ներառված չեն համայնքային զարգացման ծրագրերում ու չեն

⁶⁹ Մ. Կնյազյան, նշվ. աշխ., էջ 12:

⁷⁰ Նույն տեղում, էջ 13-14:

նպաստում համայնքների զարգացմանը: Մինչդեռ, եթե դիմենք նաև միջազգային փորձառությանը, որ առկա է համայնքների զարգացման ոլորտում, կտեսնենք, որ մշակութային լանդշաֆտի առանձին տարրերը դառնում են համայնքային զարգացման առանցք. մի դեպքում դա ջրաղացն է, որի շուրջը կառուցվում են համայնքային զարգացման տարբեր գործողություններ, ձիթհանը կամ տեղական արհեստները: Ընդ որում, որպես զարգացման ռազմավարական մոտեցման բաղադրիչ դիտարկվելու դեպքում դրանք սոսկ զբոսաշրջային գրավչության ապահովման խնդիր չեն լուծում:

Այդ փորձառությունների միջոցով ապահովվում է միջսերնդային շփումը, գիտելիքի, հմտությունների ու փորձի փոխանցումը, համայնքի ճիշտ ու գրագետ դիրքավորումը, երիտասարդների վերաբերմունքը գյուղի՝ որպես հնարավորություններ ունեցող միջավայրի հանդեպ:



Նոր Կյանքի բուն գյուղական մշակութային լանդշաֆտի ամենակարևոր տարրը խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ եկեղեցին է, որ առհասարակ հայկական քրիստոնեական մշակույթի հնագույն պահպանված կառույցներից մեկն է: Այն այսօր էլ գործում է:

Հուշարձանի կառուցման ժամանակը հայտնի չէ:

Իր ճարտարապետական հորինվածքով աղերսվում է 6-7-րդ դդ. մի շարք կառույցների (Աղջովիտի ս. Գևորգ, Լմբատ, Նալբանդ, Կարմրավոր, Ծպնի և այլն): Հուշարձանի մասին առաջին անգամ հիշատակել է բազմավաստակ հայագետ Ղ.

Ալիշանը:⁷¹ Նրա վկայությունը եկեղեցու մասին հետևյալն է. «Իբրեւ փարսախաւ ի Մ. Հ. Արդիկայ եւ երկու մղոնաւ ի Մ. Հր. Քեաֆթարլուի և մերձագոյն եւս ի Հոռոմ, առ եզերք Հառիճայ վտակին եւ ի լեռնոտին՝ կայ **Մէջիտլի (մզկիթավոր) գիւղ**, յորում հին եկեղեցի յամրոց փոխեալ, որպէս Հառիճայն և Արդիկայն, այլ զհարդն ոչ է ինձ յայտ»:⁷² Ակադեմիկոս Ն. Մառին ուղղված նամակում գյուղ այցելության մասին գրում է նաև նշանավոր Թորոս Թորամանյանը. «Հուլիսի 20-րդ օրն էր, ճանապարհվեցա Հառիճ՝ Արագածի շրջանը այնտեղեն սկսելու համար: Ճանապարհին Հառիճեն 7-8 վերստ մնալով մտա Մաջիթլու ըսված գյուղը, որտեղ կա մի հին եկեղեցի: Այս եկեղեցին թեև բոլորովին նախնական վիճակի մեջ չէ մնացած, արևմտյան կողմէ քանդվեր է, և վրան հավելվածներ են արած, սակայն ըստ ինքյան մնացած մասերը ցույց կուտան, թե մինչև 7-րդ դար գոյություն ունեցող ոճին կպատկանի: Թիվ 108 լուսանկարը Մաջիթլուի եկեղեցով հյուսիս-արևելքը ցույց կուտա, ներքուստ և արտաքուստ խաչաձև է: Հյուսիսային պատի վրա շատ արձանագրություններ կան, որոնց առանձին-առանձին լուսանկարելը խիստ շահեկան կլիներ, սակայն ես հնար չունեի երկար մնալու, միայն այժմ բավականացա լուսանկարելով: Թիվ 205 պատկերը կներկայացնե հյուսիսային պատի վրա գտնված արձանագրություններու խումբը: Թիվ 206 պատկերն այդ արձանագրություններեն մեկն է, որ գեթ 10-11-րդ դարերուն անսովոր ցից տառերով փորագրված է»:⁷³ Եկեղեցու համառոտ նկարագրությունը Թ. Թորամանյանը տալիս է նաև աշխատության այլ էջերում (տե՛ս էջ 137, 139, 204): Բացի նշված հեղինակներից, այլ հետազոտողներ ևս անդրադարձել են գյուղի եկեղեցու տարբեր հարցերին: Եկեղեցու արձանագրությունների վերաբերյալ առանձին հոդված է հրատարակել միջնադարագետ-վիմագրագետ Հ. Մելքոնյանը, որ մանրամասն քննության է ենթարկել ոչ միայն եկեղեցու վիմագիր արձանագրությունների բովանդակությունը,

⁷¹ Հ. Մելքոնյան, XI դարի վիմագրեր Նոր Կյանք գյուղից//Լրաբեր հասարակական գիտությունների, 1983, թիվ 5, էջ 57:

⁷² Ղ. Ալիշան, Շիրակ. տեղագրություն պատկերացոյց, Վենետիկ-Ս. Ղազար, 1881, էջ 165:

⁷³ Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հատոր 2, Եր., 1948, էջ 203:

այլն պարզել, որ դրանցում հիշատակվում է գյուղի Շոթա անունը:⁷⁴ «Դիվան հայ վիմագրության» շարքի Շիրակի արձանագրություններին վերաբերող հատորում ևս այս մասին խոսվում է. «Գյուղի հին հայկական անունը եղել է Շոթա: Այդ անունը երկու անգամ հիշատակված է արձանագրությունների մեջ և անկասկած է: Շոթա գյուղը XI դարի առաջին տարիներին պատկանել է Հայոց կաթողիկոսարանին, և Սարգիս Սևանցի կաթողիկոսը 1001 թվականին թողել է գյուղից գանձվող շարիատ կոչվող հարկը և 1010 թվականին էլ ջրանցք է կառուցել, ապա նաև հողային վեճեր կարգավորել: Իսկ Գագիկ Ա Բագրատունի թագավորն էլ 1011 թվականին եկեղեցուն է նվիրել Ծրմբաքար կոչվող գյուղը, իսկ այդ անունով գյուղի հիշատակության սա միակ դեպքն է: Զարմանալի է, որ XI դարի առաջին երկու տասնամյակների այդ ծաղկուն վիճակից հետո գյուղը և եկեղեցին կորցրել են իրենց նշանակությունը. . . »:⁷⁵

Խորհրդային տարիներին եկեղեցին նախկին կարևորությունը չի ունեցել. «Մեր ժամը 7-րդ դարի վանք է, տեր էղնող չկա, մե հովանավորըմ չէղավ, օր սարքե: Սովետի ժամանակ ժամը կար, կրիշ չկար, վերջին նախագան կրիշ կապեց, վրեն խաչեր սարքեց: Պահեստը ժամից դուրս առանձին էր, ըդպես մնացել էր: Օր կրիշին խաչը դրին, ռայկումեն կանչել էին: Ըդիկ 60 քանի թվերին էր: Էն ժամանակ մարդիկ քուլլի էլ խաչ են պաշտե: Ես էլ եմ կնքված, էրեխա վախտս կնքել են, էն ժամանակ Լեննական կկնքեին: Կոմունիստներից շատերն էլ բերում կնունք էին անում, ես էլ եմ իմ էրեխեքիս կնքել, բերել եմ տերտերը, տունը կնքել է: Քավորն էլ մեր գյուղացի էր, հնից քավոր էր»:

Այսօր էլ, ըստ հետազոտության արդյունքների, եկեղեցին չի խաղում նախկին դերը: Ժամանակ առ ժամանակ այցելում են զբոսաշրջիկների խմբեր, տեղի են ունենում ժամերգություններ ու այլ կրոնական արարողություններ: Գյուղի մշակութային լանդշաֆտում, սակայն, եկեղեցին չունի այն դերը, որ կարող էր


⁷⁴ Հ. Մելքոնյան, XI դարի վիմագիր Նոր Կյանք գյուղից/Լրաբեր հասարակական գիտությունների, 1983, 5, էջ 57-67:

⁷⁵ Դիվան հայ վիմագրության, պրակ X. Շիրակի մարզ (կազմեց՝ Ս. Բարխուդարյան), Եր., 2017, էջ 82-87:

ունենալ որպես տարածքի հնագույն ու ճարտարապետական լուծումների տեսանկյունից հետաքրքիր կառույցներից մեկը: Ինչ կարողացանք պարզել հետազոտության ընթացքում, դուրս է նաև զբոսաշրջային հիմնական երթուղիներից: Այս դեպքում էլ առնչվում ենք մշակույթի ճիշտ քարտեզագրման ու ըստ այդմ մշակված ռազմավարության բացակայության խնդրին, քանի որ Նոր Կյանքը կարող է իրականում առաջարկել բազմաբաղադրիչ մի երթուղի՝ վաղ շրջանի հնագիտական հուշարձաններից մինչև միջնադարյան եկեղեցի, ավելի ուշ շրջանի մատուռներ, ջրաղացի տեղեր ու ձիթհանի մասին պատմություններ, խորհրդային մշակութային լանդշաֆտ, վերականգնվելու դեպքում՝ գորգագործության հետաքրքիր ավանդույթներ ու տեղական յուրօրինակ խոհանոց:

Գյուղական կյանքը, տնտեսությունը, առօրյան, համագործակցությունը

Ինչպես մնացած գյուղերում, Նոր Կյանքում նույնպես գյուղը հետպատերազմյան տասնամյակների փոփոխություններից առաջ հիմնականում եկեղեցու շուրջ էր: Այստեղ մինչ օրս պահպանվել են որոշ հին տներ: Գյուղացիները հիշում են նաև դրանց դասավորվածությունը, ընդհանուր երդիկները, տների՝ միմյանց հետ ունեցած կապը:





Հին տները եկեղեցու հարևանությամբ

«Մինչև 20-րդ դարի 60-ական թթ. հին գյուղի շատ տներ դեռևս քանդած չէին: . . . Մաչըթի – Նոր Կյանք գյուղը բաժանված է եղել 10 փողոց-թաղերի: Հիշում եմ՝ եկեղեցու հարավային կողմը, ներկայիս միջնակարգ դպրոցի տարածքում, կար մի թաղամաս, որի տները մեկ ամբողջություն էին կազմում: Այսպես, Քյալդազարենց տներից սկիզբ առնող շրջանաձև բնակարաններում ապրում էին . . . բազմաթիվ տոհմեր. . . , որոնց տների երդիկները մի ամբողջ հրապարակ էր: Մեկ-մեկու թիկունք տված այդ տներն այնքան հարմար էին ու մատչելի, որ չէիր էլ ուզում իրարից գատ-գատ տեսնել»:⁷⁶

Հետպատերազմյան տարիներին գյուղն արդեն փոխվեց: Հին տներին փոխարինեցին նորերը: Նոր կառուցված շենքերը ստվերեցին նաև եկեղեցին, իսկ գյուղը շարունակեց ծավալվել ու ընդարձակվել, քանի որ մարդիկ ցանկանում էին ավելի լավ ապրել, նոր լուսավոր տներ ունենալ: Մնացած գյուղերի նման Նոր Կյանքի

⁷⁶ Մ. Կնյազյան, նշվ. աշխ., էջ 25-26:

հարյուրամյա տներն էլ դատարկվեցին, սկսեցին ծառայել որպես գոմ, մարագ՝ աստիճանաբար քանդվելով:

Գյուղն ունեցել է նաև ձիթհաններ, որոնցից, ցավոք, այսօր գրեթե ոչինչ չի պահպանվել: Վարչական շենքի հարևանությամբ այսօր կարելի է տեսնել ձիթհաններից մեկի քարը միայն:



*Գյուղի ձիթհաններից մեկի քարը զբոսայգու ու գյուղապետարանի
դիմաց*

Մեծահասակները պահպանել են նաև աղոտ հիշողություններ ձիթհանների մասին. **«Ձիթյանք վերջը մեկը մնաց: Որպես շենք աշխատելով մեկն են տեսե: Հմի հեչ բան չի մնացե:** Ձիթյանքի քարը հմի գյուղապետարանի դեմը դրած է: Կտավատ շատ են ցանե, ուրուշ գյուղերից էլ են բերե: Կողքի գյուղերը իմ հիշելովս ձիթյանք չկար: Գետընփոր ձիթյանքներ են: Առաջ օր հարսանիք էնըմ էին, ձիթյանքը պար էին խաղըմ»: Ձիթհանի մասին մեկ այլ հիշողություն. **«Հերս ձիթհացն է աշխատե: Աղյանց ձիթհանքն էր, երկու հատ էր: Մեկը Աղյանց Դավիթինն էր, մեկն էլ Լոքոյենց Դավիթինը: Հերս Աղյանց ձիթհանը կաշխատե: Էն վախտ կտավատ կցանեին, ձեթ կհանեին: Հետո քանդեցին, տուն սարքեցին: Գերընդով կտավատը կքաղեին, բերեին զը կալը, հետո մաքրեին, կհանեին: Պապաս աշխատող էր: Էնքան ձեթ կբերեր օր: Աշխօրի դիմաց ձեթ կուտար: Էդ ձեթը կուտեինք՝ ճաշ-մաշ: Քարը մեծ քար էր»:**

Գյուղի տարածքի, գյուղական լանդշաֆտի փոփոխություններն այս տարիներին նման էին այլ գյուղերում արձանագրվող փոփոխություններին: Մեծահասակները լավ են հիշում այդ մասին, որովհետև իրենք էլ այդ փոփոխություններից շատերի մասնակիցն են: Խորհրդային, հատկապես հետպատերազմյան տարիներին գյուղում սարքում էին հիմնականում նոր տներ ու կոլտնտեսային տարբեր շենք-շինություններ, անասնագոմեր, պահեստներ, այլ շինություններ: Գյուղացիների հիշելով, դեռևս մինչև Հայրենական պատերազմը սկսել են նաև ակումբի շինարարությունը, որը շարունակվել է արդեն 1950-ական թթ.-ից:



Մշակույթի տունն այսօր այս տեսքն ունի

Այս տարիների կարևոր շինություններից էր նաև դպրոցը: Գյուղացիները այսօր էլ անթաքույց հպարտությամբ են հիշում գյուղի բաղնիքը, ուր գալիս էին նաև հարևան գյուղերից:

Նոր Կյանքում էլ, Լանջիկի նման, մինչև անկախացումը կոլտնտեսություն է գործել: Ցանել են հիմնականում ցորեն, գարի, եգիպտացորեն, ճակնդեղ: Յորենը աշնանացան է եղել: Գյուղացիների ասելով, այս հատվածում զարնանացան ցորենը ձեռնտու չէր: Բայց գարին եղել է ն՝ զարնանացան, ն՝ աշնանացան: Հողերի մեծ մասը ջրովի չի եղել: Կոլտնտեսության հիմնական խնդիրը գյուղացիների համար եղել է աշխօրում փողի քիչ լինելը, ինչի մասին այսօր էլ են հիշում ու պատմում. «..Աշխօրին կարագ կար, պանիր, ուրիշ բան, բայց փողը չնչին էր: Էղներ-չեղներ,

մեխանիզատորին 500 դրամ տալըմ էին փող, 3 կիլո էլ հաց: Տարի կար, 1000-ից ավել աշխօր եմ արել: Յօրենը վերջերս տրակտօրով, լաֆետով տարել եմ Ադրբեջան եմ ծախե, Նոյեմբերյանից էրթըմ էի, անցնըմ էի Ադրբեջան: Վախենալ չկար: Կողքի գյուղերը ադրբեջանցի ապրել են, կողքի գեղերը մեկըմ կար, ոչ է գնաց»: Գյուղում ջրովի են եղել միայն ճակնդեղի ու եգիպտացորենի դաշտերը: Եգիպտացորենը ցանել են հիմնականում որպես անասնակեր, իսկ ճակնդեղը հանձնել են:

Գյուղացու համար խորհրդային տարիներին կարևոր էր նաև տնամերձը, որի չափերը գյուղում բավականին մեծ էին՝ 2500քմ: Ե՛վ անհատները, ն՛ տնտեսությունը նաև բոստան են ունեցել: Մշակել են կաղամբ, կարտօֆիլ, գազար, վարունգ, պոմիդոր: Հատկապես շատ են կաղամբ ցանել, որ տվել են նաև որպես աշխօր: Մեծահասակների հիշելով, տնամերձից ստացված բերքի մի մասն օգտագործում էին տնտեսությունում, մի մասը վաճառում էին Գյումրու շուկայում, մանավանդ որ խորհրդային տարիներին շուկա հասնելը խնդիր չէր:



Տնամերձները գյուղում բավականին մեծ են

Գյուղացիների մի մասի հիշողությունները կապված են նաև կալերի հետ. «*Կալ ամեն մեկն իրա տան դուռը ունեք: Ամեն տունը: Գերեզմանների քովն էր շատը. կալ կար, մարագ կար: Եզները կոլխոզից բերըմ էին, կամ էին էնըմ: Մինչև 50-ը քանի*

թվերուն, օր միացան Վարդաքարի հետ, էդ ժամանակ եզով կամը կար: Կամի վրա կայնել են»:

Կոլտնտեսության կարևոր ճյուղերից մեկն էլ անասնապահությունն էր, պահել են և՛ մանր, և՛ խոշոր եղջերավոր անասուններ: Մնացած գյուղերի նման, Նոր Կյանքում էլ տասնյակ մարդիկ սարի մասին բազմաթիվ հիշողություններ ունեն: «Ֆերմայով սար գնացել ենք: Ես քառասուն տարի ֆերմա եմ աշխատե: Մանթաշ ենք գնացել, լավ արոտ էր: Հունիսի 4-ին յայլա պտի էրթայինք, սեպտեմբերը հլը չի էգել, մենք կիջնեինք, ջրերը ընդեղ սառնում էր: Մոզեքն էլ սար գուկային: Կթվորները իրգունառավոտ ավտոյով կերթայինք, կթեինք, գուկայինք: Սարի տները կարգին տուն էր, սենյակ, 4-5 հոգին՝ մե տեղ, 4 տուն սարքած կար: Ես էի, Հայկոն էր: Վարիչ ունեինք, հերս վարիչ էր, մերս էլ հետներս էր: Պատահում էր՝ մենք էլ էինք մնում... գողինքը տանում էինք, մնում էինք: Բայց օվ օր գեղը գործ ուներ, չէր մնում: Կաթը սարում էինք մշակում. շենք էինք շինել, ագրեգատը կար: Խնոցի կղարտրկեինք, օր 47 կիլո կեղներ, երկու հոգով ֆոռքցնեինք զը թևով: Կիթը, մշակելը, սաղը մեր վրա էր: Օր լցվեր զը, ֆուրդունջին՝ Ջմոյի Տիկը, գուկար, բերեր զը գեղ»:

Արհեստներն ու արհեստավորները

Գյուղում, ինչպես Հայաստանի բոլոր գյուղերում, հիշում ու պատմում են հայտնի արհեստավորների մասին, որոնց աշխատանքի արդյունք տարբեր իրերն ու առարկաները բավարարել են գյուղացիների կարիքները. «Ուստա Էնքա՛ն կար: Զոհրաբը՝ փետի ուստա, Լազրը, Դիլանի Նորոն: Դարբին, որը պետք է խոփ, երկաթ շիներ, Արոյի Զուրաբն էր, հերն էլ էր դարբին: Դարբնոցը ես կհիշեմ, բայց հմի քարուքանդ է եղել: Սովետի ժամանակ կար, ետև քուլլի քանդվավ»:

Քարի վարպետների մասին պատումները ևս կենսունակ են. այդ են վկայում նաև գյուղի գերեզմանոցում 20-րդ դարի տապանաքարերը, որոնք ևս պատմում են գյուղի փոփոխությունների ու ինքնության պատումներից:



Հետպատերազմյան տարիների արհեստագործական հետաքրքիր ավանդույթներից մեկը գորգագործությունն էր: Տարբեր գյուղերի կանայք ու աղջիկները գորգեր էին գործում, իրենց ասելով, «Արթիկի գորգարտել»-ի համար: Պահպանված տեղեկությունների համաձայն՝ «Արթիկի գորգարտելը» հիմնվել է 1954թ.: Մինչ այդ քաղաքում ու գյուղերում եղել է հիմնականում տնայնագործական

գորգագործություն, հիմնված դեռևս 1926թվականին, 20 մասնագետի շնորհիվ, որոնք այդ հմտությունները յուրացրել էին Լենինականում: Նոր Կյանքում գորգարտելի համար պատվերներ կատարել են բավականին մեծ թվով երիտասարդ կանայք: «Գյուղը խալի գործել ենք, օր տանըմ էինք, սաղ կայնըմ սեյր էին էնըմ: Մեր հարևանը Արթիկից բերավ գործեց, ես էլ սորվա: Արթիկ գորգարտել կար, մեր գեղացին էլ ըղտեղաց մեծն էր՝ Մլեմի Գառնիկը: Թելը կուտային, շաբլոնը կուտային, կիլոյով կուտային, կիլոյով էլ կընդունեին: «Արագած», «Այգեստան» անուններով գորգեր գործել ենք, «Արթիկ» գործել ենք: Էն վախտ ջահել էինք: Ահագին գործել ենք: Մեր գեղից շատ կային գործող: Ետն գեղը արտել բացվավ, արդեն գնացինք շենքի մեջը: Հաստոցն էլ Արթիկը կուտար, դազգեն: Մկրատ, դանակ, կուտուտ, մեկ էլ շաբլոնը կուղային: Գյուղը մե գորգարտելըմ էր: 1950-ական թթ. ենք գործել երևի: Գորգարտելը մինչև 1960-ական թթ. կար: Ամեն գորգի դիմաց փող կուտային, քառակուսով էր: 35, 45 մանեթ կար մինչև 1 մետրի համար: Գյուղում գործարան չկար, անասնապահություն էր, կերթային Արթիկ կաշխատեին: Մինչև հմի էլ Արթիկ աշխատողներ կան: Էն ժամանակ երևի մե 100 հոգի Արթիկ կաշխատե: Կոլխոզի աշխատանքը սեզոնային էր. ճակնդեղ, ցորեն: Ես կոմբայնավար եմ էղել: Ընձեն առաջ էլի է էղե»:

Հետաքրքիր է նաև «Արթիկ» գորգի ստեղծման պատմությունը, որ ներկայացվել է «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրի համարներից մեկում. «Տարիներ առաջ էր: Արթիկի գորգագործուհիները որոշեցին իրենց քաղաքի անունով գորգ ունենալ, բայց ինչպե՞ս, ինչպիսի՞ն: Արթիկում կային հին գորգեր, որոնք Արևմտյան Հայաստանից հանգրվանել էին այստեղ՝ էլ երբեք չպանդխտելու համար: Մեկն առաջարկեց լավ ուսումնասիրել և դրանց մոտիվներով հյուսել նոր գորգ, որը և կկոչվեր «Արթիկ»: Այդպես էլ արին: Նոր գորգը ոչ միայն ամփոփեց մայր գորգերի ոգին, այլև մի նոր հմայք ուներ, ինչպես ամեն նոր ծնվող բան: Հեշտ չէր, մատների հունար էր պետք, համբերություն ու սեր, սեր՝ անպայման»:⁷⁷

⁷⁷ Հայաստանի աշխատավորուհի, 1977, թիվ 10, էջ 25-26:

Ներկայումս գյուղի ավանդական արհեստագործական ավանդույթների փոխանցումն ընդհատված է, թեպետ դեռևս հնարավոր է մանրամասն գրանցել և փորձել վերականգնել տեղի ավանդույթներն ու արհեստագործական պատմությունները: Փորձառություններից մեկը կարող է լինել հենց «Արթիկ» գորգի վերականգնումն ու տարածումը կրթական համակարգի, տարբեր խմբակների միջոցով: Գյուղում դեռ կան արտելի համար գորգեր գործած կանայք ու այս փորձառությունը կարելի է դիտարկել համայնքային համախմբման, տեղական ավանդույթի փոխանցման, միջսերնդային ներդաշնակ հարաբերությունների ձևավորման ու պահպանության համատեքստում:


Պեմզաշեն գյուղի մշակութային լանդշաֆտ

Պեմզաշենը նախկինում հայտնի է եղել Կարմիրքենդ, Մախմուջու/գ, Մահմուդջուկ, Մահմուտճուխ, Մայմուջուղ և այլ անվանումներով: Բնակիչների նախնիների մի մասը այստեղ է եկել Արևմտյան Հայաստանից՝ Ալաշկերտից, Բասենից, Մուշից և այլ տեղերից:⁷⁸

19-րդ դարի վերաբերյալ վիճակագրական տեղեկությունները ցույց են տալիս, որ ինչպես մնացած բնակավայրերի, այնպես էլ Պեմզաշենի բնակչությունը համալրվել է մի քանի փուլով: Այսպես, Փամբակ-Շորագյալի ուղեմասի Շորագյալի տեղամասի 1832թ. ցուցակագրում Մահմուդջուղ-Պեմզաշենն ունի 60 ընտանիք, 212 տղամարդ, 137 կին, ընդամենը՝ 349 բնակիչ, հայ առաքելականներ:⁷⁹ 1827-31 թթ. համար բերված մեկ այլ աղյուսակում նշվում է, որ այս ընտանիքները տեղափոխվել են Լոռուց,

⁷⁸ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Եր., հ. 4, ցուցակ 1, էջ 324: Մեծահասակներից մի քանիսը նշում էին, որ իրենց տոհմը, օրինակ, Մուշից է եկել, տալով նաև գյուղերի կոնկրետ անուններ:

⁷⁹ Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XX դարասկիզբ), (փաստաթղթերի և նյութերի ժողովածու՝ աշխատասիրությամբ Ա. Հայրապետյանի), Եր., 2011, էջ 21:



Կարսից, Բասենից և Ալաշկերտից:⁸⁰ Բնակչության նույն թվաքանակը կրկնվում է նաև 1842թ. համար:⁸¹ Նույն ժամանակի համար Ա. Հայրապետյանը առանձնացնում է նաև բնակչության համալրման հետևյալ միտումը. *«Պարսկահպատակ հայերի հետ միաժամանակ կամ գուցե մի փոքր ավելի շուտ՝ դեռևս մինչև ռուս-պարսկական պատերազմի ավարտը գաղթել և Շորագյալի գավառի. . . . Մահմուդջուղ (Պեմզաշեն) և այլ գյուղերում են հաստատվել նաև որոշ՝ հավանաբար ոչ մեծ թվով գաղթականներ Երևանից, Ապարանից, Լոռուց, Սարդարաբադից ու Վրաստանից. . . . Մահմուդջուղում հաստատվել են Լոռուց տեղափոխվածները»:*⁸² Այս տասնամյակներում բնակչության այլ խմբերի՝ գյուղում հաստատվելու մասին կան բազմաթիվ այլ տեղեկություններ ևս. *«Մնացած 19 գյուղերում (այդ թվում՝ Մահմուդջուղում-հեղ.) բայազեդցիները տեղափոխվել էին բնիկ շորագյալցիների, պարսկահայերի ու կարսեցիների հետ համատեղ, և այդ պատճառով էլ վերջիններիս իրական թիվն այդ գյուղերում պարզելն անհնար է»:*⁸³

Փաստորեն, ինչպես Նոր Կյանքի դեպքում է, Պեմզաշենում էլ արդեն 19-րդ դարի սկզբին առկա էին բնակչության տարբեր խմբեր՝ տեղացիներ, պարսկահայեր, կարսեցիներ, Լոռուց տեղափոխվածներ, որոնք էլ հետագա տասնամյակներում կառուցել են տարածքի ամենախոշոր բնակավայրերից մեկը:

Այսօր Պեմզաշենն ունի 3564 բնակչություն:

ՀՀ Կառավարության որոշմամբ, հաստատված հուշարձանների ցանկն այսպիսին է.

⁸⁰ Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XX դարասկիզբ), (փաստաթղթերի և նյութերի ժողովածու՝ աշխատասիրությամբ Ա. Հայրապետյանի), Եր., 2011, էջ 30:

⁸¹ Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XX դարասկիզբ), էջ 32:

⁸² Ա. Հայրապետյան, Արևելյան Շիրակը, էջ 92:

⁸³ Ա. Հայրապետյան, Արևելյան Շիրակը, էջ 107:

7.93 Պեմզաշեն գյուղ

1	2	3	4	5	6	7	8	9
1				ԱՍՐՈՑ	Ք.ա. 2-1 հազ.	2 կմ հվ-ան, Լեռնակերտ տանող ճանապարհի ծախս կողմում	<	
	1.1			Բնակատեղի	Ք.ա. 2-1 հազ.	ամրոցի մոտ	<	
	1.2			Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ.	ամրոցի շրջակայքում	<	
2				ԱՍՐՈՑ	միջնադար	հվ-ան կողմում, բլրի վրա	<	նշմարվում են հետքերը
	2.1			Չերեզմանոց	13-19 դդ.	բլրի գագաթին	<	
		2.1.1		Մատուռ Սբ. Սարգիս	17 դ.	գերեզմանոցում	<	
			2.1.1.1	Խաչքար	17 դ.	մատուռում	<	բեկոր
3				Չերեզմանոց	19-20 դդ.	հվ մասում	<	
4				ՉՅՈՒՂԱՏԵՂԻ	10-18 դդ.	1.5 կմ հվ-ամ	<	
	4.1			Վանական համալիր Սբ. Առաքելոց	10-18 դդ.	գյուղատեղիում	<	
		4.1.1		Չերեզմանոց	11-13 դդ.	համալիրում	<	
			4.1.1.1	Խաչքար Աբղղարիբ Պաշկունու	1036 թ.	վանքից ամ	<	Վահրամ Պաշկունու եղբոր, եռաստիճան պատվանդանով, կառուցել է Սարգիս վարդապետը
		4.1.2		Եկեղեցի	11 դ.	համալիրում	<	խաչածն, կենտրոնագմբեթ սրահ
		4.1.3		Զանգակատուն	11-12 դդ.	Եկեղեցու ամ կողմում	<	ավերված
		4.1.4		Սրահ	11-12 դդ.	կից է Եկեղեցուն ամ-ից	<	ավերված
5				ԴԱՄԲԱՐԱՆԱՐԱՇ	Ք.ա. 2 հազ.	1.5 կմ հվ-ան	<	
6				ԴԱՄԲԱՐԱՆԱՐԱՇ	Ք.ա. 2-1 հազ.	1.5 կմ ամ	<	
7				ԴԱՄԲԱՐԱՆԱՐԱՇ	Ք.ա. 2-1 հազ.	2 կմ ամ	<	
8				ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ «ՊԵՄԶԱՇԵՆ»	5-7 դդ.	գյուղի մեջ	<	
	8.1			Եկեղեցի	5 դ.	հուշարձանախմբի հս կողմում	<	միանավ դահլիճ
		8.1.2		Խաչքար	9-10 դդ.	Եկեղեցու պատի մեջ	<	
	8.2			Եկեղեցի	7 դ.	հուշարձանախմբի հվ կողմում	<	միանավ սրահ
	8.3			Եկեղեցի	7 դ.	երկու բազիլիկ եկեղեցիների միջև	<	խաչածն, եռախորան, կենտրոնագմբեթ
	8.4			Խաչքար	9-11 դդ.		<	բեկոր
	8.5			Խաչքար	10-11 դդ.		<	բեկոր
	8.6			Խաչքար	10-11 դդ.		<	բեկոր
	8.7			Խաչքար	10-11 դդ.		<	արձանագիր
	8.8			Խաչքար	11-12 դդ.		<	
	8.9			Խաչքար	11-12 դդ.		<	
	8.10			Խաչքար	11-12 դդ.		<	
	8.11			Խաչքար	11-12 դդ.		<	
	8.12			Խաչքար	11-12 դդ.		<	ջարդված
	8.13			Խաչքար	11-12 դդ.		<	ջարդված
	8.14			Խաչքար	12-13 դդ.		<	բեկոր
	8.15			Հենապատ	19-20 դդ.	համալիրի շուրջը	S	ջարդվել է 19 դ. համալիրի ամ մասում կառուցված եկեղեցու բարերով, եկեղեցին բանդվել և հեռացվել է 20 դ.-ում
9				ԵԿԵՂԵՑԻ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ (ԱՆԱՊԱՏ)	17 դ.	1.5 կմ հվ-ամ, Լեռնակերտի ճանապարհին, Մակարավանքից ոչ հեռու, ծորի մեջ	<	միանավ, թաղածածկ
10				ՀՈՒՅԱՐԶԱՆ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՍՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1973 թ.	Մարալիկ-Պեմզաշեն ճանապարհի ծախս եզրին	S	
11				ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՄԱԿԱՐԱՎԱՆՔ	11 դ.	1.5 կմ հվ-ամ, Լեռնակերտ տանող ճանապարհի ծախս եզրին	<	
	11.1			Չերեզմանոց	10-17 դդ.	Եկեղեցու շրջակայքում	<	
		11.2		Եկեղեցի Սբ. Սիոն	1001 թ.		<	կառուցել է ոմն Սահակ
		11.2.1		Խաչքար	11-12 դդ.	Եկեղեցու մեջ	<	
		11.2.2		Խաչքար	12-13 դդ.	Եկեղեցու մեջ	<	
		11.2.3		Խաչքար	12-13 դդ.	Եկեղեցու հս պատի մեջ	<	
	11.3			Ժամատուն	12-13 դդ.		<	
12				ՔԱՐԱՅՐ-ՎԱՍՏԱՐԱՆ	10 դ.	Սբ. Աստվածածին եկեղեցուց 70 մ ան	<	ժայռափոր

Տեսնում ենք, որ գյուղի ու հարակից տարածքները բավականին հարուստ են հնագիտական տարբեր հուշարձաններով: Պեմզաշենը հնագույն բնակավայր է.

գյուղի շրջակայքում կան բազմաթիվ հեթանոսական դամբարաններ, իսկ հարավ-արևելքում՝ բլրի վրա, ամրոց: Հարուստ է նաև միջնադարյան հուշարձաններով:

Եկեղեցիները գտնվում են գյուղի տարածքում կամ ոչ շատ մեծ հեռավորության վրա:

Գյուղամիջի եկեղեցի. ներքուստ և արտաքուստ խաչաձև գմբեթավոր եկեղեցի է, իր ներքին բաժանումներով և ձևավորմամբ՝ եզակի: Ճարտարապետական բոլոր հատկանիշները (ատամնավոր քիվ, բուսական ու երկրաչափական զարդամոտիվներով լուսամուտի պսակներ, շրջանի մեջ ներառված հավասարաթև խաչ և այլն), վկայում են, որ շինված է VII դարից առաջ: Արևմտյան մուտքի ճակատը զարդարված է բարձրաքանդակով, որի վրա պատկերված է Տիրամայրը՝ մանուկ Հիսուսը գրկին և նրանց հովանավորող հրեշտակներ: Եկեղեցու որմերին պահպանվել են վարպետների բազմաթիվ նշաններ: Հետագայում կցել են նաև մի այլ եկեղեցի, այժմ բոլոր կողմերից շրջափակված է բնակելի շենքերով և անհարմար է ուսումնասիրելու համար: Եկեղեցին հիշատակվում է Ս. Առաքելոց անունով:



3

Եկեղեցին այսօր



Եկեղեցու շուրջ տարբեր զարդաքանդորներ



Մակարավանք

Մակարավանք. գտնվում է գյուղից հարավ, գյուղից դեպի Լեռնակերտ գնալու ճանապարհի աջ հատվածում, ճանապարհից տեսանելի, մոտ երկու կիլոմետր հեռու, եղել է գմբեթավոր եկեղեցի՝ շինված 1001թ.: Հետագայում արևմտյան կողմում ավելացվել է գավիթ, այժմ երկուսն էլ կիսավեր են:

Զորավորաց եկեղեցի. գտնվում է գյուղից հարավ-արևմուտք՝ մոտ երկու կիլոմետր հեռու, կենտրոնագմբեթ հորինվածքով շենք է: Տեսական ժամանակ եկեղեցու անունը անհայտ է մնացել: Պարզվում է՝ կոչվել է Զորավոր-Զորավորաց: Գրականության մեջ համարվել է XII-XIII դդ. շենք: Հնում, ըստ երևույթին, եկեղեցու մոտ եղել է փոքր գյուղ, որից մնացել են տնատեղերի և բակերի մնացորդներ: Եկեղեցու մոտ եղել է նաև մի բարձր աշտարակ՝ ներքին աստիճաններով, իսկ 200 մ դեպի արևմուտք մնում են մի մեծ որմնափակ խաչքարի պատվանդանն ու խաչի բեկորը: Ըստ արձանագրության՝ այն կանգնեցված է 1036թ., ի բարեխոսություն Ապլդարիք իշխանի, որը բազմաթիվ նվերներով պայծառացրել է եկեղեցին»:⁸⁴



⁸⁴ Դիվան հայ վիմագրության, պրակ X, Շիրակի մարզ (կազմեց Ս. Բարխուդարյան), էջ 33: Պեմզաշենի եկեղեցիների արձանագրություններին նվիրված հոդվածներ է հրատարակել նաև Ալ. Մանուչարյանը: Տես՝ Ա. Մանուչարյան, Պեմզաշենի չհրատարակված մի արձանագրություն//Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի տեղեկագիր, Հասարակական գիտություններ, 1965, թիվ 5, էջ 85-89; Նույնի՝ Շիրակի չհրապարակված շինարարական արձանագրություններ//Լրաբեր հասարակական գիտությունների, 1967, թիվ 2, էջ 78-84:




Վերջին տարիներին «Զորի եկեղեցու» հարևանությամբ նաև տաղավար է կառուցվել, բարեկարգվել են դեպի եկեղեցի տանող աստիճանները:



Զորում՝ եկեղեցուց փոքր-ինչ հեռու, պահպանվել են քարայրներ, որոնք ենթադրաբար միջին դարերում ծառայել են ճգնափորներին:



Քարայրներից մեկը



Ծակ քարը դիմացի լանջին

Եկեղեցիներից բացի, գյուղում եղել ու մինչ օրս պահպանվել են բազմաթիվ մատուռներ: Դրանցից շատերը հին տների տեղում են կամ կառուցվել են դրանց հարևանությամբ, մի քանիսը գյուղից դուրս են: Այսօր էլ մեծահասակներն ու երիտասարդները այցելում են այդ մատուռները, մոմ վառում, երազանք պահում ու շարունակում հավատալ, որ դրանք օգնում են երազանքների իրականացմանը:



Մատուռներից մեկը տան բակում

Խորհրդային տարիներին Պեմգաշենի զարգացումը տեղի է ունեցել արդյունաբերական, հիմնականում հանքարդյունահանման բաղադրիչի շուրջ, Զարգացման համար կարևորագույն նշանակություն են ունեցել տուֆի և պեմգայի հանքավայրերը: Հայաստանը նախկին Խորհրդային Միությունում առանձնանում էր տարբեր տիպի և գույնի հրաբխային տուֆերի պաշարներով, իսկ հանրապետության տարածքում տուֆաքարի երկրաբանական պաշարները գնահատվում են ավելի քան 2,3 միլիարդ մ³: Նախկին Խորհրդային Միության տուֆաքարի հետազոտված պաշարների ավելի քան 90 տոկոսը գտնվում էր Հայկական ԽՍՀ տարածքում, ընդ որում այստեղ հայտնաբերվել են բոլոր գույների ու երանգների տուֆաքարեր:⁸⁵ Հայաստանում բազմազան են նաև պեմգայի և պեռլիտի կիրառման բնագավառները: Պեմգան հրաբխային ծագում ունեցող թթվակայուն սրսուռ, շուտ մանրացող, ծակոտկեն, փխրուն ապար է, որը բաղկացած է հրաբխային ապակուց: Հայտնի են անիական տիպի և լիթոիդային պեմգաներ:⁸⁶

Տուֆերի հարուստ պաշարները մեծ հնարավորությունն են տվել Հայաստանին դրանց արդյունահանման համար: Հայաստանյան հրաբխային տուֆերը բաժանվում են հինգ հիմնական տիպի՝ Արթիկի, Երևանյան, անիական, Բյուրականի և ֆելզիտային: Արթիկի տիպի տուֆերի հանքավայրերը տարածված են Արթիկի, Տուֆաշենի, Զարինջ-Չիթհանքովի, Կաթնաղբյուրի, Մարալիկի և Մաստարա-Սառնաղբյուրի տարածքներում:⁸⁷ Խորհրդային Հայաստանում տուֆ արդյունահանող խոշորագույն ձեռնարկությունը «Արթիկտուֆ»-ն էր, որը կազմավորվել էր դեռևս 1928թ.: Հետաքրքիր է, որ չնայած ահռելի պաշարներին, մինչև խորհրդային կարգերի հաստատումը տուֆը սահմանափակ կիրառություն ուներ՝ առաջին հերթին տեխնոլոգիական հնարավորություններով թելադրված: Արթիկի տուֆաքարն առաջին անգամ Արթիկից դուրս կիրառվել է Լենինականում: Դա սկսվել է 1927 թվականին,

⁸⁵ Ս. Մելքումյան, Քարը մեր հարստությունն է, Եր., 1985, էջ 22:

⁸⁶ Նույն տեղում, էջ 34:

⁸⁷ Նույն տեղում, էջ 72:

երբ երկրաշարժից խիստ տուժած Լենինականում ճարտարապետ Դ. Չիսլիսի նախաձեռնությամբ կառուցվեց փորձնական բնակելի շենք:⁸⁸

Խորհրդային տարիներին Շիրակի տնտեսական շրջանում տուֆաքարի արդյունահանմամբ աչքի էին ընկնում նաև Պեմզաշենի քաղհանքվարչությունը,



Մարալիկի ու Լենինականի շինանյութերի կոմբինատները:

Պեմզաշենի քաղվարչությունը կազմակերպվել է 1967թ. «Արթիկտուֆ» նախկին կոմբինատի հանքավայրերի մի մասի բազայի վրա: Մասնավորապես, Պեմզաշենի հանքվարչությունը տուֆաքար է արդյունահանել Պեմզաշենի և Տուֆաշենի հանքավայրերում:⁸⁹ Պեմզաշեն եկող երկաթգիծը, որ կառուցվել էր դեռևս 1920-ական թթ., ապահովում էր արդյունահանված հանքաքարի արագ տեղափոխությանը:

Պեմզաշենի քաղհանքվարչությունը միայն տնտեսական կարևորություն չէ, որ ուներ: Այն նպաստում էր ավանի ենթակառուցվածքների արագ զարգացմանը: Հենց այս շրջանում ու վարչության գոյությամբ պայմանավորված՝ հիմնվեց բանավանը՝ «պասյոլոկը», բազմաբնակարան շենքերով ու անհրաժեշտ մնացած ենթակառուցվածքներով, որտեղ որպես բանվորական աշխատուժ տեղափոխվեցին բազմաթիվ հայրենադարձներ, ռուսներ, Խորհրդային Միության այլ երկրներից աշխատողներ՝ դարձնելով Պեմզաշենի այս տարածքը մշակութային համագործակցության տարածք: Հետխորհրդային շրջանում այս բանավանը կորցրեց աշխուժությունը, այստեղ բանվորների համար կառուցված մշակույթի ակումբը սեփականաշնորհվեց, և տարածքում մնաց միայն «խեղճացած» խորհրդային զինվորի հուշարձանը՝ անխնամ և աղբով շրջապատված:

⁸⁸ Նույն տեղում, էջ 78:

⁸⁹ Նույն տեղում, էջ 84:



Այս տարիներին կառուցված շենքերից մեկը

1950-ական թթ. Խորհրդային Միությունում շինանյութերի տեխնոլոգիայով զբաղվող և տնտեսական տեսակետից արդյունավետ շինանյութի արտադրության բնագավառի մասնագետներն սկսեցին մեծ հետաքրքրություն ցուցաբերել հրաբխային խարամների նկատմամբ: Հայաստանում առկա էին և են հրաբխային խարամների, պեմզայի և պեռլիտի լուրջ պաշարներ: Խորհրդային տարիներին Արթիկի շրջանում համեմատաբար մեծ քանակությամբ լցանյութ է արդյունահանվել: Այստեղ նշանավոր են հատկապես Հառիճի, Պեմզաշենի, Նահապետավանի, Բոլորասարի հանքավայրերը: Միայն առաջին երկու հանքավայրում հրաբխային խարամի պաշարները կազմում էին շուրջ 15 մլն խմ: Նույն տարիներին բավականին ակտիվ արդյունահանվում էին նաև պեմզայի պաշարները, որը հրաբխային ժայթքման արդյունք է: Գործնական նշանակության տեսանկյունից Հայաստանում կարևոր էին հատկապես Անիի ու Պեմզաշենի հանքավայրերը:⁹⁰ Անիի տիպի պեմզայի

⁹⁰ Նույն տեղում, էջ 158-160:

արդյունաբերական նշանակություն ունեցող հանքավայրերը Խորհրդային Հայաստանում երկուսն էին՝ Անիի և Պեմզաշենի հանքավայրերը:

Պեմզաշենն այսօր, որքան էլ տաօրինակ հնչի, առանց պեմզայի է, քանի որ պեմզայի հանքավայրը չի սեփականաշնորհվել, այլևս արդյունահանում տեղի չի ունենում: Խորհրդային պլանային և ցանցային տնտեսության պայմաններում մատակարարման մշակված ճանապարհներով դրա արդյունահանումը ձեռնտու էր համարվում, մինչդեռ այսօր հաղորդակցության փակ համակարգերի, տնտեսական կապերի բացակայության, արդյունաբերական թույլ զարգացման պայմաններում Պեմզաշենի պեմզայի հանքավայրը անգործության է մատնված արդեն տասնամյակներ: Պեմզայից ստացված 1-ին կարգի շինանյութը կիրառվում է ֆիլտրացման, կառուցապատման աշխատանքներում, քիմիական արդյունաբերության մեջ:



Պեմզաշենի պեմզայի հանքավայրը

Գյուղի տարեցները հիշում են առօրյայում նաև պեմզայի կիրառման պրակտիկաները՝ որպես սպասքը, կաթսաները մաքրող նյութ, կամ ոտքերի կոշտուկները հեռացնելու միջոց. «հերս 1932թ. պեմզան տանում էր Արթիկ՝ կտորներով ծախելու, կանայք դա առնում էին կաթսաները մաքրելու համար»:




Պեմզայի կիրառման ավանդույթները կապվում են նաև տարածքի պատմական ժառանգության և հուշարձանների հետ, քանի որ տարածքի բոլոր եկեղեցիների շինարարության մեջ կիրառված է պեմզաքար՝ կրաքարի հետ խառնված:

Չնայած արդյունաբերության բավականին արագ զարգացմանը՝ գյուղը երկար ժամանակ պահպանել է նաև իր ավանդականությունը: Հին թաղամասը, որտեղ դեռևս շատ լավ պահպանված տներ կան, գյուղի ներկայիս կենտրոնից փոքր-ինչ վերև է: Մեծահասակները հիշում ու ներկայացնում են իրենց կյանքը հին գերանածածկ տներում, մի քանիսը նույնիսկ այդտեղ են ծնվել:



Հին տներից մեկի ծածկը





Այս մասում մի ամբողջ համալիր է եղել



Այս շենքը նման է միջնադարյան իջևանատների Ջարդանախշերով քարը



Բավականին լավ պահպանված երդիկը

Պեմզաշենի հին տները ուսումնասիրված համայնքների տներից տարբերվում էին մի կողմից՝ տուֆի առատությամբ, մյուս կողմից՝ տուֆից դեկորների գեղեկությամբ։ Մի քանի տներում լուսանկարված օջախները կարելի է, իրոք, արվեստի գործեր համարել։



Օջախ-կրակարանը հին տներից մեկում



Հետպատերազմյան տարիներին, ինչպես մնացած բնակավայրերում, Պեմգաշենում էլ ակտիվ փոփոխություններ էին սկսվել: Տարբերությունն այն էր, որ արդյունաբերության զարգացմամբ, այստեղ փոփոխությունները ոչ միայն արագ էին, այլև ավելի մասշտաբային: Կառուցվում էին նոր շենք-շինություններ, գրասենյակներ: Ինչպես մյուս բնակավայրերում, այստեղ ևս կառուցվեց Հայրենական պատերազմում զոհվածների հուշահամալիր, որը, սակայն, գյուղացիների պատմելով, այնքան էլ չսիրվեց, քանի որ խորհրդային զինվորը «խեղճ» տեսք ուներ:



Պատերազմում զոհվածների հուշարձանը

Կառուցվեց, վերջին տարիներին նաև բարեկարգվեց գյուղի զբոսայգին, որը այսօր տարվա որոշ ամիսների դառնում է երիտասարդների ու մեծահասակ տղամարդկանց հավաքատեղի, որտեղ զրուցում են, սեղանի խաղեր խաղում: Ընդ որում, զբոսայգին կառուցվել է գյուղի հին տների թաղամասերի տարածքում, որի արդյունքում քանդվել են հին տները, և տուժել է պատմական ժառանգության պահպանությունը: «Զբոսայգին՝ որպես խորհրդային լույսն ընդդեմ խավարի» գաղափարաբանության դրսևորում, կառուցվել է եկեղեցու դիմաց՝ որպես նոր կարգերի հաղթանակի, հանրային կյանքի ջատագովության տարածք, ինչպես ընդունված է համարել հետազոտական գրականության մեջ՝ «կանաչ գաղափարախոսական համալսարան», որտեղ պիտի ընթանար կոմունիզմի և խորհրդային կարգերի պրոպագանդան:



Զբոսայգին այս տեսքն ունի

Պեմզաշենում միայն հանքվարչությունը չէ, որ եղանակ էր ստեղծում: Այստեղ գործում էին այլ հիմնարկ-ձեռնարկություններ ևս՝ Կարի ֆաբրիկան, որ նորածինի հագուստ էր արտադրում, հետո սկսեց նաև Wrangler ջինսից անդրավարտիքներ կարել, Հիդրոսարքերի գործարանը, Կոմունալ տնտեսությունը: Սրանց կողքին գործում էր նաև խորհրդային տնտեսությունը, որը, սակայն, իր կարևորությամբ զիջում էր մնացած հիմնարկ-ձեռնարկություններին: Պեմզաշենի երբեմնի արդյունաբերական ժառանգության ցուցադրության համար հետաքրքիր կլինի փորձել գտնել Կարի ֆաբրիկայում արտադրված մանկական հագուստի, ջինսե տաբատների, ինչպես նաև մյուս ձեռնարկությունների արտադրանքի նմուշներ՝ գտնելով դրանց ներկայացման տարբեր ձևաչափեր:

Պեմզաշենում, ձեռնարկություններով պայմանավորված, կենցաղն էլ ժամանակի ընթացքում աստիճանաբար մոտենում էր քաղաքայինին, իսկ «պոսյոլոկում» մարդիկ, գյուղատնտեսական զբաղմունքներից օտարված, ապրում էին բազմաբնակարան շենքերում,

Ավանի ձեռնարկություններում աշխատում էին հարյուրավոր կանայք ու տղամարդիկ: Այստեղ, մեծահասակների հիշելով, աշխատողներ է ունեցել նաև Արթիկի գորգագործական արտելը: Ինչպես մնացած վայրերում, այստեղ էլ կանայք գորգը տներում էին գործում ու հանձնում արտելին: Պատահական չէ, որ այսօր շատերը երանությամբ են հիշում խորհրդային շրջանը, նշում, որ այն տարիներին գյուղատնտեսությունն էլ լավ վիճակում էր, քանի որ ոռոգման ջուր կար:

Հետխորհրդային շրջանում Պեմզաշենի հիմնական խնդիրը արդյունաբերական ձեռնարկությունների անգործությունն է կամ սահմանափակ ծավալներով աշխատելը: Որպես հետևանք, ինչպես մնացած բնակավայրերում, այստեղ էլ հիմնական այլընտրանքը դարձել է արտագնացությունը, որից ստացվող եկամուտներն են ապահովում բազմաթիվ ընտանիքների հիմնական եկամուտը:

Մշակութային լանդշաֆտը, ինչպես ցույց տվեց հետազոտությունը, ճիշտ քարտեզագրման ու հանրայնացման դեպքում կարող է դառնալ համայնքի

զարգացման ծրագրի կրեատիվ բաղադրիչ, սակայն այն բավարար չափով ուսումնասիրված ու արժեքավորված չէ: Խոսքն այս դեպքում ոչ միայն նախաքրիստոնեական ու քրիստոնեական շրջանի հուշարձանների մասին է: Խորհրդային շրջանի մշակութային լանդշաֆտը նույնպես կարող է նպաստել համայնքում տնտեսության որոշակի ակտիվացմանը, մշակութային ժառանգության նորովի ներկայացմանը՝ հաշվի առնելով աշխարհում խորհրդային տարածքների հանդեպ գիտական և հասարակական կայուն հետաքրքրությունը, հատկապես խորհրդային «արդյունաբերական ավերակների» նկատմամբ հետաքրքրությունը:

Հետազոտությունը ցույց տվեց, որ Պեմգաշենի համար որպես մշակութային յուրօրինակ այցեքարտ կարող է հանդես քարամշակությունը, տվյալ դեպքում՝ տուֆի մշակությունը, հատկապես որ գյուղում նախկինում եղել են ու ներկայումս էլ կան մեծ թվով հմուտ ու ճանաչված քարագործ վարպետներ: Այս ուղղությամբ առաջին ներկայացուցչական քայլն արվել է գործարար Հովհաննես Մարգարյանի կողմից ստեղծված ‘Stone art’-ը՝ «Քարերի արվեստ» հյուրաստունը՝ տեղական տուֆի և ավանդույթների կոնցեպտով կառուցված: Տարածքը կարող է դիտարկվել որպես տեղական քարագործության և քարի արհեստների համար ցուցադրության վայր, տարբեր հանդիպումների, ուսուցումների միջավայր: Հովհաննեսն արդեն ունի զբոսաշրջային փորձառություն, բացի սրանից՝ «Իմ Հայաստան» մշակութային զբոսաշրջության ծրագրի հետ մշակված առաջարկ՝ տուֆի գույները, երբ այցելուները կարողանում էին հավաքել տուֆե տարբեր գունավորումներով խճանկարներ և ունենալ իրենց հետ որպես հուշանվեր: Պեմգայի ներառման առաջարկները ևս կօգնեն բազմազան դարձելու և նորացնելու գյուղի մշակութային առաջարկը:





Գյուղում քանդակագործների, նկարիչների, տարբեր քարագործ վարպետների ներկայությունը հնարավորություն է տալիս ձևավորելու կամ խթանելու ստեղծարար միջավայր և արվեստային/արհեստային ծրագրեր՝ նրանց տեսանելի դարձնելու, պատմությունները կիսելու և բնակավայրն այս ուղղությամբ դիրքավորելու համար: «Տուֆի ուղին» կարող է դառնալ բնակավայրի մշակութային ու լայն առումով տնտեսական զարգացման կարևոր ռեսուրսներից մեկը:

Ձիթհանքով գյուղի մշակութային լանդշաֆտ

Ձիթհանքովը նախկինում հայտնի է եղել Բազարխանա, Բազարխանե, Բազարկանա, Բազրխան, Օլուխլու ու այլ անվանումներով: Ձիթհանքով է վերանվանվել 1966թ. հունվարի 1-ին:⁹¹

Ձիթհանքովը հետազոտված բնակավայրերի շարքում առանձնանում է նրանով, որ բնակչության մի մասը հայ կաթոլիկ է, մեծ մասը՝ առաքելական հայ:

Պ. Հակոբյանը Ձիթհանքովի կաթոլիկ հայերի մասին գրում է. «Բնակչության երկու-երրորդը Հայ Առաքելական Եկեղեցու զաւակներ են, միայն մէկ-երրորդը՝ հայ կաթոլիկներ: Հինադրուել է նույնպես 19-րդ դարի 40-ական թթ.: 1873 և 1914թթ. համապատասխանաբար, այստեղ ապրում էին երկու դաւանութեան 633 եւ 1348 անձինք, իսկ ահա 1911-ին միայն հայ կաթոլիկները ընդամենը 400 հոգի էին: Նրանց եկեղեցին (Ս. Փրկիչ) կառուցուած էր 1873-ին: Գիւղի ազգային դիմագիծն այժմ աւելի է ընդգծուած»:⁹²

Առաքելական հայերի՝ գյուղում հաստատվելու ճանապարհները տարբեր են: Գյուղը, ըստ վիճակագրական տեղեկությունների, «համալրվել» է ողջ 19-րդ դարի ընթացքում ինչպես ներքին տեղաշարժերի, այնպես էլ Արևմտյան Հայաստանից անընդհատ ներգաղթի հետևանքով: Պահպանված տեղեկությունների համաձայն՝ առաքելական հայերի առաջին խմբերը գյուղ տեղափոխվել են Փամբակից: Մինչև այս տեղափոխությունը տեղեկությունները սակավ են: Փամբակից տեղափոխությունները 19-րդ դարի առաջին կեսին ակտիվ էին: Դրանք ունեն տարբեր բացատրություններ, սակայն հիմնականում կապվում են այս տարածքներում ռուս վերաբնակների հաստատվելու և նրանց համար հողեր ազատելու ռուսական իշխանությունների ցանկության հետ. «Փաստն այն է, որ 1848-1850թթ. ընթացքում Փամբակից գաղթեցին և Շորագյալում հաստատվեցին մոտ 90-100 ընտանիք հայեր: Այդ թվի

⁹¹ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Եր., 1998, հ. 3, ցուցակ 1, էջ 477:

⁹² Պ. Յակոբեան, Հայ կաթոլիկությունը պատմա-քննական լոյսի տակ//Հայոց հյուսիսային դարպասները. Ջավախք, Լոռի (հոդվածների ժողովածու), Եր., 2011, էջ 451:

մոտավորության համար նշենք, որ նորեկների կողմից Շորագյալում հիմնված յոթ գյուղերից հինգը՝ **Բազարխանա (Ձիթհանքով)**, **Քեշիշ-քենդ (Գեղարոտ)**, **Մանջուխլի (Ծիլքար)**, **Սաբունջի, Ախ-Ղուլի (Բերքառատ)**, բնակեցվեցին միայն փամբակցիների 80 ընտանիքներով: **Միայն Բազարխանայում հաստատվել է 32 ընտանիք՝ 116 տղամարդ, 83 կին, ընդամենը՝ 199 մարդ**:⁹³ Այս տեղափոխությունը ավելի ստույգ տեղի է ունեցել 1848թ.:

1860թ. գյուղում բնակվել է առաքելական հայերի 29 (117 տղամարդ, 101 կին, ընդամենը 238 մարդ) և կաթոլիկ հայերի 11 ընտանիք (58 տղամարդ, 59 կին, ընդամենը 117 մարդ):⁹⁴ Կաթոլիկ հայերի թիվը գյուղում կտրուկ աճել է 1853թ.-ին՝ Մեծ Ղարաքիլիսա-2-ից այստեղ տեղափոխված 6 ընտանիքի հաշվին (30 տղամարդ, 29 կին, ընդամենը՝ 59 մարդ):⁹⁵ Թե ինչու են այս ընտանիքները տեղափոխվել Ձիթհանքով, բավականին բարդ է պարզելը: Հիմնական ենթադրություններից մեկը կարող է լինել ավելի բարվոք պայմաններ ունենալը կամ ազգականների մոտ հաստատվելը, մանավանդ որ այս գյուղում ավելի վաղ հաստատվել են նաև առաքելական հայեր ու քրդեր: 1842-1852թթ. համար նշվում է, որ գյուղում հաստատվել է ևս մեկ ընտանիք Արևմտյան Հայաստանից,⁹⁶ իսկ 1857թ.՝ մեկ առաքելական ընտանիք՝ 4 մարդուց կազմված (2 տղամարդ, 2 կին):

Փամբակից տեղափոխված լինելու մասին հիշողությունները գյուղում մինչ օրս կենսունակ են, մարդիկ հստակ հիշում են, թե որ տոհմը որտեղից է տեղափոխվել. *«Լոռեցիներ են եկել, փամբակցիներ, որ առևտուր անեն իրենց գոյությունը պահպանեն, հացի խնդիր ա եղել, տեսել են, որ մեր գյուղի դաշտը դուրան է, հավանել են, գնացել են իրանց ունեցվածքը հավաքել են, եկել: Էս գյուղի հիմնադիրները եղել են Շատվորանք, իրանք ամենաշատն են եղել: Իսկ լոռեցիները Գինոսանք են եղել, իմ*

⁹³ Ա. Հայրապետյան, Արևելյան Շիրակը, էջ 162:

⁹⁴ Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XXդարասկիզբ), էջ 75:

⁹⁵ Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XXդարասկիզբ), էջ 79:

⁹⁶ Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XXդարասկիզբ), էջ 158-159:

պապն ա եղել, ու էդ ձևի գյուղը կամաց-կամաց շատըցելա: Կաթոլիկները կոչվում են ֆրանկ: Առաջինը ֆրանկների թաղն ա, իրանց հմար եկեղեցի են կառուցել»:

Սա փաստերի ու հիշողության յուրօրինակ համադրում է, տարածքի ընկալման ու կազմակերպման շատ հետաքրքիր մոդել, երբ այն բաժանվում է առաքելականների, որոնց ասում են հայեր, և կաթոլիկների, որոնց գյուղում ասում են ֆռանգներ, հայի ու ֆռանգի մայլա, հայի ու ֆռանգի ժամ, հայի ու ֆռանգի գերեզման: Չնայած տարբերակումներին՝ «հայն ու ֆռանգը» շուրջ երկու դար ապրում են կողք կողքի՝ ձևավորելով համակեցության, միմյանց հասկանալու, կարևորելու ու գնահատելու հետաքրքիր մեխանիզմներ:

Բնակչության թեկուզ ոչ ակտիվ տեղաշարժերը շարունակվել են նաև հետագա տասնամյակներում, ընդ որում, գյուղում հաստատվել են ինչպես առաքելականներ, այնպես էլ կաթոլիկներ: 1856թ. Թուրքիայից գյուղ է տեղափոխվել կաթոլիկ հայերի ևս 2 ընտանիք, ընդամենը՝ 20 մարդ (11 տղամարդ, 9 կին):⁹⁷

1873թ. գյուղի բնակչությունը հետևյալ պատկերն ունի. առաքելական հայերի 54 ընտանիք (235 տղամարդ, 240 կին), ընդամենը՝ 475 մարդ և կաթոլիկ հայերի 17 ընտանիք (79 տղամարդ, 79 կին), ընդամենը՝ 158 մարդ:⁹⁸

1886թ.-ին՝ նախորդ հաշվառումից հետո, գյուղում աճել է և՛ առաքելական, և՛ կաթոլիկ հայերի թիվը: Այս տարի գյուղում բնակվում է առաքելական հայերի արդեն 83 ընտանիք (322 տղամարդ, 286 կին, ընդամենը՝ 608 մարդ) և կաթոլիկ հայերի 24 ընտանիք (124 տղամարդ, 140 կին, ընդամենը 264 մարդ): Հետաքրքիր է, որ գյուղում բնակվում է ևս 1 լեհ ընտանիք (հռոմեակաթոլիկ, 4 տղամարդ, 1 կին, ընդամենը՝ 5 մարդ): Կարելի է ենթադրել, որ սա կաթոլիկ հոգևորականի ընտանիքն է: Գյուղում, համենայնդեպս, այս մասին չեն հիշել, այլ վկայություններ նույնպես չենք գտել: 1888թ. գյուղի բնակչության թիվը էական փոփոխությունների չի ենթարկվում, միաժամանակ հիշատակվում են առաքելական ու կաթոլիկ հայերի եկեղեցիները:

⁹⁷ Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XX դարասկիզբ), էջ 81:

⁹⁸ Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XX դարասկիզբ), էջ 112:

Գյուղը 20-րդ դարի սկզբին, ինչպես մնացած բնակավայրերը, ընդունեց նաև արևմտահայ գաղթականների ընտանիքներին:

1902թ. հաշվառման տվյալներով, գյուղում հաստատվել էր արևմտահայ գաղթականների 6 ընտանիք (21 տղամարդ, 13 կին, ընդամենը՝ 34 մարդ):⁹⁹

1906թ. գյուղի բնակչության թիվն անցնում էր 1000-ից: Հայ առաքելականների ընտանիքները 104-ն էին (422 տղամարդ, 413 կին, ընդամենը՝ 835 մարդ), իսկ կաթոլիկներինը՝ 64 (225 տղամարդ, 200 կին, ընդամենը՝ 425 մարդ):¹⁰⁰

Բնակչության բավականին ակտիվ աճի պայմաններում սահմանափակ էին գյուղի տնտեսական հնարավորությունները: 20-րդ դարասկզբին տնամերձները գյուղում կազմում էին 38.9 դեա: Գյուղը ջրովի վարելահողեր չունեւ, իսկ անջրդի վարելահողերը կազմում էին 1531,8 դեա: Գյուղը չունեւ նաև խոտհարքներ, իսկ արոտավայրերը կազմում էին 705.9 դեա: Ընդամենը գյուղի հողատարածքները 2279.6 դեա էին: Բնակիչները պահում էին 1316 գլուխ խոշոր և 1170 գլուխ մանր եղջերավոր անասուն:¹⁰¹

1908թ. գյուղում հիշատակվում է դպրոցը, որը դեռ շենք չունի, սակայն դպրոցի համար նոր շենք է կառուցվում, և որի ստանալիք նպաստը կազմում է 200 ռուբլի:¹⁰²

1911թ. ևս մեկ հիշատակություն ունենք գյուղում գործող հայ առաքելական Սբ Աստվածածին եկեղեցու մասին, 1 հոգևորականով:¹⁰³

Արևմտահայ գաղթականներով տարբեր գյուղերի բնակչության համալրումը 19-րդ դարի վերջին-20-րդ դարի սկզբին շարունակվում էր: Թուրքիայում ավելի ահագնացող հակահայ քաղաքականությունը, կոտորածները դառնում էին պատճառ, որ հազարավոր ընտանիքներ լքեին հայրենի տարածքներն ու բնակության նոր վայրեր փնտրեին: 1915թ. անցկացված մեկօրյա հաշվառումը, որի նպատակը Թուրքիայից, Պարսկաստանից և այլ սահմանակից վայրերից Շիրակում հաստատված

⁹⁹ Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XX դարասկիզբ), էջ 206:

¹⁰⁰ Նույն տեղում, էջ 216:

¹⁰¹ Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XX դարասկիզբ), էջ 228:

¹⁰² Նույն տեղում, էջ 233:

¹⁰³ Նույն տեղում, էջ 235:

ընտանիքների գրանցումն էր, գյուղում արձանագրել է 16 ընտանիք (76 տղամարդ, 73 կին, ընդամենը՝ 149 մարդ):¹⁰⁴ Նույն թվականի հոկտեմբերին արդեն գյուղում արձանագրվում է արևմտահայ գաղթականության ավելի մեծ թիվ. 57 տղամարդ, 62 կին, 92 երեխա, ընդամենը՝ 211 մարդ:¹⁰⁵

Թվում էր, թե Ցեղասպանությունից մազապուրծ հարյուրավոր գաղթականները պետք է կարողանան հանգիստ գտնել, սակայն սկսվեց նոր արհավիրքը, որն ամենադաժան ազդեցությունն ունեցավ Ձիթհանքովի վրա: Խոսքը 1918թ. հայ-թուրքական պատերազմի մասին է: Բացի Սարդարապատից, Բաշ-Ապարանից ու այլ ուղղություններից, հայերը թուրքերին հերոսական դիմադրություն ցույց տվեցին նաև Սառնաղբյուրում (նախկին Սոգյուրլու):

Շիրակում այս տարիներին հաստատվել էին տասնյակ հազարավոր գաղթականներ՝ զուրկ տարրական պայմաններից: Թուրքական հարձակումը Ալեքսանդրապոլի գավառի տասնյակ հազարավոր մարդկանց ցեղասպանվելու վտանգի առաջ կանգնեցրեց: Գաղթականների մի ստվար հատվածը կենտրոնացել էր Սոգյուրլու-Սառնաղբյուրում: Այստեղ հավաքված փորձառու զինվորականների, տեղացիների խորհուրդը որոշում է ինքնապաշտպանություն կազմակերպել ու դիմադրել այնքան ժամանակ, մինչև հնարավոր կլինի գաղթականներին տեղափոխել անվտանգ վայրեր: 1918թ. մայիսի 18-ից մինչև 22-ը Սոգյուրլուի պաշտպանները կարողանում են հերոսական դիմադրություն ցույց տալ մի քանի անգամ գերազանցող թուրքական զորաբանակներին:¹⁰⁶ Ինչպես սովորաբար լինում էր, անհաջողություններից գազազած թուրքերը վրեժը պետք է լուծեին խաղաղ բնակչությունից: Այն, ինչ ասկյարներն ու մահմեդական խուժանն արեցին Արևելյան Շիրակի և Փամբակի գյուղերում, հայոց ցեղասպանության ուղղակի շարունակությունն էր: Միայն այս մասում ավերվեց շուրջ 50 գյուղ:

¹⁰⁴ Նույն տեղում, էջ 241:

¹⁰⁵ Նույն տեղում, էջ 243:

¹⁰⁶ Այս մասին մանրամասն տես՝ 1918թ. մայիսյան գոյապայքարի պատմության նոր էջ//1918թ. մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի առաջին Հանրապետության 85-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Եր., 2005:





Սոցյութեցիներից վրեժ լուծելով՝ թուրքերը Ադիյաման, Փիրթիքյան, Մաստարա, Մուսլուղլի և Սոցյութի գյուղերից հավաքած 3000 հայերի մայիսի 25-ին կոտորեցին Ձիթհանքովում: Դրանցից 500-ին փակեցին Շահբազյան եղբայրների մարագներում, ապա պատուհաններից նռնակներ նետելով, գնդացիներից ու հրացաններից կրակելով՝ սպանեցին, իսկ հետքերը կորցնելու համար մարագներն այրեցին: Մյուսներին (մոտ 2500 հոգու) կոտորեցին գյուղի հյուսիսարևելյան կողմի սարերում (փրկվեցին սոցյութեցի Նիոյ Գասպարն ու ադիյամանցի Գլոն): Շուրջ 200 հայ օրիորդներ, փրկելով իրենց պատիվը, ինքնասպան եղան Ձիթհանքովի լճերում: Թուրքական

զորքերին դիմադրելուց հետո ամայի դարձան նաև Մահմուդջուղ և Ղըլիջ-Յաթաղ գյուղերը (1916թ. դրությամբ միասին ունեին 2570 բնակիչ երկու սեռերից):¹⁰⁷ Ուսումնասիրված մյուս համայնքները նույնպես ծանր կորուստներ ունեցան. ըստ տարբեր հեղինակների առնվազն մի քանի անգամ նվազեցված տվյալների՝ Պեմգաշենում սպանվել է շուրջ երկու հարյուր, Նոր Կյանքում՝ շուրջ 100 (իրականում երկու գյուղում էլ մի քանի անգամ ավելի շատ) մարդ:

Այս է ընդհանուր գծերով Ձիթհանքովի բնակչության ձևավորման ու կայացման դաժան պատմությունը, երբ հարյուրավոր գաղթականներ, Յեղասպանությունից փրկվելով, ցեղասպանվեցին արդեն Ձիթհանքովի տարածքում:

Ի հիշատակ այս իրադարձությունների՝ Ձիթհանքովում տեղադրվել է հիշատակի քար, և տեղացիները կայուն հիշում և փոխանցում են այս իրադարձությունների մասին պատումները. «Հորական տատիս ախպերները երկուսն էլ վառվել են, էս գյուղից: Տատիս երկու ախպորը որ բռնին տարան, ինքը փախել ա հորողոր տուն,

¹⁰⁷1918թ. մայիսյան գոյապայքարի պատմության նոր էջ//1918թ մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի առաջին Հանրապետության 85-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Եր., 2005:

հետո հորոդերս չոլերնա եղե, Լեննականից մի ջոկատա եկե, որ ով ուզումա, տանեն Ամերիկա, տատս հետները գնացել ա, հասել են Թիֆլիս, հետո հորոդերը պոյեզից իջեցրելա, չի թողել՝ գնա Ամերիկա: Մենք էս պատմությունները մեկս մյուսից լսելով գիտենք, առաջ ամեն իրիկուն հավաքվել են մեկի տուն, հեքիաթ, պատմություններ են պատմել, լսել եմ նաև 15 թվի ջարդերի մասին: Էդ պատմությունները հիշում եմ»:
(Զիթհանքով, հարցազրույց)


Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշմամբ հաստատված հուշարձանների ցանկն այս տեսքն ունի.

7.72 Զիթհանքով գյուղ

1	2	3	4	5	6	7	8	9
1				ԱՄՐՈՑ	Ք.ա. 3-2 հազ.	8 կմ հս-ամ	<	
	1.1			Դամբարանադաշտ	Ք.ա. 3-2 հազ.	ամրոցի շրջակայքում	<	
2				ԱՄՐՈՑ	Ք.ա. 2-1 հազ.	2-3 կմ ամ	<	
	2.1			Դամբարանադաշտ		ամրոցի շրջակայքում	<	
3				ԱՄՐՈՑ	Ք.ա. 1 հազ.-Ք.հ. 3-5 դդ.	5 կմ ամ	<	
	3.1			Բնակատեղի «Բագեր»	Ք.ա. 1 հազ.-Ք.հ. 3-5 դդ.	ամրոցի մոտ	<	
	3.2			Դամբարանադաշտ	Ք.ա. 1 հազ.-Ք.հ. 3-5 դդ.	ամրոցի շրջակայքում	<	
4				ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	16-20 դդ.	հվ մասում	S	
5				ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	16-20 դդ.	աե մասում	S	
6				ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	16-20 դդ.	հվ-ամ մասում	S	
7				ԵԿԵՂԵՑԻ	1883 թ.	աե մասում	S	
8				ԵԿԵՂԵՑԻ ՍՔ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ	վերակառ. 19 դ.	գյուղի մեջ	S	
9				ԵԿԵՂԵՑԻ ՍՔ. ԽԱԶ	1901 թ.	գյուղի մեջ	S	
	9.1			Գերեզմանոց	10-20 դդ.	եկեղեցու շրջակայքում	S	
10				ՀՈՒՇԱՐՁԱՆ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1975 թ.	աե մասում	S	
11				ՁԻԹՀԱՆ	19 դ.	աե մասում	S	
12				ՁԻԹՀԱՆ	1892 թ.	աե մասում	S	Ա. Գևորգյանի տան մոտ

«Դիվան հայ վիմագրության մատենաշարի»՝ Շիրակի վիմագիր արձանագրություններին վերաբերող հատորը գյուղի տարածքի հուշարձաններից մեկն է հիշատակում. «Գյուղից 2-3 կմ դեպի արևմուտք՝ բաց դաշտի մեջ, գտնվում են մեծ և սրբատաշ քարերով կառուցված եկեղեցու ավերակներ: Մուտքի առաջ թափված քարերից միջանցք են ստեղծել, որի քարերից մեկն արձանագիր է: Այն իր վրա կրում է

բավականին ծավալուն արձանագրության միջին մասը: Դատելով մնացածից՝ այն պետք է առնվազն երեք քարի վրա լիներ և 7 տողից: Արձանագրությունից պարզ հասկացվում է միայն եկեղեցու մոտ ջուր բերելու հանգամանքը: Հիշատակված Վահրամը ծնվել է 967 և մահացել 1054 թվին: Նրա մոր անունը Շուշիկ է եղել: Վահրամը շինողն է նաև Մարմաշենի վանքի՝ 986-1029թթ., զեղչել է նաև Մաստարա գյուղի հարկը: Հուշարձանը տեղացիք անվանում են Ղրըխու վանք, որն, անշուշտ, թուրքերեն է և նշանակում է կոտրած կամ ավերակ վանք»:¹⁰⁸



Այս վանքի տարածքը նաև գյուղացիների կողմից սիրված և օգտագործվող տարածք է, այստեղ են հավաքվում ընտանիքներով, ընկերներով, այստեղ են նշում Համբարձման տոնը. գյուղացիները վանքն անվանում են «Կոտրած վանք»: Կա նաև Վանքի օր, երբ Զատիկից քառասուն օր հետո ձիթհանքովցիներն ու հարևան գյուղերից եկածները հավաքվում են վանքի տարածքում, մոմ վառում, մատաղ անում ու հավաքվում սեղանի շուրջը: Վանքի օրն արգելված չի եղել նաև խորհրդային տարիներին, մեծահասակների հիշելով, նույն ձևով նշել են: Հիշում են, որ խորհրդային տարիներին նույնիսկ վանքի ծածկն է վերանորոգվել: Մեծահասակները տալիս են նաև «Կոտրած վանք» անվան իրենց իսկ մեկնաբանությունը. *«թուրքերը եկել են, ջուր ա եղե, թե ինչ ա եղե, կտրել են, տերտերին սպանել, վանքն էլ կհսարել (կհսաքանդել) թողել են, գնացել»:*

Ձիթհանքովի յուրօրինակություններից է այն, որ ինչպես արդեն նշեցինք, այստեղ հաստատվել ու մինչ օրս իրար կողքի բնակվում են առաքելական և կաթոլիկ հայեր, որոնք ժամանակի ընթացքում կառուցել են իրենց եկեղեցին, մատուռները, սակայն

¹⁰⁸ Դիվան հայ վիմագրության, պրակ X, Շիրակի մարզ (կազմեց Ս. Բարխուդարյան), Եր., 2017, էջ 21:

շատ ժամանակ տարբերություն չեն դրել, թե որ եկեղեցում կամ մատուռում են մոմ վառում:



Սուրբ Աստվածածին առաքելական եկեղեցին կառուցվել է 19-րդ դարում՝ 1883թ.: Խորհրդային տարիներին շատ եկեղեցիների նման լքվել, մոռացվել է, օգտագործվել է որպես պահեստ: Հիմնովին վերակառուցվել ու վերածվել է 2014թ.՝ վերանորոգվելով ծնունդով ձիթհանքովցի գործարար Ռոստոմ Ստեփանյանի՝ շուրջ 50000 դոլար նվիրատվության շնորհիվ: Խորհրդային շրջանում այս եկեղեցին դարձել է պահեստ. «պահեստում ցորեն, գարի, կորնգան էր լցած, ո՞վ կթողեր ժողովուրդը մտներ մոմ վառեր,

շատ ժամանակ դրսի պատերին էին մոմը վառում, կպնում»:



Կաթոլիկ հայերի եկեղեցին Սուրբ Խաչն է՝ կառուցված 20-րդ դարում՝ 1901թ.: Այն խորհրդային տարիներին կինոյի ակումբ է եղել. «Կինո էին ցույց տալիս, գնում էինք փողով նայում, 20 կոպեկ 9-ից հետո էր, 5 կոպեկով դպրոցից աշխատողներին տանում էին»:

Հետո եկեղեցին հրդեհից տուժել է և վերականգնվել արդեն 2000-ականներին՝ դարձյալ Ռուսաստանում ապրող տեղացի գործարարի կողմից:





Գյուղը, ինչպես
 հետազոտված մյուս
 բնակավայրերը, միայն
 եկեղեցիների շուրջ չէ, որ
 կառուցել ու կառուցում է
 հոգևոր կյանքը: Գյուղի
 տարածքում ու
 շրջակայքում շատ են

նաև մատուռները: Դրանցից մեկը 2016թ. հունվարին օծված «Կարմիր ավետարան» մատուռն է՝ գյուղում ժամանակին պահված հին Ավետարանի անունով: Ըստ հիշողությունների՝ այդ ավետարանը բերել են առաջին ներգաղթյալ հայ կաթոլիկները 1830-ական թթ. Ալաշկերտ գավառից: Հետագայում ավետարանը նվիրել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանին, որտեղ և պահվում է մինչ օրս: Ժամանակի ընթացքում կիսավեր դարձած մատուռի փոխարեն կառուցվել է նորը: Գյուղի տարածքում ու շրջակայքում կան բազմաթիվ այլ մատուռներ:

Զիթհանքովի տարածական կազմակերպումը, հետազոտված այլ գյուղերի համեմատությամբ, որոշակիորեն տարբերվում է: Նախ՝ հին թաղամասերն այստեղ ձևավորվել ու ընդհուպ մինչև 20-րդ դարի կեսերը պահպանվել են առաքելական և կաթոլիկ հայերի եկեղեցիների շուրջը. **«Առաջինը ֆրանգների թաղն ա, իրանց հմար եկեղեցի են կառուցել, էս փողոցից էրեվում ա, գործում ա, տերտերները գալլոմ են աղոթքի»:** Գյուղի թաղամասերի որոշ անուններ են հիշվում՝ Բլբուլի, Անկեսուր, Ֆրանգի ևն... Դրանք առանձին ուսումնասիրելու դեպքում կարող են բացահայտել գյուղի մասին առանձին կարևոր պատումներ, ինչպես, օրինակ, Բլբուլի թաղամասի երգչի մասին, կամ Անկեսուր թաղամասի՝ խորհրդային շրջանի գյուղական կառուցապատման մասին և այսպես շարունակ:

Մինչև 20-րդ դարի կեսերը գյուղերում պահպանվում էին նաև հին տներից շատերը՝ թեպետ արդեն օգտագործվելով որպես պահեստային տարածք:



Պահպանված հին տներից մեկը



Հին տներից մեկի երդիկն ու գերանածածկը

Գյուղի երկու եկեղեցիները կարծես բաժանում են գյուղը կաթոլիկ և առաքելական մասերի իրենց տեղադրությամբ, ինչպես նաև մինչև օրս առանձնացված են կաթոլիկների և առաքելականների գերեզմանատները, թեպետ խառնամուսնությունների պարագայում արդեն առաքելական դավանանքի հանգուցյալ կնոջը հուղարկավորում են կաթոլիկ գերեզմանատանը, եթե ամուսինը կաթոլիկ համայնքից է:



20-րդ դարի երկրորդ կեսին գյուղերում մշակութային լանդշաֆտում ավելացան Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հուշարձանները: Ձիթհանքովում ևս այս հուշարձանը ազդեցիկ է, գերիշխող ու կարևոր: Սա խորհրդային քաղաքականության արդյունքն էր. ամեն ինչ արվում էր, որ զոհվածների մասին հիշողությունը ակնհայտ ու տեսանելի լինի: Ընդ որում, խորհրդային տարածական պլանավորմանը համահունչ՝ այն տեղադրվել է բարձունքում և կաթոլիկ եկեղեցու հետ գրեթե նույն տարածքում՝ ուղղակի այն դիրքով, որ հուշարձանին դեմքով կանգնելիս անտեսվի եկեղեցին:



Հուշարձան տանող ճանապարհին այսօր անխնամ է

Անկախության տարիներին գյուղերում ավելացան պատերազմին առնչություն ունեցող այլ հուշարձաններ ևս՝ նվիրված Արցախյան պատերազմներում զոհված համագյուղացիներին:

Ձիթհանքովում ևս այդպիսի հուշահամալիր է կառուցվել 2021թ. օգոստոսին՝ նվիրված զոհված 12 համագյուղացիների հիշատակին: Համալիրը գյուղի կենտրոնում է՝ վարչակազմի նստավայրի անմիջական հարևանությամբ՝ Մշակույթի տան դիմաց:

Ձիթհանքովում գործարար ռուսաստանահայ բարերարների շնորհիվ ձևավորվող կամ նորոգվող մշակութային լանդշաֆտը վկայում է գյուղում աջակցության ներուժի, համայնքների միջև մրցակցությամբ պայմանավորված խմբային ինքնության մասին, որը ևս կարող է ունենալ համագործակցային և զարգացման պոտենցիալ՝ համապատասխան առաջարկներ ձևավորելու և գործարարներին ևս խնդիրների քննարկման ոլորտ ներառելու դեպքում:

Գյուղի կենտրոնական հատվածի ամենակարևոր շինություններից է Մշակույթի տունը: Մշակույթի տան կառուցման երկարատև ընթացքի մասին պատմությունները ավագ սերնդի հիշողություններում պահպանվում են, անգամ տարբեր վարկածներ են ներկայացնում՝ շեշտադրելով, որ ճարտարապետը Ռաֆայել Իսրայելյանն է: Այս վարկածը, սակայն, դեռևս մեզ չի հաջողվել հաստատել:

Ձիթհանքովը 420 տնտեսություն և մոտ 1800 բնակչություն ունեցող գյուղ է, որն ունի ոռոգման ջրի խնդիր: Այստեղ ցորենի, գարու մշակությունը զուգորդվում է անասնապահությանը: Ավանդական կենցաղում գյուղի տնտեսական լանդշաֆտում կարևոր նշանակություն է ունեցել ցորենի, գարու և կտավատի մշակությունը:



Գյուղում բոլորը ավանդական տներում թոնիր են ունեցել, որոնք սովորաբար պատրաստել են գյուղացի կին-վարպետները, օրինակ, Ձիթհանքովում հիշվում էր Սոֆոն, ինչպես նաև տղամարդ թոնիր պատրաստող. «Մեր մոտի սարն ա, կավահանք են ասում, իրիկունը փռում էինք, մամաս ջրում էր, սապոգներով կոխրճում էր ու թողնում էր, առավոտը գալիս էին սարքելու: Հետը մաղած ավազ էին խառնում, ավազի հանքից

ավազը բերում էինք, մաղում, չորնըմ պրծնըմ էր, ամեն կողմից երկու գերան դնում էին, երկու հոգով վերցնում քցում էին փոսի մեջ: Հետո մի օր առաջ երկու հատ աթար վառում դնում են, պետք ա կիսատ վառվի, եթե շատ ուժեղ վառես, կարող ա ճաք տա: Էտի կոչվում ա հոտ դնել, խարկելն ա, հաջորդ օրը շատ վառում ենք: Մենակ աթար էին քցում. որ փետ քցենք, կարողա ջերմությունը ուժեղ լինի՝ ճաքըցնի, աթարը մինչև վերև շարում էինք, որ շրթերն էլ տաքանար: Մի երեք-չորս ժամ վառում էինք, թնդիրն օր կարմրում էր, պատրաստ էր»:

Քանի որ Ձիթհանքովում խորհրդային շրջանում կոլխոգում մեղվի փեթակներ էին պահում և աշխօրին մեղր տալիս, այստեղ թոնիրները «զարդարում» էին նաև

մեղրամոմով. «Էթըմ ին, ճանճ ունեցողներից ուզում ին, դրանից հետո թնդիրը իրա գույնը փոխում ա, կարմըրըմ ա»: Այս օրինակը ևս ցույց է տալիս, թե ինչպես են տնտեսական զբաղմունքները փոխկապակցվում և ստեղծում յուրահատուկ ավանդույթներ ու գիտելիք:

Կանայք, ինչպես մյուս գյուղերում, պատրաստում էին նաև կավե սպասքը՝ կճուճ, չանաղ, թաբաղ և այլն: Ժամանակի ընթացքում կանանց այս զբաղմունքը դարձավ անկիրառելի, և նրանց թոնրագործության ոլորտում փոխարինեցին վարպետ տղամարդիկ, իսկ սպասքը փոխարինվեց գործարանային արտադրության սպասքով:

Ձիթհանքովում ևս եղել են ավանդական վարպետներ՝ դարբիններ, որոնք, խորհրդային շրջանում իրենց արհեստը արդիականացնելով, սկսել են տրակտորների խոփեր, զիգագներ ու շարքացաններ էլ պատրաստել:

Կանանց հատուկ արհեստներից գյուղում ավանդաբար զբաղվել են գորգագործությամբ, ոչխարի բրդի մշակմամբ. թեշիկով՝ իլիկով, թել են մանել, սանդերքով ոչխարի բուրդը գգել, Հոկտեմբերյանի գյուղերից գնած բամբակ են մանել, զբաղվել ասեղնագործությամբ, գործել ձմեռային հագուստ և ապահովել տան զարդարանքն ու անհրաժեշտ իրերը: Երբ Արթիկի գորգագործական արտելից վերցնում էին դազգահն ու թելերը, տանը գործում և հանձնում էին արտելին: Բնականաբար, արտելի վերացման հետ ընդհատվել է նաև գործունեության այս տեսակը, սակայն գորգ գործելու հմտություն ունեցող անգամ տարեց կանայք կկարողանան ցույց տալ և սովորեցնել՝ թեկուզ միջսերնդային կապն ապահովելու նպատակով:



Ձիթհանքով գյուղի անվանումը անմիջականորեն հուշում է գյուղի գլխավոր առանձնահատկությունը: Այն թերևս Հայաստանի եզակի գյուղերից է, որի անվանման մեջ ներառված է «Ձեթ» բառը: Ձիթհանքովը մինչ օրս էլ Հայաստանում կտավատի ձեթի ստացման կենտրոններից է՝ մրցակցելով թերևս Կոտայքի մարզի Ֆանտան գյուղի հետ:

Գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկում ներառված են երկու ձիթհաններ՝ ձեթ ստանալու ավանդական գործարաններ,

որոնցից մեկն արդեն քանդված է, և հասկանալի չէ, թե ինչն է ներառված հուշարձանների ցանկում: Մյուսը դեռևս կիսավեր վիճակում տեսանելի է և պահպանվում է սեփականատիրոջ կողմից, որը ձիթհանի ավանդական տերերի և այն աշխատեցնողների ժառանգն է:



Ձիթհանի դիմացի տարածքը

Ձիթհանները խորհրդային շրջանում առժամանակ ազգայնացվեցին, այսինքն՝ դարձան պետական սեփականություն, որտեղ հին տերերը՝ որպես մասնագետներ, շարունակում էին աշխատել: Ձիթհանքովում մինչև 1960-ականները հիշում են Սարոյենց գործող ձիթհանը, այնուհետև սովխոզը կոլխոզով փոխարինելիս այլևս կոլտնտեսությունը կտավատ չէր ցանում՝ այն փոխարինելով ցորենով ու գարով, որի հետևանքով ձեթի ստացումն ընդհատվեց:

Հետխորհրդային շրջանում գյուղում որոշ գյուղատնտեսներ վերսկսեցին կտավատ մշակել՝ հավանաբար հաշվի առնելով մշակութային փորձը և գյուղատնտեսական պայմանները: Այս տարածքներում կտավատի մշակությունը պատահական չէր, քանի որ այն լավ աճում էր մեծ բարձրություններում, քմահաճ չէր

կլիմայական պայմանների հանդեպ և ոռոգման կարիք ունեն։ Ըստ Ս. Հոբոսյանի՝ կտավատի ցանքի հիմնական գոտին ընդգրկում է 1800-1900 մ բարձրություն ծովի մակերևույթից¹⁰⁹։ Ներկայումս գյուղում կտավատ մշակում են և մամլիչով ձեթ ստանում փոքր ծավալներով։ Կտավատը հայկական մշակույթում հայտնի յուղատու բույս է։ Ըստ Ղևոնդ Ալիշանի՝ Հայաստանում կտավատի 8 տեսակ է հայտնի։ Կտավատի մշակության մասին բազմաթիվ են վկայությունները, անգամ ժողովրդական բանահյուսության մեջ հանդիպում են հանելուկներ կտավատի մասին՝ «Մե շատ ախպերներ կան, համա հըմենի գըթերն էլ ծերը քեթը (ծուռ)», կամ՝

Ինքն խոտ է գետնաբոյս,

Կոճակ ունի ի գլուխն ի յուս,

Երբ չարչարեն, դընեն ի սոյգ,

Արեգական նըման տա լոյս։ (Ներսես Շնորհալի, 12-րդ դար)

Կտավատի սերմը ցանելը մեծ վարպետություն էր նախկինում պահանջում, քանի որ մանրության պատճառով հատիկը թափվում էր և անհավասարաչափ բաշխվում։ Կտավատը հավաքում էին ձեռքով և ձեթ ստանում ձիթհաններում»։ Ձիթհանները սովորաբար ունենում էին նույն կառուցվածքը՝ հիմնված ձեթի տեխնոլոգիական գործընթացի վրա։ Ինչպես հիշում է տարիքով ավագ ձիթհանքովցիներից մեկը, «Կտավատը բերքմին, ընդե հատուկ գործիք կար, եզը լըծըմ ին, ֆոռըցընըմ էր, բազալտից մեծ քար էր, էդ քարը կտավատը անըմա ալըրի պես, միջինը հանըմ են, լցնում են ֆոթեղի մեջը, եզը լծում են, էդ ֆոթեղը ֆոցընում ա, սխմում ա, ձեթը դուսա տալի, աման են դնում տակը, որ ձեթը լցվի»։

Ձեթը ապրանք էր, սննդի համակարգում օգտագործվող հիմնական յուղատեսակ, ինչպես նաև՝ բուժամիջոց։ Այս հետազոտության ուսուեստի բաժնում նկարագրված են ձեթով պատրաստվող ուսուեստներից մի քանիսը՝ ինչպես, օրինակ, ձեթով բիշին, ձեթով տոլման, կարտոֆիլով տոլման, տապականեր։ Ձեթով

¹⁰⁹ Ս. Հոբոսյան, Հայոց ձիթհանության մշակույթը 19-րդ դ. -20-րդ դ. 1-ին կես, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հատոր 23, Երևան 2007, էջ 27։

կերակուրները հատկապես պատրաստվում էին Հայոց եկեղեցու պահքի շրջանում, երբ տարբեր երկար ու կարճ պահքերի ընթացքում արգելվում էր կենդանական ծագման յուղի օգտագործումը:

Զիթհանքովի ձիթհանը թեպետ ներառված է հուշարձանների ցանկում, սակայն անգամ գյուղացի երիտասարդները հստակ չեն կարողանա ցույց տալ տեղը, այն չունի որևէ ցուցանակ, առավել ևս պահպանություն: Մեփականատերը երբեմն մաքրում է տարածքը, այնինչ, հաշվի առնելով գյուղում կտավատի մշակության և ձեթի ստացման ներկա պրակտիկաները, պատմության հետ կապելը լրացուցիչ նորարակական եկամտի բարելավման հնարավորություններ կարող է ստեղծել՝ կտավատի մշակությունից մինչև ձեթի ստացում, փաթեթավորում, կոսմետիկա, զբոսաշրջություն և այլն: Ի լրումն այս ամենի՝ ինչպես մշակութային ժառանգության մյուս բաղադրիչների դեպքում, այն լիովին կարող է ներառվել ոչ ֆորմալ կրթական ծրագրերում՝ պատմելով գյուղի պատմության, ավանդական արհեստների ու ձեթի մշակույթի մասին և օգտագործելով տեղի ներուժն ու ներգրավելով լրացուցիչ մասնագետների:

Տեղական խոհանոցային ժառանգությունը՝ որպես համայնքային ռեսուրս

Ուտեստի հայկական համակարգը հարյուրամյակների ընթացքում պայմանավորված է եղել Հայկական լեռնաշխարհում տարածում ունեցող հիմնական տնտեսական զբաղմունքներով: Մասնագիտական գրականությունում ավանդական տնտեսությունը Հայաստանում բնութագրվում է որպես երկրագործա-անասնապահական, որը զուգակցվել է արհեստների, առևտրի, այլ զբաղմունքների հետ: Ե՛վ երկրագործության ու անասնապահության, և՛ սրանցից յուրաքանչյուրի կոնկրետ ճյուղերի հարաբերակցությունը կախված է եղել լանդշաֆտից, կլիմայական



պայմաններից, բազմաթիվ այլ գործոններից:¹¹⁰ Երկրագործական և անասնապահական զբաղմունքներից ստացված մթերքը եղել է հիմնականը, իսկ որպես օժանդակ տնտեսաձևեր սննդամթերք են ապահովել բնությունից՝ որսորդության և բուսահավաքչության եղանակով:

Հետագոտությունը հնարավորություն տվեց պարզելու, որ չորս գյուղում էլ ուտեստի համակարգը, որոշակի տարբերություններով հանդերձ, նույնպես պայմանավորված է եղել հիմնական տնտեսական զբաղմունքներով, համակցված օժանդակ տնտեսաձևերով:

19-րդ դարի մասին վկայությունները, հատկապես նշված գյուղերի մասին, աղոտ են: Մեծահասակները գրեթե ոչինչ չեն հիշում, հիշողությունները հասնում են լավագույն դեպքում տատիկ-պապիկներին, այսինքն՝ 20-րդ դարասկիզբ:

Շիրակյան ուտեստին վերաբերող առանձին հոդվածներում ավանդական ուտեստը նույնպես դիտարկվում է: Ավանդական ուտեստի լավագույն ու հետաքրքիր նկարագրություններ տվել է Ադ. Մխիթարյանը «Փշրանք Շիրակի ամբարներից» աշխատությունում:¹¹¹ Մեջբերենք որոշ հատվածներ՝ ցույց տալու համար նաև, որ խոհանոցի կազմակերպումը, տնտեսության վարումը ենթադրում էին նաև չափազանց խորը գիտելիք. *«Տես թե հարս, աղջիկ ու պատանիք, այդ զարնան քանաւոր ծաղիկները, ինչպես են փռուել սար ու դաշտ. քանջորքադը, շխպիկը կամ լէստը»*¹¹² *ձեռներին, հրեշտակային ձայնով լէլէ ասելով որը կառ է քաղում, որը կանդառ, փշփշուկ, ջրակոտեմ, փիսիկօթի, սինձ, գառականջ, թթուաշ, բողկուկ և այլ. որն էլ սիպեղ, կարմիր քանջար կամ բազկուկ է քաղում, որ տանին թագայ խաշեն ու այնպես համով աղցան անեն, որ մատներդ էլ հետը ուտես: Պատանիքն էլ իրանց սուր քհիրներով ձնծաղիկ, չիկիտամ, գրծիկ ու մատուկ են հանում, որ տանեն տանը մնացած փոքրիկ քույրերին ու եղբայրներին բաժանեն: Իսկ փոքրիկ մանուկներն էլ*

¹¹⁰ Այս հարցերի մասին մանրամասն տես՝ *Культура жизнеобеспечения и этнос*, Ереван, 1983.

¹¹¹ Ադ. Մխիթարեանց, Փշրանք Շիրակի ամբարներից/Էմինյան ազգագրական ժողովածու, հատոր Ա, Մոսկուա-Ալեքսանդրապոլ, 1901:

¹¹² Բույսեր հավաքելու դանակ-գործիքների անվանումներ են:

փայտի կտորով գետինը փորելով ճնճղպաշար են ժողովում: Հանդուոր հարսներն ու աղջկերքը, քաղած բանջարները բողջայ կապեցին ու ճօլակները շալակած վերադառնում են տուն, որ Նանեի եփած թանապուրն ու հառլա ապուրը ուտեն: Արի մենք էլ տուն գնանք, քաղցած ենք, տեսնենք թե նանեն մեզ ինչ կտայ ուտելու... Օ, դրանց ձեռք մի տայ, բարեկամ, եթե ոչ՝ մեր Նանեն շատ բարկացկոտ է, մեկ էլ տեսար՝ լափոտ շերեփը գլխիդ այնպես իջաւ, որ աչքերդ բնից դուրս եկան... Այդ խաշիլն ու փլաւը՝ նա գութանաւորի համար է պատրաստել. միլուն ու ձուածեղը՝ գութնի եզնարածների, կամ թէ չէ նոր փեսի. այս քեալաճօշը, բազկով բօրանին ու քեալամով կօնջօլն էլ հիւրերի համար են: Ուրեմն մեզ ուտելու համար մնում է մի քիչ խաւիժ, չլպուր, չոմրուկ, պանիր ու լոռ: Արի այսօր սրանցով բաւականանանք, մինչև որ պասի էլի շաբաթ օրը Նանեն մեզ հարիսայ, կորկոտ ապուր ու կաթնապուր կուտացնէ... Հմի էլ մեր հարս ու աղջիկները արտերը ոտի տակ տրորելով, աղը դնելու ու թթուացնելու համար, արտերից քաղում են գոխ, ժախ, բէզայ, բոճախ, օդորմակաթ, բոլի, վարդապետի ժախ, դմի ու էրժնակ: Իսկ ձմռան տապակելու ու աղցանի համար, տես որքան շրեշ, աւելուկ, պարոնբանջար, թելուկ ու խրխնտուկ են հաւաքել: Բացի սրանցից, աշնանը ձմեռուայ համար կը դնեն նաև քալամէ թթու, չոր թթու, կարմիր տակէ մաճառ, ձերմակ բազկէ ճաւիկ ու շախկամէ թթու»:¹¹³

Սա ուտեստի ընդհանուր գծերով նկարագրությունն է: Սրանց ավելացնում ենք կաթնատնտեսության արդյունքը, բոստանի ու բանջարանոցի բերքը, սակավաթիվ միրգը և հայ գեղջուկի ամենօրյա (ոչ այնքան հարուստ) ուտեստը ամբողջանում է:

Անասնապահությունը, ինչպես երկրագործությունը, կարևոր դեր ուներ Շիրակում, այդ թվում չորս գյուղի գյուղացիների կյանքում. «Յետոյ Նարնգիւլին պատուիրեց, որ գնայ բդիկը բերէ իրան մօտ, երեկուան փռած կաթի երեսները քաշելու համար, որովհետև հասել է: Իսկ ինքը գնայ ջրոյ միջի հումսերը լցնէ խնոցին ու կամաց կամաց հարէ, մինչև Նանեն պանիրը քաշէ պրծնի...»

¹¹³ Աղ. Մխիթարյանց, Փշրանք Շիրակի ամբարներից//Էմինեան ազգագրական ժողովածու, հատոր Ա, Մոսկուա- Ալեքսանդրապոլ, 1901, էջ 276-278:

Տե՛ս թէ ձմռան ուտելու ու ծախելու համար Նանէն որքան պանիր ու դայմագ է լցրել ակերն ու կճրճները: Այն միւս ամաններն էլ, որը կարագի խիար է, որն էլ չեչիլ ու թել պանիր է. . . այն մեծ բղիկն էլ քամած մածուն է և այն ծափերն ու չինիքն էլ հալած արդար եղ են. . . այն թարեքի վրայ շարած գնդերն էլ սապոն են, որ Նանէն իր ձեռքով է եփել լուացքի համար. իսկ այն պատից կախած կանանչ հիւսերից մի քանիսը ձերմակ բանջար են, ու միւսներն էլ՝ աւելուկ, որ չորանալուց յետոյ Նանէն կարգով կը գալէ ու կը պահէ: Բացի այս, նա իր ժամանակին սոխուկ ու սխտորուկ էլ քաղել դրկել է տուն, որ թթու դնեն. . . »¹¹⁴:

Սա էր գյուղացու ուտեստը Շիրակի գյուղերում: Առանձին ու պարտադիր արարողություն էր լավաշ թխելը. «. . . Վաղը հաց պետք է թխէ. այսօրուանից ալիւրը ամբարից կամ փեթակից դուրս քաշել տուեց ու ալրմաղով մաղեցին խմորի տաշտի մէջ: Երեկոյան խմորը հունցեցին ու պրծնելուց յետոյ, ձեռքով խմորի երեսին խաչ քաշելով, դաստախունով ծածկեցին, որ թթուի: Էն բաշտեն Նանէն շատ վաղ վերկացավ, հարս ու աղջկա ձէն տուեց, որ վեր կենան խմորը գնդեն. իսկ ինքը գնաց մոխիրը թրնտրից դուրս քաշեց մոխրատի մէջ. . . Հարսները խմորը գնդել պրծել էին. հրամայեց, որ բադատը, ռաֆատեն, փարտիչը, անթրոցը, շիշը, ակիշը, թաթակիշը, գրտնակը, սեղանտախտակը ու մի աման ջուր բերեն թնտրի մօտը հազիր անեն: Ինքն էլ կապուտ կտավէ մխնոցը հագավ, թնոցները թնր քաշեց, դուրս ելավ աղօթարանի առաջը, երեսը խաչ հանեց. . . ու սկսեց հացը թխել. . . »¹¹⁵

Գյուղական ուտեստի այս համակարգը պահպանվեց բավականին երկար: Նախախորհրդային տարիներին այն հիմնականն էր՝ չնայած առանձին գյուղերում առկա տարբերություններին:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո, հատկապես մինչև կոլեկտիվացումը, ուտեստը էական փոփոխությունների չէր ենթարկվել, եթե չհաշվենք, որ դարասկզբի ծանր իրադարձությունները՝ պատերազմներ, թուրքերի

¹¹⁴ Աղ. Մխիթարյանց, Փշրանք Շիրակի ամբարներից, էջ 282:

¹¹⁵ Աղ. Մխիթարյանց, Փշրանք Շիրակի ամբարներից, էջ 289:

հարձակումներ ու ասպատակություններ, տասնյակ հազարավոր մարդկանց կորուստ և այլ իրողություններ, էապես սահմանափակել էին գյուղացու՝ առանց այն էլ սահմանափակ հնարավորությունները: 1920-ական թթ.-30-ական թթ. սկզբին գյուղացին շարունակում էր ապրել այնպես, ինչպես ապրել էր: Ճիշտ է, փոփոխություններ կային, սակայն տնտեսությունը նույնն էր, զբաղմունքները՝ նույնպես: Կանայք ու աղջիկները շարունակում էին արտ ու դաշտ գնալ, բարիքներ հավաքել բերել, պաշարել ու մշակել, որպեսզի կարողանան ապրել:

Կոլեկտիվացումը արդեն որոշակի փոփոխություններ ձևավորեց ուտեստի համակարգում, որովհետև գյուղացին ինքնուրույն պլանավորողից դարձավ կոլեկտիվ արդյունքը սպառող: Սա մի կողմից՝ լավ էր, որովհետև հատկապես աղքատ ընտանիքները, որոնց թիվը խորհրդային առաջին տասնամյակներին գյուղերում շատ մեծ էր, կարողացան ավելի բազմազան ու բալանսավորված դարձնել իրենց սնունդը: Մյուս կողմից, այս փոփոխությունները սկիզբ դրեցին աստիճանական համահարթեցման, տարբերությունների հաղթահարման, որ ավելի ակտիվ շարունակվեցին արդեն հետպատերազմյան տարիներին:

Չնայած ակտիվ փոփոխություններին՝ ուտեստի համակարգը «պահպանողական» էր հիմնական բաղադրիչների առումով. հացահատիկային տնտեսությունն ու անասնապահության արդյունքն էին ապահովում գյուղացու «սեղանի պարունակությունը», և բնավ պատահական չէ, որ շատ դեպքերում խորհրդային շրջանի նկարագրությունները հար և նման են Ադ. Մխիթարյանցի նկարագրություններին:

Գյուղացին տասնամյակներ շարունակ կատարում էր նույն գործողությունները: Դրանցից մեկը վայրի բույսերի հավաքչությունն էր, որ մասնակի փոփոխություններով գոյություն ուներ նաև խորհրդային տարիներին. *«Սովետի ժամանակ էլ հավաքելը կար, ես կհիշեմ, օր քուրերս կերթային Մաստարվա կողմերից սպիտակ բանջար կրերեին, մեկ էլ զոխ: Ղմին ուշ էր, 70-ական թթ.: Միբեխ էլ կրերեին: Ավելուկ էլ քաղել են: Մաստարա կար, ընտեղ լավ էր: Մաստարեցիք չէին*



թողնում, էնքան են քրերիս ծեծե, առե թափե»: Անհատական խորացված հարցազրույց, տղամարդ, Լանջիկ:

Կանայք, որ ավելի ակտիվ էին այս աշխատանքներում, մանրամասն հիշողություններ ունեն. «Մպիտակ բանջարը մենք հավաքում ենք սարերից: Շուշանը հավաքում ենք գարու դաշտերից: Զոխը սիրեխինն ա, սիրեխի գոխը կորնգանի դաշտից ենք հանում, դախ ցելի միջինը, իսկ ծիլը գարու դաշտում ա լինում, նայած որ բույսի հետ ա աճում: Տարբեր ա լինում: Շուշանին դմի ենք ասում, տապակում ենք, մարդ կա գոխերը թթու է դնում: Ավելուկը հավաքում ենք օգոստոսին, երբ որ հասունանում ա, ծիլ ա տալիս, որ սերմ դառնա: Ավելուկի թերթերի վրա ծակոտիներ են լինում, ավելուկի սերմերն օգտագործում են փորագավի համար: Առաջներում ավելուկը թարմ չեն օգտագործել: Հավաքելուց հետո հյուսում ենք, կախում, չորանում ա: Ավելուկով ճաշ էլ ենք եփում: Ավելուկը նաև տապակում ենք ձեթով, սոխառածով, իսկ սալաթը եփած սառը վիճակում վրան սոխ և ընկույզի միջուկ են կտրատում»:

Ավելուկով ճաշ

Ավելուկը տաք ջրով լվանում ենք, լոբին նախօրոք թրջում ենք, ոսպ է, ձավար է, մարդ կա՝ գարդիս էլ է քցում, կարտոֆիլ, բոլորը իրար հետ լավ էփում են, հետո լավ հարում, ջրիկ էլ են անում, խյուսի նման էլ են անում, հետո ձեթով կամ յուղով սոխառած են ավելացնում, ապա սխտորով, լավաշով ուտում են:

Հայ գյուղացին, հատկապես կինը բնության մասին հանրագիտարանային գիտելիքի կրող է: Այլ հարց է, որ այդ գիտելիքը մնում է աննկատ, սահմանափակվում միայն առօրյա կյանքի ու տնտեսության շրջանակում:

Եթե աշխարհում աճող բուսատեսակներից սննդի մեջ օգտագործվում է 0,6 %, ապա Հայաստանում աճող բույսերի 6,5%-ը: Տեղի բնակչության շրջանում վայրի բույսերի հավաքչությունը կայուն ու արմատացած սովորույթ է: Այստեղ մարդիկ

ունեն տարածքի մասին զարմանալի խորը գիտելիք, որը չեն կարդացել գրքերում, այլ սովորել են սեփական և նախնիների փորձով: Տեղի բնակիչները, հատկապես կանայք լավ ճանաչում են տարածքի բուսականությունը, գիտեն բոլոր վայրի ուտելի բույսերի աճելու տեղերը, հավաքելու ժամկետները՝ կողմնորոշվելով ոչ թե օրացույցով, այլ բնության գիտելիքով՝ կլիմայով, երկրագործական աշխատանքների հետ համեմատելով ևն, ինչպես, օրինակ, ավելուկի դեպքում. կոմերցիոն նպատակներով վաճառվող ավելուկը սովորաբար հավաքվում է ուշ գարնանը, մինչդեռ տեղացիները գիտեն, որ այն պետք է հավաքել աշնանը, երբ արդեն հասունացել է:

Նախկինում բույսեր ու պտուղներ հավաքելու գնում էին հիմնականում կանայք ազգակցական խմբերով: Քանի որ արդյունքը վաճառքի համար նախատեսված չէր, գործում էր միմյանց օգնելու, հավաքածը իրար մեջ բաշխելու սովորույթը: Աստիճանաբար, հավաքչության ապրանքայնացմանը զուգահեռ, մարդիկ բույսեր, պտուղներ բնությունից հավաքում են նեղ ընտանեկան խմբերով՝ ձգտելով ապահովել իրենց ընտանիքի կարիքները, կամ ստանալ շատ ապրանք՝ վաճառքի համար, ինչը ևս հանգեցնում է համայնքային կապերի թուլացմանը:

Հավաքչությունը նաև զբաղմունք է ու լիցքաթափվելու միջոց, երբ բնության մեջ հանգստանում էին, կտրվում կենցաղային հոգսերից: Հավաքչության մասին գիտելիքը փոխանցվում է սերնդեսերունդ, նաև անընդհատ նորանում է՝ ըստ մեղիա ինֆորմացիայի, դեղաբույսերի հանդեպ աճող հետաքրքրության:

Սակայն մեր հետազոտած գյուղերում այս և հարակից ավանդական գիտելիքները բնության, առողջության և տեղական սննդի մասին, ներառված չեն կոմերցիոն առաջարկներում, չեն դառնում ուտեստային պատմություններ, ինչը ժամանակակից շուկաներում գնահատվում է ավելի բարձր, խորքային գիտելիք, լինի բիզնես նպատակի համար, թե կրթական կամ զարգացման ծրագրերի:

Ահա բույսերի նվազագույն և համալրվող ցանկը, որը արդեն հարյուրամյակներ տեղացիները հավաքում են բնությունից և օգտագործում սննդի մեջ.

1. Կառ



2. կանդառ,
3. փշփշուկ,
4. ջրակոտեմ,
5. փիսիկօթի,
6. սինձ,
7. գառականջ,
8. թթուաշ,
9. բողկուկ
10. սիբեխ
11. կարմիր բանջար կամ բագուկ
12. գոլի,
13. ժախ,
14. բէգալ,
15. բոճախ,
16. օղորմակոթ,
17. բոլի,
18. վարդապետի ժախ,
19. դմի
20. էրժնակ
21. ճերմակ բանջար
22. ավելուկ
23. շրէշ,
24. պարոնբանջար,
25. թելուկ
26. խրխնտուկ
27. ձնծաղիկ,
28. չիկիտամ,

29. գրծլիկ

30. մատուկ

31. Ճնճղպաշար

Վերջին մի քանի տասնամյակում այդ գիտելիքն այլ զարգացումներ էլ ունի:

Նախախորհրդային ու խորհրդային տարիներին կինը ոչ միայն կրում էր գիտելիքը, այլև փոխանցում էրիտասարդ աղջիկներին ու հարսներին, քանի որ նրանք հիմնականում միասին էին արտում ու դաշտում: Հետազոտությունը ցույց տվեց, որ ընդհանուր բնույթի փոփոխություններից բացի, էական փոփոխություններ է կրել նաև բուն հավաքչությունը: Խորհրդային վերջին երկու-երեք տասնամյակում այն արդեն լայն տարածում չունեւ, և կանայք ու երիտասարդ աղջիկները դրանով զբաղվում էին նաև հաճույքի համար, չնայած հավաքված բույսերը օգտագործվում էին ինչպես թարմ վիճակում, այնպես էլ պաշարվում էին ձմռան համար. «... առեջ չէինք հասկընում, օր ըղիկ դմի (շուշան) է: Մենք էրեխա ժամանակ զոխ ենք քաղե, սիբեխ, ավելուկ, մեր կողմերը բանջար չի էղե: Ըղիկ վերնի գյուղերն է: Զոխն ու սիբեխը բանկով փակըմ էին կամ տապկըմ ուտում էին: Կամ դաստա կապում էին, ամանի մեջ թթու էին դնըմ: Թելուկ, աջի-ղըջի էինք քաղըմ: Ըղիկ մոու էր, օր էփըմ էինք, քաղցըրնում էր: Բատըտըուկ: Ճնճղպաշար էրթըմ էինք կալերը քաղըմ ուտըմ էինք: Ըբը ընչի չէինք հիվընդնում: Մարի ցիթըոն հավաքել ենք: Տղա կար, սարերից բերում էր, տանում հանձնում էր պետությանը. 15-20 տարի առաջ: Հավաքելու՝ էն ժամանակ իմ թայ աղջիկների հետ ենք գնացե: Ամենալավ ավելուկը, օրինակ, Ղփչաղու (Հառիճի) ճամփեքին էր: Միջակներին էր էղնըմ, ըղիկ համով էր: Զոխն ու սիբեխը արտերի մեջն էր, էրթըմ քաղըմ էինք, գալըմ ծեծըմ էին: Սիբեխի ժամանակ էին ավելի շատ գալըմ ծեծըմ: Հանում ուտում էին, խաշել, տապկել, թթու»: Անհատական խորացված հարցազրույց, կին, Նոր Կյանք:

Այս պատմությունները՝ որոշակի տարբերություններով, ընդհանրական են ուսումնասիրված բոլոր գյուղերի համար. «Իմ էրեխա վախտվանից զոխ, սիբեխ քաղել եմ գյուղափերից: Բերեինք մաքրեինք, դաստա կկապեինք, ոտով կերթայինք



պոեզիան, տանեինք Լեննական կծախեինք, օր օրվա հաց էնեինք: Ղմին դայցած գոխն է: Իմ էրեխա վախտս ղմին մոդա չէր, հմի են իջաթ էրե: Ավելուկը պաստայաննի էղել է: Էդ էլ ենք ծախե: Գյուլափ, դեմի չայերը: Ջրի տեղից չէինք քաղըմ: Դադա, ուրց էլ ենք քաղե»: Անհատական խորացված հարցազրույց, կին, Նոր Կյանք:

Այս հարցազրույցը վկայում է, որ որոշ ընտանիքների համար տարբեր բույսերի վաճառքն ունեցել է նաև ապրանքային նշանակություն. դրանք վաճառվել են հիմնականում Լենինականի, այսօր արդեն՝ Գյումրու շուկայում: Մեր օրերում էլ բավականին մեծ է տարբեր գյուղերից շուկայում առևտուր անող գյուղացիների թիվը, սակայն սրան գումարվել են այլ մեխանիզմներ: Հողի սեփականաշնորհումից հետո ակտիվ զարգացավ ապրանքափոխանակությունը, որ շարունակվում է նաև այսօր: Շատ բույսեր գյուղացիները գնում կամ փոխանակում են տարբեր վայրերից եկող առևտրականների հետ ու վերանում է նույնիսկ շուկա գնելու անհրաժեշտությունը: Նոր Կյանքում, Լանջիկում, Պեմգաշենում ու Ջիթհանքովում կան նաև անհատներ, որ զբաղվում են հավաքչությամբ ու ըստ անհրաժեշտության վաճառում համագյուղացիներին:

Տարեցների միջավայրում դեռևս թարմ են 1930-40-ական թթ. ծանր, աղքատ կյանքի մասին հիշողությունները, երբ սովից փրկում էին հենց դաշտերից հավաքած տարբեր բույսերը. «Գյուղեր կային, ասում էին, որ համարյա մարդիկ արածում էին, դաշտերն ընգած՝ խոտ էին հավաքում, ուտում: Դաշտերից սիրեխ, բանջար/տարբեր տեսակի կանաչիներ/ բերում էին, ուտում: Զոխը սիրեխիցա դուրս գալի, շուշանը ղմինա, աղինջը, բոխին շատ մարդ չիդե, ավելուկը հայաթը կար, սինձ են ուտում: Կան մարդիկ, որ զակագ են տալիս, հավաքում բերում են. հիմնականում էն կանայք, ում ամուսինը չի աշխատում: Մեր դաշտերում շամպինյոն սունկ էլ կա:

-Մի արմատ կա, որ շատ տեղերում լսել եմ՝ ատոլ կամ կոճդեզ:

-Էդ հողի տակնա ըլնում, վերևը ծաղիկ ա, քաթմաթ ծաղիկը էդ քյաթմաթի վրայա լինում:

-Քյաթմաթ տեսե՞լ եք, ուտո՞ւմ եք:

-Հա, կապույտ ծաղիկ ա, քաշում են, արմատը հանում, ուտում են: Վերնի բույսը չեն օգտագործում: Կոճղեզ մեր դաշտերը չկա, քյավառեցոնց դաշտերը կա: Սովի տարիներին էդ արմատները ջրով խաշում էին, աղը ցանում վրան, ուտում»:
Անհատական խորացված հարցազրույց, կին, Ձիթհանքով:

Այսօր գիտելիքի փոխանցման հնարավորությունները սահմանափակվել են: Բուսահավաքչությունը երիտասարդներից շատերին արդեն հետաքրքիր չէ: Այն գիտելիքները, որ կրում են մեծահասակները, ժամանակի մեջ դառնում է «չօգտագործվող, ոչ պետքական» կամ ուղղակի անհատական: Ճիշտ օգտագործվելու դեպքում կարող են դառնալ համայնքի ու վերջինիս առանձին միավորների (անհատներ, ընտանիքներ, կոլեկտիվներ) զարգացման կարևոր ռեսուրսներից մեկը:

Աշխարհի մեծ մասում ուտելի բույսերի մեծ մասը ստացվում է երկրագործության շնորհիվ: Աշխարհի տարբեր երկրներում այսօր վայրի բույսերի և պտուղների հավաքչության նկատմամբ աճում է հետաքրքրությունը, դրա համար մարդիկ ուսումնասիրում են իրենց ծանոթ տարածքները, սկսում են բացահայտել և ճանաչել աճող բույսերը, դրանց հատկանիշները: Այն, բացի սնունդ գտնելու միջոց լինելուց, այսօր դառնում է քաղաքների աղմկոտ կյանքից լիցքաթափվելու, ներդաշնակություն փնտրելու, առողջ սնունդ փորձարկելու, բնական բուժիչ բույսերը բացահայտելու, ինչպես նաև մարդկանց ու բնության հետ շփվելու, փորձառու հավաքողների փորձին ու գիտելիքին ծանոթանալու հնարավորություն:

Վերջին տարիների հայաստանյան հետազոտություններում շատ է գրվում համայնքային կյանքի նախաձեռնությունների ու տարբեր մակարդակներում համագործակցության սակավության ու կրավորականության մասին:

Պատճառներից մեկը, ըստ ազգագրական դիտարկումների ու հետազոտության արդյունքների, հենց գիտելիքի փոխանցման մեխանիզմների խզումն է, նախկին միջավայրերի թուլացումը կամ բացակայությունը: Գիտելիքի փոխանցումը



մեխանիկական գործընթաց չէ: Այն, լայն առումով, ենթադրում է շփում, մշակույթի արժեքային ու բարոյական նորմերի յուրացում, բնության ու տարածքի ճանաչողություն, մարդաբանական տեսանկյունից՝ սոցիալականացում ու էնկուլտուրացիա:

Շփման նախկին միջավայրերի այլընտրանքը պետք է լինեն դպրոցը, գրականությունը, ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության տարբեր ձևաչափերը, որոնք սակայն, կա՛մ բացակայում են, կա՛մ արդյունավետ չեն: Սա իր հերթին նշանակում է, որ երիտասարդության մի ստվար հատվածը, դուրս մնալով ավանդական շղթաներից ու միջավայրերից, գյուղը, տարածքը ճանաչելու ավելի քիչ հնարավորություններ ունի:

Պեմզաշենը, ըստ հետազոտության, հետպատերազմյան տասնամյակներում որոշակիորեն տարբերվել է մնացած համայնքներից. այստեղ հավաքչության ծավալներն ավելի սահմանափակ են եղել, քանի որ բնակչության հիմնական մասը զբաղված է եղել կա՛մ տեղի, կա՛մ Արթիկի արդյունաբերական տարբեր ձեռնարկություններում, իսկ գյուղատնտեսությունը սահմանափակ տարածում է ունեցել:

Ուսումնասիրված բնակավայրերում, ինչպես Շիրակում ընդհանրապես, ուտեստն ունի հետևյալ հիմնական բաղադրիչները (դրանք ենթարկվել են որոշ փոփոխությունների).

- ✓ Հաց, հացամթերք, որտեղ տիրապետող է լավաշի մշակույթը (այստեղ կարևորվում է ցորենի կարմրահատ տեսակը, դրանից ստացված ալյուրը, փոխինձը բոված, ապա երկանքով աղացած ցորենը, բլդուրը խաշած, ապա աղացած ցորենը, ցորենից ստացած ձավարը, ցորենով, ալյուրով, ձավարով և բլդուրով պատրաստվող կերակուրները)
- ✓ Բոստանային, բանջարանոցային կուլտուրաներ
- ✓ Վայրի բույսերը՝ որպես սննդամթերք
- ✓ Կաթ, կաթնամթերք, ընդ որում, պանիրների տեսակային բազմազանությամբ

- ✓ Միս, մսամթերք
- ✓ Միրգ՝ սահմանափակ քանակությամբ
- ✓ Մեղր, այլ բաղադրիչներ:

«Հաց ու պանիր, կե՛ր ու բանի՛ր» բանաձևը՝ որպես ուտեստի համակարգի առանցք Շիրակի ուտեստի ամենակարևոր ու հայտնի բաղադրիչներից մեկը լավաշն է: Այն գյուղերի մեծ մասում, չնայած գործարանային արտադրության հացատեսակների ի հայտ գալուն, շարունակում է մնալ հիմնականը:

Չորս բնակավայրում էլ շատ թոնիրներ դեռ պահպանվել են, սակայն չեն օգտագործվում, քանի որ այսօր հազվադեպ ընտանիքներ են թոնրում լավաշ թխում, մինչդեռ ընդամենը մի քանի տասնամյակ առաջ այլ պատկեր էր. «Մեր գեղը թոնիր սարքող է եղել՝ Թորոն: Ես Թորոյին էրեխա վախտն եմ տեսել: Իմ մամըս էլ է սարքել: Ես էլ եմ կավ շաղվել, մամս օր սարքել գը: Թորոն սարքել ծախել գը, թնդիր տանելն էլ կհիշեմ, թոգերով կապելինգ գը, տանելն գը: Թրծելը տանտերը կեներ: Էնքան պտի վառելն, օր լրիվ կարմրեր: Թնդիր թրծելու աթարները յոթը տնից են հավաքել: Օրենքն ըդման էր: Ըղիկ պարտադիր էր: Էղել է, օր ճաք էր տալը: Էն ժամանակ կովի յեղ կար, Էնքան էին քսըմ, օր ճաքը անցնըմ էր: Թրծողը գիտեր: Թրծելուց հետո արդեն կողքերը ավագ, կճաքար, ավագ լըցնըմ, կոխրջըմ էին, ետև հավասարցնում էին: Էն ժամանակ



լավաշը պարտադիր էր: Մենք շատվոր էինք, շաբաթը ես մե տաշտըմ թխըմ էի: Կիսուրս բանըմ էր, ես թխըմ էի, մե հոգիմ էլ՝ գունդ կրող: Մե տաշտը 100-120 հաց էր, դաստըմ էինք, դնըմ էին, ամուսինս փետից սարքել էր, դնըմ էինք մատանը, պաղ տեղ, շվաքը, փետի վրա: Ըղիկ մե շաբաթըմ բոլ էր»:

Սա, կարելի է ասել, ընդհանուր հիշողությունն է: Թոնրում լավաշ թխելու մասին ձեզ կպատմեն միջին ու ավագ տարիքի գրեթե բոլոր կանայք: Զբաղվածությունը

լավաշ թխելու հարցում դեր չէր խաղում. կոլտնտեսականն ու մանկավարժը, գյուղխորհրդի աշխատողն ու բարձրագույն կրթություն ունեցող ինժեները կամ հաշվապահը շաբաթ-կիրակի օրերին վառում էին թոնիրը, ընտանիքի ու հարևանների օգնությամբ հաց թխում, որը բավականացնում էր մեկ-երկու շաբաթ և ավելի երկար: Այսօր, ըստ հետազոտության արդյունքների, լավաշ թխելու ավանդական պրակտիկաները չկան: Ավանդական պրակտիկաները փոխարինվել են նորարարությամբ, որի արդյունքում մարդիկ կարողացել են պահպանել լավաշ օտագործելու սովորույթը: Լավաշ թխում են «տոկով», հատուկ այդ նպատակին հարմարեցված էլեկտրական վառարանների վրա: Բոլոր գյուղերում նշում էին հազվադեպ մարդկանց, որոնք երբեմն թոնրում են լավաշ թխում: Մնացել է, սակայն, նախկին համերի հիշողությունը. բոլորը միաբերան պնդում են, որ թոնրի լավաշի համն ուրիշ էր:

Մշակութային տեսանկյունից՝ լավաշ թխելը սոսկ հաց ունենալուն միտված գործողություն չէր: Այն առաջին հերթին կոլեկտիվ աշխատանք էր. լավաշ թխելուն մասնակցում էր առնվազն երեք կին: Եթե տանն այնպե՛ս կին չկար, օգնության էին հասնում հարևանները՝ վստահ լինելով, որ իրենց էլ օգնելու են: Արդյունքում՝ լավաշ թխելը դառնում էր միկրոմակարդակի յուրօրինակ համագործակցություն:

Թոնիրն էլ՝ որպես տարածքի կազմակերպման կարևոր բաղադրիչ ու միաժամանակ կենտրոն, միայն լավաշի համար չէր գործածվում: Մեծահասակները ներկայացնում են թոնրում պատրաստված բազմաթիվ ուտեստներ:

Թոնիրը սոցիալական-ընտանեկան այլ կարևոր գործառույթ էլ ուներ. *«Մնդուկից հացը բերեին, դնեին զը սալայի մեջ: Հացի տախտակը գետնին էր, մինդրըններն էլ կողքը փռեինք, հաց կուտեինք: Մինչև 60 թվերը: Հաց հիմնականում թնդրտունը կուտեինք: Ոտներս էլ թնդիր կկախեինք: Հատկապես ձմեռը, 10 րոպեյվա չորնայինք զը: Մարդ կար, քուրսի ուներ: Քուրսին հիմնականում քառակուսի էր»: Անհատական խորացված հարցազրույց, տղամարդ, Լանջիկ:*

Թոնրատունը ավանդական տների ֆիզիկական և սիմվոլիկ կենտրոնն էր, թոնիրը տեղադրված էր տան միակ լուսամուտ-երդիկի տակ, կենտրոնում և ծառայում էր ուտելիք պատրաստելու, տաքանալու և ընտանիքի հավաքվելու տեղ: Ավանդական տների փոփոխությանը զուգահեռ՝ 1950-ականներից, վերաիմաստավորվեց նաև թոնրատների գործառույթը, դրանք դարձան լավաշ թխելու և սննդամթերք պահպանելու տարածքներ:

Ահա այսպես՝ լավաշի ու թոնրի շուրջ էր կառուցվում գյուղական ընտանիքի կյանքը, որ այսօր ենթարկվել է էական փոփոխությունների:

Թոնիրը և հաց թխելու գործողությունն ունեին սոցիալական ու ուսուցողական կարևոր գործառույթ: Լավաշ թխելու ընթացքում զրույցները, թոնրի շուրջը հավաքվելու ու սնվելու արարողությունները սոցիալական փորձառություն ու հմտություններ էին փոխանցում: Եթե սրան հավելենք հացի ու թոնրի մասին տասնյակ առած-ասացվածքները, ասույթները, ծիսական արարողությունները, թոնրի պաշտամունքի տարբեր դրսևորումները (երիտասարդ նորահարսը, օրինակ, հայրական տնից հեռանալիս թոնրի շուրթն էր համբուրում), պարզ կդառնա, որ սոցիալական գործառույթը, իրոք, բավականին կարևոր էր:

Այսօր, բնականաբար, սոցիալական այս գործառույթը վերականգնել հնարավոր չէ: Երիտասարդները ձգտում են ավելի հեշտ ու կազմակերպված կյանքի, փոքր ընտանիքներում նույնիսկ ցանկության դեպքում թոնրում լավաշ թխելը ձեռնադրել: Փոխվել են նաև ուտեստային նախասիրությունները:

Թոնիրն ու լավաշը, սակայն, իրենց դեռևս «չեն սպառել»: Ավելին, հատկապես գյուղական զբոսաշրջության համատեքստում վերջիններս ձեռք են բերել արտահայտված կարևորություն: Բազմաթիվ են լավաշ թխելու «վարպետաց դասերի» առաջարկությունները, ընդ որում հաճախ նաև այն բնակավայրերում, որտեղ լավաշ թխելու ավանդույթը շատ ավելի թույլ է, քան ուսումնասիրված համայնքներում: Շիրակը, այդ թվում՝ ուսումնասիրված համայնքները, մշակութային ժառանգությունը ճիշտ քարտեզագրելու ու հանրայնացնելու դեպքում կարող են դիրքավորվել նաև



որպես «թոնրի լավաշ» առաջարկողներ, հատկապես որ չորս բնակավայրն էլ բավականին մոտ են մայրուղուն, իսկ Լանջիկը մայրուղու անմիջական հարևանությամբ է: Ընդ որում, նախնական դիտարկումներով, Շիրակի մարզում դեռևս չկան լավաշ թխելու մասնակցության զբոսաշրջային առաջարկներ:

Մշակութային ժառանգության հանրայնացման, ըստ այդմ նաև համայնքային զարգացման համատեքստում, կարևոր է, որ «լավաշ թխելը» գործողությունից դառնա արարողություն. պատմություններով (դաշտից մինչև թոնիր. բոլոր գյուղերում էլ եղել են ջրաղացներ, որոնց հետքերը դեռևս պահպանվել են), լավաշի ու թոնրի շուրջը ծեսերի ու արարողությունների ներկայացմամբ, թոնրի վրա կամ թոնրի մեջ պատրաստվող ուտեստների առաջարկով, քուրսի նստելով, թոնրի շուրջը կատարվող խաղերով ու այսպես շարունակ: Պարտադիր չէ, որ սա լինի միայն զբոսաշրջային առաջարկ: Բնակավայրերում անցկացվող տարբեր միջոցառումները, կրթական ծրագրերը, հավաքույթները նույնպես կարող են կազմակերպվել այս մոտեցմամբ՝ որպես համայնքային համախմբման ու համագործակցության տարբերակներից մեկը:

Չնայած ընդհանրություններին, որ ձևավորվել են հացի, հացամթերքի, կաթնատնտեսության նմանությունների արդյունքում, յուրաքանչյուր գյուղ ունի նաև իր յուրօրինակ ուտեստները: Լանջիկում, օրինակ, գրեթե բոլոր բանասացները հիշատակել են *դազլոխմասին՝ շուշանից պատրաստված*. «*Ղմուց դազլոխմասի են սարքե: Ջրի խմոր ենք սարքում, երկու հատ զոխ թաթախում ենք մեջը, գցում ժարիտ էրած ձեթի մեջ: Խմորը վրեն կբռնե, կեղնի դազլոխմասի*»: Այս հիշողությունն ունեն տասնյակ լանջիկցիներ ոչ միայն գյուղում, այլև գյուղից դուրս:

Որպես Լանջիկում հարգի, միաժամանակ պատրաստման տեսանկյունից բավականին բարդ ու ժամանակատար ուտեստ՝ հիշում են ածիկը, որ վերջին տարիներին այնքան էլ հաճախ չեն պատրաստում: Տղամարդ բանասացներից մեկը, մանրամասն նկարագրելով ածիկի պատրաստման ընթացքը, որին մասնակից էր եղել դեռևս վաղ մանկությունից, հիշեց նաև, որ վերջին անգամ ածիկ կերել է 2014թ.: Այս ուտելիքը պատրաստում են մութ տեղում ծլեցված, հետո թակով ծեծված ցորենից, որը

եփում էին՝ ստանալով քաղցրահամ խյուս: Ածիկի ստորև բերված նկարագրությունը, բացի ուտեստի տեքստ լինելուց, օրինակ է, թե ինչպես են ուտեստի մասին պատմությունները պատմում գյուղի կյանքից ու մարդկանց ավանդական հմտություններից (դրանք չէին կարող նկարագրվել մեզ համար ծանոթ գրամով, սանտիմետրով)՝ միաժամանակ դառնալով բարբառի ու տեղական բառարանի հարուստ շտեմարան: *Այս նկարագրությունը կարող է օգտագործվել ինչպես կրթական նախաձեռնություններում՝ բարբառի քննարկումից մինչև ածիկի պատրաստման տեխնոլոգիա, միջսերնդային համագործակցության ծրագրեր, այնպես էլ բիզնես, գյուղատնտեսական և զբոսաշրջային նորարարական նախաձեռնություններում:*

Այս մի փոքր կտորը հնարավորություն է տալիս խոսելու տների փոփոխության, ընտանիքների կազմի մասին («ընտանիքում 11-13 հոգի էինք»), անասնապահության մասին (դնում էին գոմերի մեջ, որտեղ հա՛մ տաք էր, հա՛մ մուլթ), բնության մասին, գիտելիքի մասին (մուլթ տեղում ծիլը լեղի չէր դառնում), ֆոլկլորի մասին (ցորենի ծիլը պիտի լիներ սպիտակ ձյան պես), սպասքի մասին. կավե ամանեղեն (կավե աման, բդիկ) էին հիմնականում գործածում, փայտից թակ, որոնց հետո՝ արդեն ուշ խորհրդային շրջանում, փոխարինեցին երկաթյա մսադացները. հացի խմորը գրտնակելու տախտակ, թոնիր, խոհարարական հմտությունների մասին. մատով խփում էին, հասկանում խյուսի թանձրության որակը, թոնրի մեջ տեսքին նայելով՝ հասկանում էին, որ արդեն պատրաստ է և այլն...



Ածիկ

Մեզոնին վերցնեինք զը մաքուր ցորենը, 1-2 կիլո, լվանայինք զը, փռեինք զը սալի մեջը: Դնում էին գոմերի մեջ ամենամուրթ անկյունը: Հա՛մ տաք էր, հա՛մ մուր էր: Մուրը ծիլը սալիտակ մնալու համար: Սկզբնական շրջանում 2-3 օրը մեկ ջրեինք զը գոլ ջրով: Անընդհատ ըղպես կենեինք, մինչև Բարձրնար: Պտի սալիտակ մնար, օր լեղի չդառնար: Հետո արդեն սալի միջից արմատներով կհանեինք: Միպտակ, ինչո՞ր օր ձուն: Հետո դնեինք զը կավից ամանի մեջ, լավ կլվանայինք, առանց բանի ձեռ տալու: Արմատներով կլվանայինք: Ունեինք թակ, ես մինչև էսօր էլ ունիմ: Հացի տախտակը դնեինք զը, փոքր-փոքր դանկով կտրեինք զը, կսկսեինք ծեծել: Հետո դաբոյով ջուրը դրած էր կողքերս, ծեծածը դնեինք զը ջրի մեջ: Նորից կսկսեինք քամիչով քամել ու ճգմել: Ջուրը կմնար, նորից կծեծեինք: Առաջին ջուրը կմնար: Եթե սիպտակությունը շատ է, ջուրը փոխեինք զը: Եթե կարիք կար, երրորդ անգամ կծեծեինք: Էրգու ջուրը խառնեինք զը իրար, ծեծածը կուտայինք անասունին: Ջուրը դառնար զը խաշի ջուր, որոշ չափով պնդիություն ուներ, մատոյ օր զարգեիր, շիրա կբոներ: Ենթադրենք, իրեք վեղրո ջրին գիտեինք՝ ինչքան ալյուր է պետք: Համտես կենեինք, քաղցրությունը կորոշինք, ալյուր կավելցնեինք, կբերեինք էն մակարդակի, օր դնեինք թնդրա վրեն եփելու: Մատ կխփեինք, հասկնայինք զը: Վառեինք զը թնդիրը, ամանը դնեինք զը թնդրա վրեն. կավից աման էր, հատուկ փետով կսկսեինք խառնել էնքան ժամանակ, մինչև թնդրա վրայի մասսան կարմրեր: Դնեինք զը մե կողմ: Լցեինք զը բղիկի մեջ, տատս կիջցներ թնդիր, կծածկեր: Կեփեր, բացելով կզգայինք, օր եփել է: Կհաներ, դնեինք ամանով մեկ կսկսեինք ուտել: Հեչ բան չէինք ավելցնել: Էն ժամանակվա թոբաշ ցորենը շատ լավն էր, համով: Մառը վիճակում կսկսեինք ուտել: Մեծ ընտանիքներում 11-13 հոգի էինք. կարող է էդ մե սարքածը, քիչ-քիչ ուտելով, ամիսն ուտեինք: Մարքելն էլ միջինը 20 օր կտներ: Մարքեինզը Ջատկի, պասի, միս չօգտագործելու օրերը:

Միրելի այլ ուտեստներ էլ կավելացնեն զրույցի ընթացքում. **չորթնե (չորաթանից) ճաշը՝** ձավարով, հայտնի կարտոշկով տոլման, որի պատրաստումը մանրամասն կարող են նկարագրել ոչ միայն կանայք, այլև որոշ տղամարդիկ, **ավելուկն ու սալիտակ բանջարով ճաշը**, վաղ մանկությունից հիշվող **ճմուռը, բիշին, հավի մսով հարիսան ու դավուրման, քյալագյոշը**, որ հիմա միայն Մուրբ Խաչին են անում, **մշոշը** (սալիտակ տակը՝ բազուկը, աղացած ձավարի հետ էնքան ենք էփում, հալվում ա, ջրալի ենք անում, վրան սոխառած լցնում), դդումով ու կաթով ճաշը ու այսպես շարունակ:

Սպիտակ բանջարով ճաշ

Սպիտակ բանջարն սկզբում էփում են, հետո ձավարը լավ էփում ու լավ խփում են, որ իրար հավասարվեն, վրան կարագ են դնում. ճաշը կանաչ է դառնում:

Վերջին երկու-երեք տասնամյակում ուտեստի համակարգն ու հիմնական կերակրատեսակները նաև փոփոխությունների են ենթարկվում: Եթե խորհրդային շրջանում լուրջ փոփոխություններ բերեցին սառնարանները, ապա այսօր՝ սառցարանները: Շուշանը, զոխն ու սիբեխը պահվում են սառցարաններում ու ամիսներ շարունակ օգտագործվում: Շատ կերակրատեսակներ արդեն չեն պատրաստվում ու մնում են որպես հիշողություն: Մանկության հիշողությունների շարքից են նաև որոշ թխվածքներ՝ *թոնրի մեջ սարքվող շաքարլոխումը, որ հիմա գազի վրա են անում, բայց «նախկին համը չունի»:*

Կերակրատեսակները, որ գյուղացիները թվարկում ու մանրամասն նկարագրում են, սիբեխի են դարձել տասնամյակների ընթացքում: Ազգագրական տեսանկյունից հենց սա է ուտեստի առանձնահատկություններից մեկը. կերակուրը, հացկերույթը ինքնին գործողություն կամ արդյունք չէ: Այն տարածքի, բնության հետ երկխոսության արդյունքում է ծնվում ու ցույց է տալիս, թե Պեմզաշենում, Նոր Կյանքում, Ջիթհանքովում ապրող մարդը որքան լավ է ճանաչում բնությունն ու տարածքը: Յուրաքանչյուր մթերք մինչև սեղանին հասնելը երկար «ճանապարհ» է անցել, ենթարկվել ջերմային կամ այլ մշակման: Գյուղացին անգիր իմացել է, թե որ բույսը որ ամսին կամ որ դաշտից պետք է քաղել, որի ծաղիկը և որի ցողունը պետք է օգտագործել, որը կարելի է օգտագործել թարմ վիճակում, իսկ որը պետք է պահածոյացնել: Կարևոր է, որ այս գիտելիքի հիմնական կրողը կինն է, հենց նրա ձեռամբ է բույսն անցնում դաշտից մինչև սեղան ճանապարհը: Կինն է նաև այս կամ այն բույսի մասին ստեղծված բանահյուսական տեքստերի հեղինակը: Մա իր հերթին ցույց է տալիս, որ համայնքային զարգացման ծրագրերում գենդերային բալանսավորված մոտեցումը մնում է առաջնային, և կանանց նախաձեռնությունները

կամ կնոջ ակտիվ մասնակցությամբ նախաձեռնությունները կարող են բերել համայնքի՝ որպես օրգանիզմի դինամիկ զարգացմանը:

Նոր Կյանքում էլ ուտեստային պատմությունների հիմնական հեղինակները կանայք են: «Մեր գյուղում շատ են սարքել անկպճել կարտոլով շորվա, կոնճոլ՝ կճրճոլ դնում էին թընդրի տակը, քուրսի կար, շորը գցում էին վերև: Թթված թփով, կարտոլ, սոխարած, խաշած ձավար, ավելուկով ճաշ ու տապակած ավելուկ, տոլմա՝ թփով ու խաղողով, պասուց տոլմա՝ ձավար, գարոխ մենք ցանք էինք, ոսպն առնովի էր, սիսեռը, լոբին՝ հատ լոբի: Նոր տարվան պարտադիր էր: Ամանով փաթթեինք զր»:

Մեկ այլ կին, որը 80-նն անց է, ավելացնում է իր բաժին կերակուրները, որոնցից մի քանիսը կրկնվում են, մի քանիսը՝ ոչ. «Ձմեռվա համար լախանեն (կաղամբը) մաքրում, խաշում էինք, բոչկեքի մեջ թթու դնում. կապրոն բոչկեքի, բայց էն վախտ փետի բոչկա էր: Գյուղը սարքող կար. դարբինները կսարքեին, կծախեին. Ուզողը Ջուրաբին ըսում էր, ինքը սարքում տալիս էր: Լախանեն կտրտում էինք, դնում թեթև բոչկի մեջ: Վարունգ դնեինք զր պամիդորի հետ խառը: Ջոխ, սիբեխ էլ կդնեինք մեծ վեղրոյի մեջ: Դաստով զոխը տաք ջրի մեջ քիչըն աչքը վախեցնում էի, թողում էի պաղի, կոխում էի աղջրով վեղրոյի մեջ: Ուղղակի որպես թթու կերել ենք: Ճավը՝ կարմիրն էլ, սիպտակն էլ դրել ենք: Քիչըն ձավար կգցեինք, թթու ճավով կոնճոլ կեփեինք, կոնճոլը՝ ճավի թթու ու ձավար, մեզ էլ՝ կարտոլ, կարտոլը խաշեինք զր, ծիթրոնը, բիբարը, սոխը ջարդեինք, տանեինք զր, էն ի՛նչ համով կուտեինք: Կարտոլի տոլմա ենք փաթթե: Սոխարածն ինչի վրա էլ լցնես, կուտվի: Զատկին՝ բրնձով փլավ, չամիչով: Իմ աղջիկ ժամանակ բրինձ չկար, ուղղակի ձավարով փլավ կենեինք: Առնովի ձուկ կար: Լոբին, կարտոլը, ջուրը, ճրլբուր կսեինք, - տապակած լոբին՝ տապակած լոբի, էլ հեշ բան, ալատած կարտոլը, մսով ճաշը՝ միս, կարտոլ, ջուր, - մենք ըսում էինք մսով ճաշ»:

Զիթհանքովում, ինչպես բխում է գյուղի անվանումից, ուտեստային շատ հիշողություններ կապվում են կտավատի ձեթի հետ. «էն ժամանակ կտավատը տարբեր բաների համար էին օգտագործում. ուտելու համար թունդիրը վառում էին,

չուզունե ամանի մեջ էնքան էին եռացնում, մոռությունը գոլորշանում էր: Դնում էին դրադ, պաղում էր, հետո լցնում էին չինիքը (չինի՝ յուղի կճուճ), հարմար տեղ դնում, օգտագործում: Ձիթով տոլմա էին անում, ժարիտ, բիշի (էդ երևի լոռեցիներն են բերել): Ձիթով տոլման կարտոշկով տոլման էր, էտի ասում են՝ **ֆրանկի տոլմա**:

Առաջ էրիշտա էլ են շատ սարքե. խմորը սարքում ին, շորը քցում ին վրեն, մի 10 տղա էլնում ինք վրեն լավ տրորում ենքան մինչև ճտճտում էր, ասումին հասելա: Կտրողը ջուկ էր, փռողը ջուկ էր, ով գրտնակ ուներ, նա էր կտրում: Հիմա էլ չեն անում, խանութներից ենք առնում: Վերացել ա, որովհետև ջուր չի լինում, ցորենը դառնում ա կարմիր հատիկ, որակով չի, դրանից հաց չի լինում»:

Հիշում են՝ ձավարով, ոսպով պասուց տոլման՝ դարձյալ կտավատի ձեթով:

Բոլոր գյուղերում վկայաբերում էին էրիշտա սարքելը՝ որպես մոռացված և կարոտով հիշվող ավանդույթ, որը կապվում էր հարևաններով, կանանցով հավաքվելու, իրար հետ աշխատելու, ընտանիքի համար մթերք ստեղծելու և ընդհանուր ուրախության հետ:

Ուտեստը կանանց շնորհիվ դառնում է նաև ընտանիքների, միջսերնդային կապի կայուն ապահովման, միջավայրաստեղծ գործոն:

Ցորենը տանում էին ջաղաց, հատուկ էլեկտրական մեքենայով աղում: Փոխինձը ջրով էփում են, աղ են ավելացնում, հետո յուղ են ավելացնում, կա՛մ կաթով են ուտում, կա՛մ մեղրով: Լանջիկում մենք ունեինք թասի նման կավե մեծ ամաններ, եփած փոխինձը լցնում էինք մեջը, մեջը փոս էինք անում, վրան ավելացնում էինք կաթով շաբբաթ, հետո յուղ և ուտում էինք: Մենք ութ երեխա էինք, բոլորս ուտում էինք նույն ամանից: Շաբբաթի տեղը նաև կաթ էին լցնում:

Ավանդական ուտեստի պրակտիկաների նվազմանը զուգահեռ՝ թուլանում է նաև ուտեստի միավորող դերը:

Ամեն գյուղ, փաստորեն, բացի ընդհանուր ուտեստներից, ունի յուրօրինակ այցեքարտ: Լանջիկում դա կարտոլով տոլման է, որ հայտնի է նաև որպես «ֆրանգի տոլմա»՝ տարածքի կաթուղիկ հայերի՝ ֆրանգների գյուղը հիմնելու պատմությունների առնչությամբ, Նոր կյանքում՝ անկաճել կարտոլով շուվան, Ձիթհանքովում՝ կտավատի ձեթով պատաստած տարբեր ուտեստները: Կտավատի ձեթը խորհրդային տասնամյակներին օգտագործվել է այլ գյուղերում ևս, քանի որ ձիթհան ունեցող գյուղերում աշխօրի դիմաց նաև ձեթ է տրվել:

Ըստ կլիմայական և գոտիականության պայմանների՝ հիմնական բանջարեղենը ավանդական կենցաղում կարտոֆիլն էր, կաղամբը, դդումը, ճակնդեղը, որոնք կայուն պահպանվել են գյուղական խոհանոցներում:

Անասնապահությունը, երկրագործությանը զուգահեռ, եղել է ուսումնասիրված համայնքների կարևոր զբաղմունքը (բացի Պեմգաշենից, որը զարգանում էր որպես արդյունաբերական կենտրոն): Կաթն ու կաթնամթերքը, ըստ այդմ, կարևոր էին ուտեստի համակարգում: Ուտեստային պրակտիկաները մի մասով «կենտրոնացած» էին լավաշի շուրջը, մեկ այլ կարևոր առանցք ձևավորված էր արդեն պանրի բաղադրիչով: Ուսումնասիրված համայնքներում ամենահայտնին ու հարգին չեչիլ պանիրն էր, որի պատրաստումը նույնն էր բոլոր գյուղերում: Պանիր պատրաստելու մասին հիշողությունները կապված են նաև սարի հետ, որտեղ տասնամյակներ շարունակ ամռան ամիսներին աշխատել են կթվորուհիները, նախրապան ու վարորդ տղամարդիկ. *«Կաթը տեղում (սարում) մշակում էինք: Սովետի ժամանակ մենակ չեչիլ ենք սարքե: Անքաշ (առանց յուղը գտելու) մենակ օջիւրրի կաթից ենք էրե: Աշխօրին կուտային: Չեչիլը սարքել ենք կաթը գտելուց հետո: Առավոտվա կթածը լցնում էինք բոչկեն հարի իրգունը... Օր զրտում էինք, հում սեր էր էլնում, օր կարագ էղներ: Կաթն էլ թթվում էր, իրգվանը լցնում էինք վրեն, մերվում էր, չեչիլ էինք քաշում: Հուսակ էլ կար: Թնդիրը վառեցինք, կաթը դրեցինք, գտեցինք, հում սերը գնաց*

կարագի: Տակի մնացածը սարքեցինք չեչիլ. . . Նորից դրեցինք կրակի վրա, շերեփով փռորցնում էինք, փաթթվում էինք էր: Մատ էինք զարգըմ, օր կաթը տակցել է, մե գդալմ մայա էինք գցում ու խառնում էինք: Շերեփով հանեցինք, պտտեցինք, քցեցինք փետին, երկըրցալ: Հուսակը թելն է: Շատ ենք էրե: Տունն էլ պանիր կենեինք՝ չեչիլ էլ, անքաշ էլ: Լավ պանիր սարքող ամեն մարդ իրա համար սարքել է: Մեր գյուղում Քյալղազարի Վարդանուշն էր լավ սարքող, մեր վարպետն էր: Էլ մարդ չկար: Ես իմ մորից եմ սորվե: Չեչիլ սարքելը դժվար էր, հատկապես հուսակին թն էր պետք, իսկ չեչիլին՝ չէ: Ճիրվալ, աղ ցանեցինք, պայեցինք, կերանք»:

Ժամանակի ընթացքում որոշ փոփոխությունների են ենթարկվել նաև պանիր պատրաստելու պրակտիկաները: Այսօր հազվադեպ մարդիկ են, որ պահել են պանրի



Պանիրը՝ կճուճներում Լանջիկ

կարասներն ու պանիրը դրա մեջ են պահում: Լանջիկ գյուղում չեչիլ պանիրը խնամքով դասավորում են, սեղմում են կավե կճուճների մեջ, այնուհետև կճուճի բերանը փակում են և շրջում մոխրի մեջ, այսինքն՝ կարասը ամբողջությամբ թաղվում է մոխրի մեջ, ինչի շնորհիվ պանիրը հասունանում է, ստանում յուրատեսակ խորը համ (սա կոչում են կճուճի պանիր), և երկարաժամկետ պահպանության ընթացքում կարող է վերածվել բորբոսով պանրի (կանաչած պանիր), ինչը պանրագործության

մեջ բարձրարժեք հատկանիշ է համարվում: Ավելի տարածված է չեչիլը ապակյա բանկաների մեջ պահելը, ինչն ավելի հեշտ է: Այս «կանաչած» պանիրի մեկ կգ-ը 3500 դրամ է, որը տեղացի բնակիչները փոխանակում են հագուստի կամ մթերքների հետ, ինչպես նաև վաճառում են շուկայում կամ շուկայում դուրս այլ ցանկացողների:

Բոլոր գյուղերում այսօր էլ կան բազմաթիվ կանայք, որ պանիր են պատրաստում, շատերը նաև վաճառում են: Գյումրու շուկայում էլ չեչիլ պանիրը ամենաշատ վաճառվողներից է, այն ուղարկվում է Ռուսաստանում ու այլ երկրներում բնակվող հարազատներին և շարունակում է մնալ շիրակյան համերի հիմնական բաղադրիչներից մեկը:

Մածունը, կարագը, յուղը, թանը կտրելուց ստացված զանգվածից չորթանը դեռևս պատրաստվում են գյուղերում՝ շարունակելով ավանդույթները:

Չորթանով ճաշ

Կարագ ստանալու արդյունքում ստացված թանը կտրել, քամել, զանգվածը ձեռքով տապակացնելով դարձնել գնդիկներ, չորացնել: Օգտագործելուց առաջ գոլ ջրով հարելով՝ բացել, եռացնել, առանձին պատրաստել յուղով առատ սոխառած, լցնել վրան, ուտել չոր լավաշով:

Ընդհանուր գծերով այս է ուսումնասիրված 4 բնակավայրի ուտեստի համակարգը: Բազմաթիվ մանրուքներ, մանրամասն նկարագրություններ, բնականաբար, ներկայացված չեն, ինչը պայմանավորված է հետազոտության նպատակով ու խնդիրներով:

Հետազոտությունը՝ որպես ընդհանուր դիտարկում, թույլ է տալիս արձանագրել, որ ինչպես մշակութային ժառանգության այլ բաղադրիչներ, ուտեստի ու հացկերույթի մշակույթը նույնպես

- ✓ բավարար չափով ուսումնասիրված չէ,
- ✓ ներառված չէ բնակավայրերի մշակութային ժառանգության քարտեզներում,

- ✓ ըստ այդմ՝ ներառված չէ նաև բնակավայրի զարգացման ծրագրերում, չնայած փաստաթղթերում հպանցիկ ակնարկներ կան հատկապես զբոսաշրջության զարգացման առումով:

Ուտեստի համակարգը, մշակույթի համալիրներից ամենաբարդերից մեկը լինելով, իրականում ունի նաև չափազանց կարևոր կիրառական կողմեր, որոնք կարող են օգտակար լինել նաև «EULead4Shirak» ծրագրի գործողությունների համար:

❖ Հետագոտված 4 բնակավայրում ուտեստի համակարգը ձևավորվել է մարդու ու բնության շուրջ երկու հարյուրամյա փոխհարաբերությունների արդյունքում: Այս ընթացքում ամբողջացել է բնության, բույսի ու ծաղկի համային, հոտային, այլ հատկանիշների մասին գիտելիքը, որ հետո արդեն դարձել է կոնկրետ կերակուր հայ կնոջ հմուտ ձեռքով: Նախախորհրդային շրջանում, մասամբ նաև խորհրդային տարիներին «ուտեստային գիտելիքի» փոխանցումը, ընտանիքի կազմով ու կառուցվածքով պայմանավորված, տեղի է ունեցել հիմնականում ընտանիքի ներսում՝ մորից դստերը կամ ավագից կրտսերին սկզբունքով: Խորհրդային շրջանում ուտեստային պրակտիկաները, ինչպես նաև գիտելիքի փոխանցման եղանակները ենթարկվեցին որոշակի փոփոխությունների: Հատկապես հետպատերազմյան տասնամյակներում, գործարանային արտադրության ծավալների աճով, կնոջ ու տղամարդու զբաղվածության փոփոխություններով թելադրված, տեղի ունեցավ որոշակի համահարթեցում: Չնայած սրան՝ ուտեստը՝ որպես մշակույթի ինտիմ ու միաժամանակ պահպանողական համակարգերից մեկը, դեռևս պահպանում էր ավանդական բազմաթիվ տարրեր. բուսահավքչությունը, թոնրի վրա թխվող լավաշն ու չեչիլ պանիրը այդ ավանդականության կարևոր դրսևորումներն են, Շիրակի ուտեստի համակարգի յուրօրինակ այցեքարտեր:

❖ Ուտեստի համակարգի ձևավորման, կայացման, փոխանցման գործում ամենամեծ վաստակը կնոջն է: Հենց նա է խոհանոցի տեսքի ու բովանդակության ձևավորողն ու այս ոլորտ փոփոխություններ բերողը: Ինչպես նախկինում, նույնպես և մեր օրերում կինը շարունակում է մնալ նաև գիտելիքի հիմնական կրողը: Այսօր էլ նա



է հիմնականում զբաղվում բուսահավաքչությամբ, բույսերի վերամշակմամբ ու պահածոյացմամբ, կինն է հացահատիկի հումքի հիմնական մշակողն ու վերամշակողը, կաթնատնտեսությունը ևս հիմնականում նրա մենաշնորհն է: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ նաև կինն է արդյունքի՝ կերակրի, մթերքի, հիմնական հանրայնացնողը: Ընտանիքի ներսում նա հանդես է գալիս որպես կերակրող, ընտանիքից դուրս՝ արդեն որպես վաճառող կամ փոխանակող (գյուղում, Գյումրու շուկայում):

❖ Կնոջ այս փորձառությունն ու գիտելիքը, սակայն, բավարար չափով կարևորված ու արժևորված չեն մի քանի պատճառով: Ընտանիքներում այսօր էլ ուտեստի կազմակերպումը համարվում է գործողություն, որը կնոջ դաշտն է, և որը, սակայն, լուրջ գիտելիք չի պահանջում «կին է, պետք է կարողանա անել», կամ «կին է, անում է» բանաձևերի շրջանակում: Գործողությունը բավարար չափով չկարևորելը իր հերթին հանգեցնում է նրան, որ այդ գիտելիքի ու արդյունքի հանրայնացման խնդիրը չի դիտարկվում. հիմնական դրսևորումը, տվյալ դեպքում բուսահավաքչության արդյունքի ու պանրի վաճառքն է, որ կազմակերպում են սահմանափակ թվով կանայք:

❖ Կնոջ գիտելիքի, հմտությունների ու ունակությունների այս ընկալումը իր հերթին բերում է նրան, որ արդեն համայնքային մակարդակում չեն ձևակերպում ուտեստն ու ուտեստային պրակտիկաները որպես զարգացման բաղադրիչ ուսումնասիրելու ու քարտեզագրելու խնդիրը: Ուտեստը, լայն առումով, բացակայում է ոչ միայն ուսումնասիրված, այլև բազմաթիվ այլ բնակավայրերի մշակութային ժառանգության քարտեզից:¹¹⁶

¹¹⁶ Թեպետ այս հետազոտության մեջ ընդգրկված գյուղերից Լանջիկը և Ձիթհանքովը 2022թ. մասնակցել են «Հայկական Կարիտաս» կազմակերպության կողմից իրականացված «Արի գյուղ» ծիսական փառատոնին՝ ներկայացնելով տեղական սնունդ և սովորույթներ, որը, սակայն, ինչպես բազմաթիվ փառատոներից հետո, չի իմաստավորվել որպես համայնքների զարգացման հնարավորություն: Սակայն այս փորձառությունը օգտակար կարող է լինել LEAD4Shirak ծրագրի համար՝ մասնակիցների փորձառության, հանրային միջոցառումների մասնակցության փորձի շարունակական կիրառման և համագործակցության ցանցն ընդլայնելու իմաստով:

❖ Նման մոտեցումները, իրենց հերթին սահմանափակում են ուտեստի ու հացկերույթի մշակույթի գործառական սահմաններն ու կարևորությունը: Աշխարհում այսօր, սակայն, զարգացման միտումներն այլ են: Բազմաթիվ երկրներում ուտեստն ու հացկերույթը դիտարկվում են որպես մշակութային ինքնության, մշակույթի ու արժեքային համակարգի վրա կարևոր ազդեցություն ունեցող համակարգ և ըստ այդմ, ներառվում են պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների մշակութային ու կրթական քաղաքականության բազմաթիվ փաստաթղթերում:

❖ Ուտեստն ու ուտեստի մշակույթը կարևոր են կրթական ծրագրերում, քանի որ հնարավորություն են տալիս կոնկրետ միջավայրում (գյուղական բնակավայրում) ամբողջացնելու բնություն-տուն-խոհանոց շղթան, ճանաչելու շրջակա միջավայրն ու վերաբերմունք ունենալու դրա հանդեպ:

❖ Ուտեստային մթերքի մասին գիտելիքը նաև բնապահպանական կրթության կարևորագույն բաղադրիչ է, որ ուսումնասիրված բնակավայրերում, Հայաստանում ընդհանրապես ակտիվ կիրառություն չունի:

❖ Ուտեստը, հացկերույթը կարևոր դեր են խաղում համայնքային համախմբվածության, զարգացման տարբեր ծրագրերում ու նախաձեռնություններում: Կոլեկտիվի, համատեղ կատարվող գործողության զգացողությունն ուժեղ է հատկապես տոնական կյանքում ու ծիսական արարողությունների ժամանակ: Սեղանը, կերակուրն ու հացկերույթը բոլոր համայնքային տոների կարևոր բաղադրիչն է, որին սակայն, տեղական մշակութային ժառանգության հանրայնացման տեսանկյունից բավարար ուշադրություն չի դարձվում: Այսօր էլ տարբեր տոների «ճաշացանկը» ստանդարտ է, ոչնչով չտարբերվող, այն դեպքում, երբ համայնքային տարբեր տոներն ու միջոցառումները կարող են դառնալ ուտեստի միջոցով համայնքային ինքնության ձևավորման վրա որոշակիորեն ազդելու և այդ համայնքային ինքնությունն ի ցույց դնելու հնարավորություն: Չորս բնակավայրն էլ, ընդհանրություններով հանդերձ, այս հնարավորությունն ունեն, որովհետև յուրաքանչյուրում առկա են տեղականը,

յուրահաստուկը, տարբերվողը, որոնք կարող են դառնալ համայնքային համախմբման յուրօրինակ առանցք:

❖ Զբոսաշրջության զարգացման արդի հայեցակարգերում նույնպես ուտեստը կարևոր, եթե ոչ առանցքային դեր է խաղում: Գաստրոտուրիզմը ժամանակակից զբոսաշրջային ինդուստրիայի կարևոր ու դինամիկ զարգացող ուղղություններից է: Այդ շրջանակներում զբոսաշրջային կետ հանդիսացող համայնքները իրենց դիրքավորում են հենց որպես լոկալ մշակույթի առանձնահատկություններ, ըստ այդմ նաև՝ տարբերվող առաջարկ ունեցող կետեր, ստեղծում համայնքային կամ տարածաշրջանային բրենդներ: Ուսումնասիրված չորս համայնքում միասնական բրենդը «լավաշ-պանիր-վայրի բույսեր» շղթան է, որն արդեն կոնկրետ բնակավայրում կարող է համալրվել կոնկրետ ճաշատեսակներով (ֆոանգի տոլմա, արիշտա, ածիկ, ձեթով կերակուրներ ու այլ):

❖ Այս խնդիրները լուծելու համար հետազոտությունում արդեն կատարված նախնական քարտեզագրումը EULEAD4Shirak ծրագրի, SUԽ-երի, համայնքային ակտիվ խմբերի ու առանձին դերակատարների մասնակցությամբ կարող է դառնալ կոնկրետ գործողությունների շղթա.

Գիտելիքի ամբողջացում. սրա հիմնական դերակատարները դպրոցներն են, երիտասարդական տարբեր խմբերը, մանկավարժները, արվեստի ու մշակույթի կրթական միջավայրերը:



Գործողությունների պլանի մշակում. հիմնականում նույն դերակատարները, սակայն այս փուլում ավելանում են համայնքների աշխատողներն ու այլ ակտիվ դերակատարներ:



Գործողությունների իրականացում.

- կրթական ծրագրեր, համայնքային նախաձեռնություններ, տոներ, միջոցառումներ, համայնքների ու տեստային պրակտիկաների նորովի, կիրառական առումների շեշտադրմամբ:
- Համայնքների ու առանձին բնակավայրերի զարգացման ռազմավարական ծրագրերում «ուտեստային ու հացկերության» բաղադրիչի մշակում ու ըստ այդմ գրոսաշրջային երթուղիների ու այլ ծրագրերի մշակում: Սա իր հերթին կարող է բերել հյուրատնային բիզնեսի զարգացմանը (չորս բնակավայրն էլ այս տեսանկյունից բարենպաստ աշխարհագրական դիրք ունեն), տարբեր կրթական ծրագրերի իրականացմանը (միջազգային ու տեղական տարբեր կազմակերպություններ, այդ թվում՝ EU-LEAD4Shirak-ը խրախուսում են առաջին հերթին գյուղական համայնքների զարգացումը), բնակավայրերի ներսում տնտեսական ակտիվության աճին՝ սպասարկող խմբերի ձևավորմամբ, վերջնարդյունքում՝ համայնքում մշակույթի ու մշակութային ժառանգության հենքի վրա բիզնես միջավայրի ու մթնոլորտի բարելավմանը:

Տոնական ավանդույթներ և համայնքային համախմբման հնարավորություններ

Նշված համայնքներում, ինչպես Հայաստանի մշակութային լանդշաֆտում առհասարակ տոնական կյանքը կարող է վկայել տեղական պատմության և քաղաքական փոփոխությունների մասին: Քանի որ տոները համայնքի, խմբի համար որևէ կարևոր իրադարձության պարբերական նշումն են, կենսունակ տոները ցույց են տալիս այս տոնը նշողների արժեքային, հավատալիքային պատկերացումները:



Տոները նաև լավ առիթ են համայնքի վերամիավորման, ազգակցական, հարևանական, սոցիալական կարևոր կապերը վերաթարմացնելու կամ հաստատելու համար՝ տոնական փոխայցելությունների, շնորհավորանքների և տոնական միջոցառումներին մասնակցելու իմաստով: Տոների մասին տեղական պատմությունները նաև կապեր են ստեղծում ժողովրդական օրացույցի, տոնական ուտեստի, խաղերի հետ զուգահեռներ տանելու համար:

Հայ ժողովուրդը մինչև խորհրդային կարգերի հաստատումը նշում էր տարբեր տոներ, որոնք հիմնականում եկեղեցական էին, կամ ժամանակի ընթացքում, գալով հեթանոսական ժամանակներից, քրիստոնեացվել էին և պահպանվել որպես կենդանի սովորույթներ՝ ստանալով լրացուցիչ քրիստոնեական մեկնաբանություններ: Ժողովրդական այս տոները կարող էին լինել անշարժ, այսինքն՝ ունենալ նշման սահմանված օր, օրինակ՝ Հունվարի 6-ը՝ որպես Քրիստոսի Ծննդյան տոն, կամ շարժական, այսինքն՝ փոփոխական էր և որոշվում էր տոմարական հաշվարկներով ու սահմանվում եկեղեցու կողմից, ինչպես, օրինակ, Ս. Հարության տոնը՝ Ջատիկը:

Այս իրողություններից բացի, տոների նշման ժամկետների առնչությամբ Շիրակի մարզում առանձնահատուկ է կաթոլիկ հայերի տոնական համակարգը, որը որոշակի ժամկետային փոփոխություններ է սահմանում, այսպես եթե Տյառնընդառաջը՝ Տրնդեզը, Հայաստանում նշում են փետրվարի 13-ին, ապա կաթոլիկ հայերի գյուղերում՝ փետրվարի 2-ին: Եթե մինչև 1950-ականները կաթոլիկ և առաքելական հայերի միջև դեռևս պահպանվում էին մշակութային սահմանները, ապա աստիճանաբար խառը ամուսնությունների հետևանքով նկատվեցին սովորույթների որոշակի փոխառնչություններ, ինչպես, օրինակ, Խաչվերացի տոն՝ Սբխեչի նշում, որը կաթոլիկ հայերի տոնացույցում ակտիվ չէր, բայց աստիճանաբար նշում են, քանի որ առնչվում է ննջեցյալների հիշատակման ծեսերին. «Տերընդեզ իրանք՝ ֆրանգները, փետրվարի 2-ին կենեն, առաքելականները՝ 13-ին կամ 14-ին: Փոքր ժամանակ էլ ամսի մեկին տերընդեզ կվառեին իրանց կտուրներին, իսկ ըստ մեր առաքելական եկեղեցու՝

վառել ենք 13-ին: Հետո առաքելական հարսներ որ եկան, արդեն խառնվեց: Բայց մեկ է, կարող է կաթոլիկական աղաթով նշեին: Առաջ մեր մոտ Սուրբ խաչը չկար, մենք օր աղջիկ-տղա տվինք առանք, դրսից արդեն սկսեցին գալ, սկսեցին նշել»: (Լանջիկ):

«Կաթոլիկները Քրիստոսի ծնունդը դեկտեմբերի 25-ին կնշեին, բայց էն թվերին չկար, մինչև էս վերջերս Տիրամայր Հայաստանից քույր Արուսյակ, քույր Ռեբեկան էգան, սկսեցինք նշել»: (Լանջիկ):

Կաթոլիկ եկեղեցու տոնական համակարգի առանձնահատկությունները կարևոր է հաշվի առնել՝ նախ տվյալ համայնքների մշակութային առանձնահատկությունները շեշտադրելու, ապա դրանց կիրառման առումով նոր նախաձեռնություններ մտածելու համար:

Հայոց ավանդական կենցաղում տարեսկիզբը՝ **Նոր տարին**, հունվարի 1-ին նշելու սովորությունն արմատավորվել է XIX դարի վերջերից, իսկ որոշ շրջաններում՝ XX դարի սկզբից: Տոնի նախապատրաստությունները սկսվում էին դեռևս աշնանից, երբ տանտիրուհիները հատուկ ամանորյա խնջույքի համար պատրաստում էին զանազան չրեր, ընդեղեն, մառաններում կախում էին տարբեր անուշաբույր մրգեր՝ տանձ, խնձոր, սերկևիլ, նուռ և այլն: Բուն տոնական նախապատրաստությունները սկսվում էին տոնական ուտեստների պատրաստությամբ: Ի տարբերություն հայոց ժամանակակից կենցաղի՝ ավանդական հայոց ամանորյա հյուրասիրությունն առավել պարզ էր: «Նոր տարուն փշատն էր, չոր թուրթ, միրգը չոր, տոլմա, գինի, էն էլ Հոկտեմբերյանից էր»:

Տյառնընդառաջը խորհրդանշում էր ձմռան ավարտն ու գարնան գալուստը և ուներ ձմռան ավարտին «օգնելու» և գարնան գալստին «նպաստելու» խորհուրդ: Ժողովրդական ասացվածքի համաձայն՝ *«Տերընդեզն արա, դուրս էլ բակը»*, այսինքն՝ հենց որ Տերնդեզն անցնի, ձմեռային փակ, տնային կյանքից արդեն կարելի է անցնել բաց, դրսի կյանքի: Տոնական ժողովրդական ծեսերը հստակ ուղղորդված էին և կրում

Էին գարնան նախապատրաստության, հողը, կենդանիներին, մարդկանց և ամեն նորը պտղավորելու գաղափարը:

Տոնի գլխավոր խորհրդանիշը կրակն էր և խարույկը: Տյառնընդառաջի՝ խարույկի շուրջը տեղի ունեցող ծիսակատարությունները միտված էին երիտասարդությանը, սիրուն, ամուսնությանը, պտղաբերությանը: Տոնակատարությունների առանցքը նորապսակներն էին: Խարույկը վառվում էր առավելապես նրանց համար, և գլխավոր խորհուրդը նորապսակների պտղաբերության ապահովումն էր:

Պտղաբերություն ապահովելու խորհուրդն ունեին նաև տոնին բնորոշ ծիսական ուտեստները՝ աղանձը, հալվան, գաթան, փոխինդը: Դրանք առատորեն պատրաստվում էին ինչպես հյուրասիրության, այնպես էլ հարսնացուին ուղարկվող «տերնդեզափայերի» մեջ ներառելու նպատակով: Դրանց մեջ դրվում էին նաև մրգեր, չրեր, գինի, հարսի համար նախատեսված նվերներ՝ սկեսրոջ և քավորկնոջ, փեսայի ազգականների կողմից: Որոշ շրջաններում՝ Ջավախքում, Շիրակում, Կարսում, ընդունված էր հարսի տուն տանել նաև կաղինով (պնդուկ) լի մատուցարան, որով հարսի տանը խաղ էին կազմակերպում: Խաղը կոչվում էր «գույգ և կենտ»: Այն սկսում էին հարսն ու փեսան, ապա միանում էին բոլոր ներկաները: Խաղացողներից մեկը ձեռքում պահում էր կաղինները, իսկ խաղընկերը պետք է գուշակեր՝ կաղինները գու՞յգ են, թե՞ կենտ. ճիշտ գուշակողը համարվում էր հաղթող և ստանում կաղինները:

Բոլոր ընտանիքներում տոնականություն էր ապահովում այդ օրն աղանձ և հալվա պատրաստելու՝ համընդհանուր տարածում ունեցող սովորույթը: Այդպիսով, ողջ համայնքը, անկախ ընտանիքի կազմից, ներգրավվում էր տոնակատարությունների շղթայում՝ համատեղ իրականացնելով պտղաբերությանն ու բարեբերությանը, սիրուն միտված ծիսակատարություններ:

Բարեկենդանը՝ որպես հայկական ավանդական տոնացույցի առանցքային տոներից մեկը, արդեն 19-րդ դարի վերջին մարում էր, այնուհետև լիովին դուրս եկավ կենցաղից, այնինչ այն հասարակական հարաբերությունների ցուցադրման,

հիերարխիաները ծաղրելու, հասարակական դիրքերը փոխելու տոներից էր, որի 2 շաբաթների ընթացքում կատարվում էին թատերախաղեր, պատրաստվում էին ճոխ ուտեստներ՝ մսեղեն, յուղով հագեցած, առատ, ինչպես նաև բազմազան խմորեղեն՝ շիրակյան հայտնի շաքար լոխումը և փախլավան:

Բարեկենդանին հաջորդում էր 7-շաբաթյա պահքի շրջանը, երբ արգելվում էր կենդանական ծագման սնունդի օգտագործումը: Պասի հսկիչը հայկական մշակույթում պատրաստված ակլատիզն էր՝ սոխի կամ կարտոֆիլի վրա ամրացված 7 շաբաթները խորհրդանշող 7 փետուրներով, որին և առնչվում էր նաև խաղերի բաժնում նկարագրված ակլատիզի խաղը:

Մեծ Պահքն ավարտվում էր Ս. Հարության տոնով՝ ժողովրդի մեջ հայտնի Ջատիկ անվանմամբ: Ջատիկը ուրախության տոն է, մինչ օրս էլ շատ կենսունակ է, անգամ պահպանվելով խորհրդային աթեիզմի՝ անաստվածության պայմաններում, կարողացել է կենսունակ մնալ նաև ներկայումս: Ջատիկի հիմնական ծիսական ուտեստը ներկած հավկիթն է, որը Շիրակի մարզում ավանդաբար ներկում էին տարբեր բույսերով և քարաքոսերով, ապա՝ չոր սոխի կլեպով, իսկ ներկայումս նաև սննդային բազմազույն ներկերով: Ջատիկն ընտանեկան տոն է, բայց ունի համայնքային լայն ընդգրկում, քանի որ Ջատիկի ճրագալույցին հաջորդող կիրակին՝ 'մատղի օր էր», այսինքն՝ համայնական մատաղ՝ զոհաբերության ծեսի, երբ համայնքի բոլոր անդամները ներդրում էին անում և համատեղ ճաշակում: Ներկայումս որոշ գյուղերում, օրինակ, Պեմզաշենում, դեռևս որոշակիորեն պահպանվել է այս ավանդույթը, սակայն իրականացվում է գյուղապետի և գյուղի նյութապես ապահովված տղամարդկանց ջանքերով՝ Ջատիկի մատաղը հանուրի համար եփելով և բաժանելով:

Արագած ՏԱԽ-ի գյուղերում ամենանշվողը Համբարձման տոնն է, որը ակտիվ երիտասարդական տոն է և նշվում էր Ս. Հարության տոնից քառասուն օր հետո: Այն շարժական տոն էր, սովորաբար համընկնում էր հինգշաբթի օրվան: Ներկայումս՝





Տոնի աշխատանքային օր լինելը որոշակիորեն ազդում է տոնի կենսունակության վրա, թեպետ գյուղերի երիտասարդները պատմում էին, որ դպրոցներում Համբարձման տոնի օրը որոշակի փոփոխություն ժամանակացույցում կատարվում է, որ կարողանան «Համբարձում խաղալ»: Ընդ որում դպրոցներից մեկում՝ ի պատասխան դպրոցի տնօրինության Համբարձում խաղալու համար դասերից շուտ ազատելու արգելքի, դպրոցականները բողոքի ակցիա են արել և պահանջել «Համբարձում տոնելու» իրենց իրավունքը վերականգնել:

Համբարձման տոնը հայոց ավանդական տոնացույցի գարնանային տոներից էր, որը ևս ներառվել էր քրիստոնեական տոնացույցում՝ ստանալով նաև կրոնական մեկնաբանություն: Ժողովրդական ընկալումներում տոնն ուներ սիրո, պտղաբերության, կյանքի սկզբնավորման, շարունակելիության խորհուրդ: Համբարձման տոնը նշվում էր ոչ թե ընտանեկան հարկի տակ, այլ բնության գրկում, այդպիսով տոնի խորհուրդը ևս ձգտում էին փոխանցել բնությանը: Տոնական ծիսակատարություններում հիմնական դերակատարները երիտասարդներն էին, ինչը ինքնին վկայում է Համբարձման տոնի և սիրո, պտղաբերության գաղափարի առնչությունները:

Այս գյուղերում Համբարձման խորհրդանիշ բույսերն են սինձը և Համբարձման դեղին ծաղիկը. սնձի դաստաները՝ փնջերը, հավաքում էին, որ տնայցերի ժամանակ նվիրեին տանտերերին՝ որպես Համբարձման խորհրդանիշ:

Համբարձման տոնի իրականացման մեջ ներգրավված են համայնքի բոլոր տարիքային խմբերը, եթե երիտասարդները՝ տղաներն ու աղջիկները, խմբերով գնում են սինձ հավաքելու, փնջեր սարքելու, տղաները հսկում են աղջիկների խմբերին, «որ

հարսին չգողանան», ապա համայնքի մյուս անդամները մասնակցում էին՝ Համբարձման խմբերին տանը դիմավորելով, ձու, քաղցրավենիք տալով:

Համբարձման տոնի գլխավոր հերոսը հարսի զգեստով փոքրիկ աղջնակն է, որը պիտի շրջի խմբի հետ տնետուն և ունի կարևոր գործառույթ՝ պետք է լուռ մնա, չխոսի: Նյութերում նշվում է, որ ավանդական կենցաղում հարսին կա՛մ վախեցնում էին, կա՛մ իրականում մի սուր փշով լեզուն վնասում էին, որ լուռ մնա:

Եթե Հայաստանի մյուս շրջաններում Համբարձման տոնին ընդունված է 7 աղբյուրներից ջուր հավաքել կժով, ապա Շիրակի այս գյուղերում, աղբյուրների հեռավորությամբ պայմանավորված, ջուր խնդրում են տներից, այնուհետև երգում են Վիճակի՝ Գովք խաղիկները, և երգի դիմաց ստանում են ձու, քաղցրավենիք կամ գումար: Հավաքված այս բարիքներով երիտասարդական խմբերը բնության մեջ զբոսախնջույք (պիկնիկ-խնջույք) են կազմակերպում:

Աղջիկների՝ կանացի սկզբի խնջույքը բնության գրկում կարծես կոչված էր արթնացնելու, պտղավորելու նաև բնությունը և կենարար ուժ հաղորդելու ծիլերին, ծաղիկներին:

Խորհրդային շրջանում տոները դիտարկվում էին որպես գաղափարախոսական ազդեցության գործիքներ՝ նվիրված խորհրդային կարգերի հաստատման կարևոր իրադարձություններին: Խորհրդային Միության փլուզումից հետո այս տոները դուրս եկան պաշտոնական տոնացույցից, դրանց փոխարեն տոնացույց ներառվեցին Հայաստանի Հանրապետության պատմության և քաղաքականության հետ կապված տոներ՝ քաղաքացիական տոներ՝ ինչպես, օրինակ, Մեպտեմբերի 21, Հուլիսի 5 և այլն, որոնք, սակայն, տոնելու ժողովրդական ձև դեռևս չեն ստացել, այլ շարունակում են կիրառվել որպես պաշտոնական հանդեսներ՝ ուղեկցվելով պաշտոնական ելույթներով ու կատարումներով:



Այս անգամ պաշտոնական տոնականությունն էլ ևս մեկ աստիճանով նվազել է՝ ըստ համայնքների խոշորացման, երբ բնակավայրերը այլևս չունեն տոները իրենց մեջ նշելու հնարավորություն. «Պեմզաշենում հուլիսի 9-ին նշում էինք համայնքի օրը, մարզպետն էր գալիս, այգու մեջ երաժշտական մեծ միջոցառում էինք կազմակերպում, հիմա՝ խոշորացումից հետո, էլ չենք անում»:

«Նախկինում մենք գյուղի տարբեր առիթներ նշում էինք, կարող էինք սպորտի առաջնություններ էլ կազմակերպել, բայց հիմա էլ չենք կարողանում, էնտեղից պիտի թույլ տան» (Նոր Կյանք):

Տոների վերազարթոնքը ևս համայնքային համերաշխությունը, սոցիալական կապերն ամրապնդելու կարևոր միջոցներ են. այս ուղղությամբ այսօր ո՛չ խոշորացված համայնքը, ո՛չ բնակավայրերը ջանքեր չեն ներդնում: Այնինչ, տոների աստիճանական թուլացման և անուշադրության մատնելու հետևանքով կտրվում է նաև մշակութային ժառանգության շարունակականության թելը, ինչը վերականգնելը անհամեմատ ավելի բարդ գործընթաց է, քան կենսունակ պահպանելու ուղղությամբ ներդրվելիք ջանքերը:

Ժողովրդական խաղերը՝ որպես սոցիալական կապեր ամրապնդող գործիքներ

Խաղերը ժողովրդական մշակույթի մաս են, որոնք, բացի ժամանցից, մշակութային ժառանգության փորձ են պարունակում՝ հանդիսանալով բարբառի, հմտությունների, տարիքային խմբերի ունեցած դերերի, հասարակության մեջ կարևորված արժեքների մասին շտեմարաններ։ Բնականաբար, խաղերը ժամանակի ընթացքում փոփոխվում և արձագանքում են նաև ժամանակաշրջանի փոփոխություններին՝ խաղի համար անհրաժեշտ իրերից մինչև խաղերի բովանդակություն, մասնակիցներ ու տարիք։

Ազգագրագետ Վ. Բդոյանի «Հայ ժողովրդական խաղեր» եռահատոր աշխատությունը հայկական խաղերի մասին համահավաք աշխատանք է, որից դուրս դժվար է նոր նյութեր և տեղական մասնավոր օրինակներ գտնել։ Սակայն մենք հետազոտության ընթացքում փորձել ենք հավաքել նշված գյուղերին կամ Շիրակի մարզին բնորոշ խաղերը, ինչպես նաև դրանց ժամանակակից փոփոխությունները։¹¹⁷

Հետազոտության ընթացքում զրույցներում երիտասարդները և հատկապես երեխաները մեծ ոգևորությամբ էին պատմում իրենց խաղացած խաղերի մասին,

¹¹⁷ Վ. Բդոյանը խաղերը բաժանել է հասարակական հարաբերություններ ներկայացնող ժողովրդական դրամատիկական խաղերի, որոնք ընդգրկում են հետևյալ խմբերը.

1. *Տոնաձիխական-գաղափարական խաղեր*՝ Վարդանանց ճակատամարտի, Բարեկենդանյան խան-փաշա, մանկական զինվորական, մանկապատանեկան-սոցիալական, երիտասարդական դատավարական, վանական աբեղաթողի խաղեր,

2. *Տոնական ծիսախաղեր, զվարճանքներ ու ժամանցներ*,

3. *Կրկեսային խաղերի տարրեր*՝ կենդանիներ և թռչուններ կովեցնելու սովորություններ, լարախաղեր,

4. *Կենցաղային խաղեր*՝ որսորդության, անասնապահության, երկրագործական խաղեր,

5. *Ամուսնության և ընտանեկան խաղեր*՝ նախամուսնական շրջանի, հարսանիք և հարսանեկան խեղկատակություններ,

6. *Քաղաքացիական մրցակցական խաղեր*՝ ուժային վարժություններ, մենամարտեր, լախտախաղեր, բերդախաղեր կամ կտրոցներ, նշանառության խաղեր, չիլիկախաղեր,

7. *Ռազմական մրցակցական խաղեր*՝ զինախաղեր, մականախաղեր, ձիախաղեր, լեռնային սպորտի և այլ ռազմախաղեր,

8. *Մարմնակրթական-մարմնամարզական խաղեր*՝ ձեռնախաղեր, ոտնախաղեր, պահմտուկներ, շրջանաձև հետապնդիչ, շունչպահուկի, երկարության թռիչքի խաղեր, իծաշարուկներ, հեծնոցիկ խաղեր, հավասարակշռության և անակնկալային խաղեր, աչքակապուկներ, գուշակողական, պարանով և այլ խառն խաղեր,

9. *Մտավարժական խաղեր*՝ ժողովրդական հանելուկներ, կենդանիների, բույսերի և թռչունների անուններով խառը հանելուկներ, մնջախաղեր, գրավախաղեր, քարկտիկներ, սեղանախաղեր և դամախաղեր (տե՛ս Վ. Բդոյան, Հայ ժողովրդական խաղեր, հ. 1, էջ 293-296:

օրինակ, Լանջիկ գյուղում, նշելով, որ իրենք շարունակում են խաղալ բակում, գիտեն տարբեր խաղեր՝ էշ միլիցա, բադեր և որսորդներ, 7 քար են: Նոր Կյանք գյուղում դեռահասներն արդեն բակային խաղերով հետաքրքրված չեն, փոխարենը արդեն ձևավորվում էին ըստ սեռի բաժանված խաղային խմբեր և հետաքրքրություններ:

Տարիքով ավագները հիշողություններով փորձում էին վերականգնել այն խաղերը, որ իրենք խաղացել են .

Ղայիշոցի. բաժանվելինք գը երկու հավասար թիմի: Կեսը կանգնում է ներսում, կեսը՝ դրսում: Պարի պես սկսում ենք պտույտ տալ ու այնպես անել, որ ռեմենը (գոտին) փախցնեինք չորսի միջից: Մե հատը եթե տարանք, մնացածը կհավաքվենք մեկի վրա: Մենք էլ էնքան զարգեինք, մինչև ռեմենը փախցնեինք: 4-ն էլ կհանեինք դուս ու կսկսեինք ըդոնց դայիշներով ծեծել: Եթե իրանք ռեմենի ծերից մեկից բռնեին, քաշեին ներս, ըդիկ արդեն պարտություն էր:

Էշ միլիցա, 60-ական թվերին խաղացել ենք, չէ՛, էսի երգան էշն էր: Էշ միլիցին ուրիշ խաղ էր:

Հինգը քար կխաղայինք. փոսի մեջ ով օր գցեր, թագավորն էր, նազիր, վեզիր մեկ էլ ամենաքիչ քցողը դառնար զը ձի: Թագավորի ըսածը պտի կատարեր:

Կլասն ու յոթ քարը տղա-աղջիկ խառը կխաղայինք»:

Խաղերի մյուս խումբը կապված է տոնածիսական առիթների հետ, օրինակ Ս . Հարության տոնին «կատելով» գցելը՝ որպես հին հայկական գոտեկախի սովորության պահպանություն Լանջիկում:



Հանջիկ, կատելով գցելը Ս. Հարության տոնին, լուսակարը՝ Ս. Պողոսյանի ՖԲ էջից

Տյառնընդառաջի տոնին կրակի վրայով թռչելը ևս ավանդական խաղային ծիսական դրսևորումներից է:

Մեր ուսումնասիրած գյուղերում դեռևս կենսունակ են հատկապես Համբարձման տոնն ու տոնին առնչվող խաղերը, որոնք կքննարկենք տոների նվիրված մասում: «Համբարձում կխաղայինք, անձրև բերելու ծես ենք էրե. չուչել ենք շինե ցախավելի վրա, ընկել ենք թաղեթաղ, ես 13-14 տարեկան եմ եղե, երեխեքով էրել ենք, մեծ մարդ չի եղե, ես չեմ տեսե մեծ մարդ: Հայաթները, սարի գլոխը, տարբեր տեղեր խաղցել ենք: Ուր պատահի, խաղցել ենք»:

Հավելված խաղերի¹¹⁸

Տոների ժամանակ խաղացվող

1. Թագավորի էշ

¹¹⁸ Հավելվածում ներկայացված են Վ. Բդոյանի «Հայ ժողովրդական խաղերը» աշխատանքից ընտրված այն խաղերը, որոնք վերաբերում են Շիրակի մարզին և մեր հետազոտության ընդգրկման տարածաշրջանին:

Խաղում էին 10-20 տարեկան տղաները գարնան, ամռան և աշնան ամիսներին, 5 հոգով փորում էին ձագարաձև մի փուս և 3-5 մ հեռու քաշված գծի վրայից հերթով այդ քարերը գցում փուսի մեջ: Փոսի մեջ մեկ քար գցողը դառնում էր *գգրի էշ*, երկուս գցողը՝ *գզիր*, երեք գցողը՝ *թագավորի էշ*, իսկ չորս գցողը՝ *թագավոր*, սրանցից էշը կանգնում էր տիրոջ դիմաց: Հինգերորդ խաղացողը աշխատում էր բոլոր քարերը գցել փուսի մեջ, երբ հաջողվում էր, թագավորի ու գգրի միջև կռիվ էր ծագում, ուստի թագավորը հեծնում էր իր իշուն, և գզիրն՝ իր իշուն, ու հեռանում էին իրարից 5-7 մ, ապա խոյանում իրար վրա, աշխատելով մեկը մյուսին տապալել գետնին: Երբ գգրին հաջողվում էր տապալել թագավորին, այս դեպքում դերերը փոխվում էին. գզիրը դառնում էր թագավոր, և գգրի էշը՝ թագավորի էշ. թագավորը դառնում էր գզիր, և նրա էշը՝ գգրի էշ: Բայց երբ թագավորն էր տապալում գգրին, դերերն անփոփոխ էին մնում: Հինգերորդ խաղացողը քարերը նորից էր գցում փոսը, ընդ որում, համապատասխան քանակի քարեր գցելիս նա իր դերը դրա դերակատարի հետ փոխում էր, որով խաղը նորից էր կրկնվում: (Ախուրյան)

2. Ակլատիզ ծեծել

... Հմա մենք էլ եղ օրը հայիֆներս ակլատիզեն հանեցինք: Օխտը շաբաթ գլխներուս վերևը կախված մեզի ահ էր տալըմ:

...Սկսած (Մեծ պասի) առաջի շաբաթուց ամեն շաբաթուն սրով մի մի բմբուլ քաշըմ, ջարդըմ ու էն կողմ էինք քցըմ՝ էս ըսելով. - Ճիճու, ճիճվարանքը՝ դուրս, ցորեն, գարին՝ ներս:

Զատիկը մոտեցել է, էգուց ավագ հինգշաբթի է, պտի մնացածն էլ ջուրը քցենք: Էդ իրավունքը մամիցս առնելուն պես, տղա թախումս բոլոկով տան երթիկը կտրեցինք ու սկսանք կախած տեղեն դուրս քաշել ակլատիզը, որ մնացել էր սև բմբուլմ, սոխի գլուխը, թելն ու քարը, հառաջ քարի տակ դրինք, մի լավ ծեծեցինք, ընդից հետև ամեն մեկս մի ծերեն բռնած, ինչդ օր անոթի գիլանը՝ անտեր մնացած գառի, վազինք դիպա Արփաչայը, թապլինք քցինք ջուրն ու հետն ըսինք.

Ձմեռն անցավ, գարունն եկավ,

Պասը գնաց ուտիսն եկավ,

Քաշվի, կորի՝ գատիկն եկավ: (Շիրակ)

3. Կրակթռուկ

Գանձակում Տյառնընդառաջին նորապսակ երիտասարդները ցրտին ծառի ճյուղեր էին բերում և եկեղեցու բակում դարսում: Երեկոյան ժամասացությունից հետո եկեղեցու ջահից վերցրած մոմով վառում էին այդ խարույկը, որ «Դոնտառունչ» էր կոչվում, և նորապսակ զույգերը երեքական անգամ պտտվում էին շուրջը, և վերջը ամուսինները երեքական անգամ թռչում էին վրայից:

Զանգեզուրում նորապսակները պտտվում էին կրակի շուրջը, իսկ երբ բոցը մի քիչ իջնում էր՝ թռչում էին վրայից:

Շիրակում խարույկի վրայից այս ու այն կողմ երեք անգամ թռչում էին թե՛ մեծերը, թե՛ փոքրերը:

4. Ճեռ և կարկաչա

Ինչպես կարնոհայության մեջ, այնպես և այլ վայրերում, Ծաղկագարդին եկեղեցում «Փառք ի բարձունս» արարողության ժամանակ փոքր ու մանկահասակ երեխաները ճեռ ու կարկաչա էին խաղացնում: Քահանաներն օրհնած ուռենու ոստեր էին բաժանում ժողովրդին, որ վերագրում էին Քրիստոսի՝ Երուսաղեմ մտնելու խորհրդին: Այդ պատճառով վերոհիշյալ փայտե առարկաները ծառայում էին ձիթենյաց և արմավենյաց ոստերի փոխարեն: Ուռենու ճյուղերը բերում էին գլխավորապես նորապսակ տղաները և երբեմն անձամբ էլ բաժանում բոլոր ժամավորներին:

Նույն օրը՝ առավոտյան ժամերգությունից հետո, 6-10 տարեկան մանր երեխաները



ընկերներով կամ մենակ, ճեռերը և կարկաչաները ձեռներին ածելով, տնետուն ման
էին գալիս և հատուկ երգեր երգում .

Ճեռ-ճեռ ճեճենակ,

Աստու հալալ պեպենակ .

Ընկերս ընկավ ծովը,

Ծովը դառավ ծիրանի,

Պատկերքը դառավ հայլի .

Խունկ առեք, մոմ առեք,

Տասներկու պատարագ էրեք,

Զատկի հավկիթը դուրս բերեք:

Կարկաչա, կարինկաչա,

Սև եզան սև սամաթեռ,

Կարմիր եզան օղն ու կոճակ,

Ով որ չտա իմ երկու ձուն,

Մուկն ու կատուն իրենց թթուն .

Ով որ կտա իմ երկու ձուն,

Աստված պահե իր փեսացուն: (Շիրակ)

112. Ծաղկահավաք խաղ ու ժամանց

Արթիկի Մանթաշ (նախկին՝ Արխավայի) գյուղի վերաբնակվածների հաղորդման համաձայն՝ աղջիկների առաջին հավաքը տեղի էր ունենում երեքշաբթի օրը՝ գյուղի յուրաքանչյուր տան համար՝ մի-մի փունջ սինձ հավաքելու նպատակով: Աղջիկներն իրենցից մեկին Վիճակի հարս էին դարձնում, որը ոտից գլուխ ամուսնացած կնոջ տարագով էր զգեստավորվում: Հանդում ուտելու համար նստելիս աղջիկները Վիճակի հարսին առնում էին իրենց շրջանի մեջ:

Արծկեում ու Գործոթում (Բերկրի) ընտրում էին ամենագեղեցիկ աղջկան, զարդարում էին թանկագին հագուստներով և զարդերով, ապա առանց տղաների գնում էին ծաղկահավաքի: Այդ ժամանակ հոտաղները հարձակվում էին զարդարված աղջկա վրա՝ զարդերից մի բան խլելու, որ փրկանքով վերադարձնում էին: Հարս ու աղջիկ ճաշից հետո քաղած ծաղիկներից խաչփնջեր, ձիավորափնջեր և սիրափնջեր էին շինում: Այդ օրը 7 տեղից ջուր ու ավազ էին հավաքում 3-7 աղջիկներ առաց խոսելու: Մի ընտիր փունջ ծաղիկ դնում էին կճուճի մեջ, բերանը կարմիր շորով կապում: Այդ պատրաստի Վիճակի կճուճը աղջիկները, ձեռքերի մեջ առած, խաղացնում էին և Վիճակի երգեր երգում, ապա տանում, հանդում թաքցնում էին, որ տղաները չտեսնեն: Այն մնում էր աստղերի տակ: Աղջիկներն ամբողջ գիշեր հսկում էին փնջած ծաղիկները:

Ապարանում, Արթիկում և Աշտարակի լեռնային գյուղերում չորեքշաբթի օրը հավաքած ծաղիկներից մի-մի հատ վերցնելով պատրաստում էին Ջանգյուլումի փունջը: Ծաղկի բողջայի շուրջը պարում էին, հավատալով, թե դրան /պարին/ չմասնակցողը չէր ամուսնանա: Երեկոյան ծաղկաբոխյան տեղափոխում էին սնձի տունը և հսկում այն:

5. Հարսնառի ճակատամարտ

Հարսնառի մասնակիցներն ընտրաճուրիկ (ընտրյալ) թոռն ու գեղեցիկ երիտասարդներ են՝ քրդական շորեր հագած, ծոպերով փուշիք (սև փաթթան գլխու) սրածայր և պուճ (ծայրը փոս) դըֆթիկ քոլոսներ ու կամ բազմերանգ նախշված



արախչիներու շուրջը փաթաթած, բեխերը սրած, ընտիր ձիերու վրա հեծած, ձեռքներին երկայն ու հաստ փայտեր՝ և ոմանց՝ նաև զենքը առած երգելով քրդական լուռներ, ձիարշավով և ջրինդով (մականախաղ) առաջ կերթան: Ահա և մի խումբ ձիավորներու՝ որ աղջկան գյուղի կողմից կղիմավորե հարսնածին, ջրինդով մրցություն կսկսի, մեկն յուր ձին, մյուսն յուր ձեռքի ույծը կը փորձե, մական կձգեն, հարված կուտան, կերգեն, կը բռռան և հարայ-հրոցով կմոտենան գյուղին. բայց վերջին խմբի նպատակն է հարսնածից քոլոս փախցնել, որ եթե հաջողվի իրենց, հարսնածի համար մեծ անպատվություն կը համարվի: Ջրինդի իրարանցման միջոցին ղիմավորող խմբից մեկը հարսնածի անդամներից մեկի քոլոսը առնելով կը փախչի, բոլոր ձիավորները կընկնին հետևից, կողմնակիցները կը քաջալերեն, հակառակորդները կը հալածեն մինչև գյուղը: Եթե բռնել աջողեցան՝ լավ կը դընգսեն, իսկ եթե ոչ՝ կորագլուխ կը լինեն և 10-20 դուրուշ տալով քոլոսը հետ կառնեն:

Երբ քոլոս փախցնել տեղի չունենա, ձիավորները խաղը շարունակելով և իբրև ախոյաններ մրցելով կամաց-կամաց կը մոտենան գյուղին. գյուղի առաջ ջրինդի եղանակը զուռնաճին կը փոխե մի տեսակ քայլերգի, որ բավական սրտառուչ է. և երբ կը մտնեն գյուղը, խնամու բարեկամները, ազգականները և դրացիները, ընդունված սովորույթի համաձայն, կընդառաջեն հարսնածին և յուրաքանաչուրը 1-2 ձիավոր կը հրավիրե յուր տուն, ու հանդեսը կվերջանա:

6. Թագվորահորս

Հին հարսանեկան հանդեսների մեջ նորապսակ տղայի ֆիզիկական ուժը կամ նրա ռազմի ընդունակությունները փորձելու համար սահմանված <<թագվորահորս>> - ի ծեսը տեղի է ունենում Հայաստանի բոլոր գավառներում, տարբեր անվանումներով: Ուրմիռ հայերը Էջմիածնի Հայթաղ գյուղում անվանում էին <<Որսի առավոտ>>, որ տեղի է ունենում վերջին ճաշկերույթին՝ խաշի առավոտյան: Հավի ոտքերից բռնելով՝ մերկացրած սրին խփելուց ու գլուխը թոցնելուց առաջ նա արտասանում էր „Յա՛ տեր

ըսկուն որթումե՛ պատրայք, տո՛ւր իմ թուր կտուր անես, լաճ անես, ախշի չանես, իմ իրեսը սև չանես»:

Բորչալուում այն տեղի էր ունենում հարսանիքի երկրորդ օրը՝ <<թագվորահորս>> անունով: Փեսան պետք է հրացանով նշան բռներ ցցի վրա պահված խնձորին: Գանձակի Բանանց գյուղում նույնանուն ծեսը կատարվում էր գերեզմանատանը. փեսան հավի գլուխը շիրմաքարին խփելով պետք է գլխատեր:

Վարդաբլուրում թագվորը <<թագվորահորս էր ելնում>> իր մակարների հետ, հետապնդում էր հարսնացուի հայրական տան կամ նրա հարևանների հավերը: Այս նույնը կատարվում էր ամենուրեք: Խլաթցի ազապները պսակին հաջորդող ճաշկերույթից հետո մնում և <<խավթռունք>> էին կատարում. նվագի տակտի տակ նրանք մենամարտում և թագավորի հետ թոցնում էին իրենց աքլորների գլուխները: Այս ծեսը այդպես էին կատարում նաև Շիրակում:

Այլ խաղեր

7. Գոտու խաղ

Ախուրյանում խաղը նույնն է, ինչպես և բոլոր տեղերում: Ներսիսներն ու դրսիսները ձեռք են տալիս, ներս քաշողը խփում է դրսին զոտկատեղից ցած, բոլոր տեղերին: Դուրս քաշվածը պահվում է որպես գերի: Ծեծն սկսվում է բոլոր լախտիները փախցնելուց հետո:

8. Հեծնելով գնդակ

Խաղը նույնն է Արթիկի շրջանում: Խաղում են զարնան և աշնան ամիսներին, բակերում ու կալերում: Դրսեցիներից մեկի ազդանշանով սրանք թոչում նստում են կանգնածների մեջքերին: Ներսիսների կողմից փախչողներին ուղղված գնդակը վրիպելու դեպքում փախչող խումբը մինչև գնդակով երկրորդ անգամ հարված ստանալը արագորեն մտնում է շրջանի մեջ, որով նա հաղթանակ է շահում: Բայց



եթե գնդակը վրիպելիս մինչև փախչողների շրջան մտնելը շալակողներին հաջողվում էր խփել նրանցից մեկին, խփողները շահում են և խմբի դերերը փոխում:

9. Չլիկ

Նոր Բայագետում խաղը նույնն էր: Տղաները կանգնում էին բնում և ձողերը հերթով նետում դեպի գիծը, որ 3-5 քայլ հեռու էր լինում: Գծի վրա չընկած ձողի տերը գլխարկը դնում էր գծին և բնից խփում: Չհաջողեցնելիս գլխարկը չլում էին: (Ախուրյանում խաղը նույնն էր <<Ցորոր>> անունով)

10. Փափախ չոցի

Խաղում էին 12-16 տարեկան տղաները կալերում և դաշտերում գարնան ու աշնան ամիսներին: Դաշտի մի մասում քաշվում է 1-2 մ երկարությամբ մի գիծ, որից 12-15 մ հեռավորության վրա փորվում էր մի փոս՝ 10*15 սմ մեծությամբ և 5 սմ խորությամբ:

Խաղացողները հերթականությամբ մոտենում են գծին և կանգնում նրա եզրին, ապա ձեռնափայտերը մեկ-մեկ նետում են դեպի փոսը՝ աշխատելով, որքան կարելի է, դրանք զցել փոսին մոտիկ: Երբ բոլոր խաղացողները փայտերը զցում են, մոտենում են փոսին և ոտքով կամ ձեռնափայտով չափում փայտերի ու փոսի միջև ընկած տարածությունը: Ամենից հեռու ընկած փայտի տիրոջ գլխարկը դնում են հենց այնտեղ, որտեղ ընկած է լինում նրա գավազանը: Խաղացողներից մեկը, որի փայտը ամենամոտն է ընկած լինում փոսին, կանգնում է վերջինիս վրա և այնտեղից աշխատում է խփել գլխարկին, իսկ վերջինիս տերն ու մնացած խաղացողները կանգնում են գլխարկից մի քանի քայլ հեռավորության վրա:

11. Մեռել

Ախուրյանի խաղին մասնակցում են 6-12 հոգի, որոնք բաժանվում են երկու հավասար խմբի: Յուրաքանչյուր խումբ իր խաղացողների թվին հավասար քարեր կամ մոտավորապես քառակուսի, ձեռնաչափ տախտակներ է ունենում, որոնք

կանգնեցնում են գետնին, մեկ խումբը մյուսից 10-15 մ հեռավորության վրա, իրար դիմաց, իրենք էլ դրանց մոտ կանգնելով:

Յուրաքանչյուր խաղացող այնուհետև վերցնում է 3 կլոր, ձվի մեծության քար: Վիճակահանությամբ խմբերից մեկն սկսում է խաղը: Սրանցից մեկն իր ձեռքի երեք քարերով խփում է հակառակորդի կանգնեցրած քարերին, և երբ նա իր քարերով տապալում է դրանցից միայն մեկին, խփում է նույն խմբի մյուս անդամը: Երբ սա էլ տապալում է դրանցից մեկը, խփում է 3-րդը և այլն: Եվ երբ վերջին խփողներն էլ տապալում են մնացած բոլոր տախտակները, հաղթողներն սկսում են փախչել դեպի ետ, իսկ հաղթվողները վազում և բռնում են փախչողներին (յուրաքանչյուրն իր դիմացի կանգնածին է բռնում) և բռնած տեղից հաղթողներին շալակում, բերում են իրենց տեղեր, ու խաղը կրկնում, խփելու իրավունքը դարձյալ հաղթողներին է վերապահվում:

ԿԱՆՈՆՆԵՐ.— 1. Խմբերի դերերը փոխվում են, երբ խփողներն իրենց բոլոր քարերով չեն կարողանում հակառակորդի բոլոր քարերը կամ տախտակները տապալել: 2. Քարը կամ տախտակը տապալված է համարվում այն դեպքում, երբ բոլորովին շուռ է գալիս: 3. Երբ տապալված քարին է դիպչում հաջորդ խփողի քարը, տապալվածը, որը մեռած էր համարվում, կենդանանում է, որը նորից են կանգնեցնում: 4. Հաղթողները փախչելու պահին շուռ չեն գալիս, այլ ետ-ետ են գնում:

12. Ճելե-մելե

Արթիկում և Ապարանում մասնակցում էին 6-10 պատանի և երիտասարդ տղաներ: Խաղում են տարվա տաք եղանակների հով ժամերին: Կանգնելով և անուն դնելով՝ բաժանվում են երկու խմբի: Այնուհետև թաց ու չորով որոշում են խաղն սկսող խումբը: Սկսող խմբի իբանում իրար հետևից, մեկական քայլ հեռու, երեք սալաքար են տնկում: Մյուս խմբի համար նույնն են կատարում, այս իբանից 25-30 քայլ հեռավորության վրա մի նոր իբանում: Խաղն սկսող խմբի անդամները նշանակված սահմանից հերթով մեկական փոքրիկ քար են նետում մյուսների իբանը՝

տնկված քարերը շրջելու նպատակով: Ում որ հաջողվում էր մի զարկով շրջել մի թիրախ, նա հաջորդ անգամ երկու քարով խփելու իրավունք է ձեռք բերում, երկուսը շրջելիս՝ երեք քարով, և երեքը շրջելիս խաղի այդ պահը հոգուտ այդ խմբի վերջանում է: Այս դեպքում պարտված խմբի անդամները շալակում են տանող խմբի անդամներին և երկու անգամ տանում են իրանից իրան: Դրանից հետո խաղը նորից է սկսվում:

Կանոններ:— 1. Երբ խփում են, բայց թիրախը չի ընկնում, խփված չի համարվում: 2. Երկու կամ երեք քարով խփելու իրավունք ձեռք բերողները <<երկուքարանի>> կամ <<երեքքարանի>> անունն են կրում: 3. Պարտվող խմբի անդամները պարտավոր են <<իրենց ոտքով>> գալ հաղթող խմբի իրան և շալակելով տանել ման ածել: 4. Շալակվողները շալակողներին էջ համարելով <<չոշ>> կամ <<հոշ>> են ասում և իրար մոտից անցնելիս ոտքերը կանթ են գցում, որպեսզի էջերը չարչարվեն: Երբեմն առջևից գնացող իշու հեծածի փեշից բռնում է հետևից եկող էջը, նրա ուժով առաջ ընթանալու դիտավորությամբ:

13. Քարնկվա

Ախուրյանում խաղում են 8-10 տարեկան տղաներն ու աղջիկները ձմռան ու գարնան ամիսներին 10-12 հոգով: Երեք քարը ձեռնաքարով միանգամից տապալելու դեպքում գծում են մի գիծ, որի վրա կանգնում են հաղթող կողմի խաղացողները: Հաղթողները կանգնում են գծից 5 մ հեռու՝ մյուսների դիմաց, և նրանցից մեկի հրահանգով ետ-ետ փախչում: Այդ վայրկյանին հաղթվածները հետապնդում և բռնում են փախչողներին. բռնած տեղից նրանց շալակում և բերում են մինչև իրենց (պարտվածների) սահմանը, որից հետո խաղը նորից է սկսվում:

14. Յոթ քար

Խաղում են 10-16 տարեկան տղաներն ու աղջիկները տարվա բոլոր տաք եղանակներին, բակերում, կալերում և դաշտերում: Եթե խաղի ընթացքում փախչող

խմբի անդամներից մեկը կամ մի քանիսը չեն խփվում, այլ խույս տալով գնդակից՝ շրջանցում են և հաջողեցնում ցրված յոթ քարը շարել միմյանց վրա և հաշվել 1-7 թիվը, ապա այս դեպքում փախչողները շահում են մեկ փական: Երբ հակառակորդին հետապնդելիս նետած գնդակը նրանցից որևիցե մեկը բռնում է օդի մեջ, առանց գնդակը գետնին կամ իր մարմնին դիպչելու, ապա այս դեպքում գնդակը բռնող խումբը շահում է մեկ փական:

15. Աջի խաղ

Արթիկում խաղում էին հատկապես աշնանը, դրսում: Մասնակցում էին պատանի ու երիտասարդ տղաները, 2-7 հոգով, որոնք մեկական ԱՋ էին ունենում: Խաղի համար մեջտեղ էին դնում մեկական ճան: Երկու հոգի լինելու դեպքում դրանք կանգնեցրած վիճակում դնում էին կողք կողքի, ավելի հոգով խաղալիս դրանց վրա, դարձյալ նույն ձևով, կանգնեցնում էին բոլոր ճաները: Այս՝ իրար վրա դարսած ճաների խումբը դալ է կոչվում: Ղալից մի 10 քայլ հեռու իբան էին նշանակում, որտեղից խաղացողները իրենց աջերը գցում էին դեպի դալը: Խաղն այդուհետև դրսևորվում էր հետևյալ ձևով:

1. Նախ ընտրում էին դալի տեր: Դրա համար բոլորը կանգնած վիճակում սորում էին իրենց աջերը: Ղալի տեր դառնում էր նա, ում աջը թոխան էր կանգնում: Երբ այնպես էր պատահում, նրանք իրենց աջերը նորից էին սորում այնքան ժամանակ, մինչև որ իրենցից միայն մեկն էր թոխան կանգնեցնում:

2. Ղալի տերը գնում էր իր աջը սորում էր դալի մոտ՝ պայմանով, որ աջը չկանգներ:

3. Մյուս խաղակիցները հերթով իրենց աջերով նշան էին բռնում դալին և վերջինիս տիրոջ աջին, ըստ որում դալին նշան բռնելիս նախապես ասում էին <<դալին եմ>>, աջին բռնելիս՝ <<աջին եմ>>, իսկ երկուսին միաժամանակ բռնելիս՝ <<մեջ դալատան>>:

4. Աջը նետելիս դիպչելու դեպքում աջատերը կանգնում էր իր աջի մոտ. երբ որ կաշում էր դալատիրոջ աջին, վերջինս խաղից դուրս էր գալիս, որով դալի տեր էր դառնում նրան պարտության մատնողը: Իսկ երբ աջը դալին էր կաշում, վերջինս ցրվում էր. այդ դեպքում, եթե աջը թոխան կամ ալչի էր կանգնում, աջի տիրոջն իրավունք էր վերապահվում խաղը շարունակելու, իսկ եթե դոք կամ ճիք էր կանգնում, դալի ճաներից յուրացնում և դարձյալ խաղը շարունակում էր: Ղալատիրոջ աջը մոտիկ լինելու դեպքում նա ձգտում էր նախնառաջ խփել իր աջով և նրան զրկել խաղին մասնակցելու և դալի տեր լինելու իրավունքից: Այնուհետև նա սկսում էր իր աջով խփել խմբված ճաներին, սրանց չուռ անելու՝ ցրելու նպատակով: Չուռ անելիս, եթե աջը ճիք կամ դոք էր ընկնում, յուրացնում էր համապատասխան ընկածների, որից հետո նորից շարունակում էր չուռ անել այնքան ժամանակ, մինչև որ բոլոր ճաները յուրացնում էր: Սրա խաղն ընդհատվում էր, երբ աջն էր վրիպում, կամ ճաները աջին համապատասխան չէին շրջվում:

5. Երբ որ երկրորդ խաղացողը հրապարակի ճաները դեռևս չտարած խաղի հերթը երրորդին էր տալիս, վերջինս իբանից իր աջով նշան էր բռնում արդեն ցրված ճաներին կամ վերջին խաղացողի աջին: Երբ որ վերջին խաղացողի աջին էր խփում, յուրացնում էր նրա տարած ճաները և նրան խաղից զրկում, իսկ երբ ճաներին էր խփում, իր աջը ալչի կամ թոխան կանգնելու դեպքում շարունակում էր խաղալ. ճիք կամ դոք ընկնելիս յուրացնում էր համապատասխանորեն ընկած ճաները:

6. Հաջորդ բոլոր խաղացողների համար խաղը շարունակվում էր վերոհիշյալ ձևով:

7. Երբ շարքային խաղացողների աջերը վրիպում էին, հերթը նորից դալատիրոջն էր հասնում: Սա, ըստ հայեցողության, կարող էր իր աջով չուռ անել, որտեղ յուրացումը կատարվում էր սովորական ձևով, կամ, որ ավելի ձեռնտու էր, դիմում էր հետևյալ ձևին: Իր աջը կամ դալը ձեռքի թաթի մի շարժումով շփում-շպրտում էր դեպի մյուսների աջերին հնարավորինս մոտ, ապա հեշտ էր դրանց հարվածելով զրկել խաղալու իրավունքից: Շպրտելիս իր աջը ճիք կամ դոք ընկնելիս յուրացնում էր

համապատասխան դիրք ընդունած ճաները, իսկ թոխան կամ ալշի կանգնելիս շարունակում էր խաղալ: Իսկ եթե այս պայմաններից ոչ մեկը չէր ստացվում, մյուս աջատերերից առաջինն էր սկսում խաղալ:

Մոտենալով աջերին դալատերը սկսում էր մեկ-մեկ խփել դրան և աջատերերին զրկել խաղալուց: Իսկ եթե աջերից մեկը հեռու էր գտնվում, և խփելը անհուսալի էր լինում, դալի տերը իր աջ և մնացած ճանը (կամ ճաները) դարձյալ ձեռքի թաթով շպրտում էր հեռու, որպեսզի մյուս աջատերը անկարող լինի խփել իր աջին: Շաքրտելուց հետո, երբ իր աջը և ճաներն ընկնում էին համապատասխան դիրքով, յուրացնում էր, այլապես խաղն անցնում էր հակառակորդին:

8. Հակառակորդը, երբ հարմար էր գտնում, հեռվից խփում էր դալատիրոջ աջին, հակառակ պարագայում իր աջը վերցնում, գնում էր դալատիրոջ աջի մոտ և սորում էր՝ ասելով,— յա՛, տե՛ր աստված: Երբ աջը սորելիս ալշի էր կանգնում, իրավունք էր ստանում մոտիկից խփելու հակառակորդի աջին, որով յուրացնում էր դալատիրոջ տարած բոլոր ճաները, ի թիվս սրանց նաև գետնին մնացածները, և դառնում էր դալի տեր:

Կանոններ. — 1. <<Ղալին եմ>> և <<աջին եմ>> խոսքերն ասվում էին ոչ միայն իբեճ խփելիս, այլ նաև տեղում՝ դալի մոտ խաղալիս: 2. Ղալը քանդվելուց հետո <<ղալին եմ>> և <<աջին եմ>> խոսքերն ասվում էին, բայց <<մեշ դալատան>> չէր ասվում: 3. Երբ որ <<ղալին եմ>> ասելիս կաշում էր աջին կամ հակառակը, համարվում էր վրիպած: Այդ դեպքում գետնի աջին կամ դալին տեղաշարժ անելիս հին դիրք չէին վերականգնում: 4. Այն դեպքում, երբ դալը դեռևս կանգուն էր մնում, և աջատերերը իրար հետևից միմյանց աջին խփելով խաղազրկում էին, վերջին խփողը նախավերջինի աջին խփելուց կարող էր հրաժարվել և գնալով մոտը, իր աջը սորելով ալշի կանգնեցնել: Եթե հաջողվում էր ալշի բերել, նա իսկույն խփում էր նախավերջինի աջին ու յուրացնում էր նրա՝ արդեն տարած ճաները:

16. Սուլթան



Արթիկում խաղում էին պատանի տղաները, և մինչև 30 տարեկան մարդիկ, 4-10 հոգով: Քիչ հոգով խաղալիս դնում էին երկուական, իսկ շատ հոգով խաղալիս՝ մեկական ճան: Յուրաքանչյուր խաղացող ունենում էր մի աջ խփելու համար:

Խաղի համար գետնի վրա մի ուղիղ գիծ էին գծում, որի համար շարքով դասավորում էին դրած ճաները: Ճաների գծից այս և այն կողմ, քայլի վրա մեկական իբրան էին ընտրում: Ճաների շարքի մեջ դրանցից մեկը կենտրոնում գլխի վրա տնկում և սուլթան անունն էին տալիս: Ապա՝ թաց ու չորով որոշում էին խաղալու հերթականությունը:

Սուլթանը 7 ոտնաչափ տեղափոխելիս խփողը յուրացնում էր բոլոր ճաները: Շարքային ճաները յուրացվում էին նաև 3 ոտնաչափ տեղաշարժելիս:

Կանոններ.— 1. Սուլթանին կպչելիս, երբ նրան 7 ոտնաչափից պակաս էին տեղաշարժ անում, խփողները երկու ճան տուգանք էին դնում, իսկ շարքայինները երեք ոտնաչափից պակաս շարժելիս՝ մեկ ճան:

2. Երբ աջը սուլթանին ու շարքային ճաներին միաժամանակ տեղաշարժ էր անում և սակայն գծից պահանջված չափով չէր կարողանում հեռացնել, յուրաքանչյուրի համար նույն օրենքներով տուգանք էր տալիս: 3. Հասարակ ճաները տեղաշարժելիս, երբ 3 ոտնաչափից պակաս էին հեռանում և ալչի կամ թոխան էին կանգնում, տուգանք չէին վճարում, այլ դա նորից տեղն էին դնում: 4. Երբ բոլոր ճաները շարքից թոցվում էին, և սուլթանը մենակ էր մնում, խաղակիցները խուսափում էին դրանց խփելուց, որովհետև 7 ոտնաչափը չլրացնելու դեպքում երկու տուգանքի հեռանկար էր լինում: Այդ պատճառով ընդհանուր պայմանավորվում էին դրան չխփել, այլ շուրջը նորից շարել և խաղը կրկնել: Այս դեպքում սուլթանն ընդհանուրին էր պատկանում, ուստի դրա նախկին տերը պահանջ չէր ներկայացնում: 5. Ճաներին կարելի էր խփել ինչպես ձեռքին գուգահեռական դիրք տալով, այնպես էլ <<գլխիվայր>>, այսինքն՝ վերից վար՝ կորագիծ կազմելով: 6. Առաջին անգամ խաղն սկսվում էր թաց ու չորի

միջոցով, իսկ այնուհետև նոր խաղն սկսում էր նա, ով գտնվում էր հաղթանակը շահած խաղակցից հետո:

17. Ջխտա

Արթիկում խաղում էին պատանի և երիտասարդ տղաները, տարվա տաք եղանակներին, 2-4 հոգով: Խաղն սկսում էին երկուական ճանով, որոնք հերթով ստրում էին խաղատեղը կանգնած և քիչ կռացած վիճակում: Չորս հոգով խաղալու դեպքում խաղն ընթանում էր հետևյալ ձևով:

1. Ասենք թե առաջինը բերում էր մի թոխան, մի ճիք, երկրորդը՝ երկու ճիք, երրորդը՝ մի ալչի, մի դոք, չորրորդը՝ մի թոխան, մի ալչի: Վերջինիս բերած թոխանը չեզոքացնում էր առաջինի բերած թոխանը, այսինքն՝ խաղի այս պահը չեղյալ էր հայտարարվում, որը կոչվում էր <<Ֆրո անել>>: Նույն ձևով ֆրո էր լինում նաև ալչի գալու դեպքում, եթե հրապարակում թոխան կանգնած ճան չկար: Ֆրո կարող էին անել բոլոր խաղացողները:

2. Երբ առաջին խաղացողը զույգ թոխան էր բերում, ինքն իրեն ֆրո էր անում, ուստի նորից էր զցում: Իսկ հետագա բոլոր խաղացողները զույգ թոխան բերելիս բոլորին էին ֆրո անում, ուստի խաղի այդ մասը կրկնում էին:

3. Երբ որ առաջին զույգը ալչի էր բերում, ինքն իրեն ֆրո էր անում, ուստի նորից էր խաղում, երբ հաջորդներն էին զույգ ալչի բերում, հրապարակում նախապես թոխան լինելու դեպքում ֆրո չէին համարվում, այլ ընդհակառակը՝ այդ բոլոր ալչիները յուրացվում էին թոխանի տիրոջ կողմից: Թոխան չլինելու դեպքում ֆրո էր համարվում:

4. Թոխանի տերը յուրացնում էր թե՛ ալչիները, թե՛ դոքերը, իսկ ճիքերին չոթում էր, որով դոք շրջեցնելիս այն յուրացնում էր, իսկ չհաջողեցնելիս խաղը հանձնում էր ճիք ընկած ճանի տիրոջը, ըստ որում՝ չոթել նշանակում էր խփող ճանին հաղորդել



այնպիսի պատվող շարժում, որը նրան պահեր տեղում, իսկ հարվածվող ճանին մղեր հեռու և նրան շուտ տար:

Չոթելուց հետո չոթված և շուտ եկած ճանի տերը հեռվից իր ճանով հարվածում էր հակառակորդի ճանին, ըստ որում, երբ այն շուտ էր բերում կամ իր ճանը թոխան էր կանգնեցնում, ու խփվածը դոք էր ընկնում, և կամ իրենն ալշի էր կանգնում, և հակառակորդին՝ ճիք, այս բոլոր դեպքերում յուրացնում էր նրա ճանը, այդ թվում նաև՝ մյուս ճաները համապատասխան դիրք ընդունելու դեպքում:

Կանոններ. 1. Չոթելու կամ հեռվից հարվածելու ժամանակ խփող և խփվող ճաները, երբ գույգով թոխան կամ ալշի էր կանգնում, ֆըռ էր լինում, որով բոլոր կրողները իրենց կրած ճաները տերերին էին վերադարձնում և խաղը նորից սկսում: **2.** Երբ մեկը չոթելուց հետո անհաջողության հետևանքով խաղը հակառակորդին էին հանձնում, վերջինս իր ճանի և առաջին ճանի միջին տարածությունը չափում էր բերանքսիվայր պառկելով և ձեռքերն այս ու այն ճաները պարզելով: Երբ որ ձեռքերը հասնում էին ճաներին, նա իրավունք էր ստանում իր ճանը վերցնելու և գալու հակառակորդի ճանի մոտ՝ այն չոթելով և շուտ տալով յուրացնելու համար: Հակառակ դեպքում նա հարկադրված էր հեռվից հարվածել:

Հեռվից հարվածողի ճանը վրիպելու դեպքում, երբ ալշի կամ թոխան էր կանգնում, ինքը չոթելու իրավունք էր ձեռք բերում, իսկ ճիք կամ դոք ընկնելու դեպքում խփելու ենթակա ճանի տերը ձրիաբար վերցնում էր նրա խփած ճանը և շարունակում էր չոթել մյուս ճաները:

Չոթելիս ճանը ճիքից դոք կամ դոքից ճիք շրջելու դիտավորության ժամանակ, երբ իր ճանը թոխան էր կանգնում, և հակառակորդինը չէր շրջվում, դարձյալ յուրացնում էր: Նույնն էր նաև ալշին: Թոխան կանգնելու դեպքում կոչվում էր <<թոխան տակ>>, ալշի կանգնելու դեպքում՝ <<ալշի տակ>>:

Առաջարկություններ

Արագած Հովիտ ՏԱԽ՝ Տարածքի տեղական զարգացման 2022-2026թթ. ռազմավարությամբ սահմանված առաջնահերթ ուղղությունների հաշվառմամբ մշակութային ժառանգության քարտեզագրմանն ուղղված այս հետազոտությունը հաշվի առնելով տեսլականից բխող ռազմավարական երկու առաջնահերթ ուղղությունները՝

- *կրթական, սոցիալական, մշակութային հնարավորությունների ստեղծմամբ երեխաների ու երիտասարդների զարգացման համար ապահովել բարենպաստ ու անվտանգ միջավայր,*

- *գործընկերության ու նորարար տեխնոլոգիաների խթանմամբ գրանցել տեղացիների՝ գյուղատնտեսությունից ստացվող եկամուտների աճ,¹¹⁹*

ցույց տալ, որ համայնքների մշակութային ժառանգությունը «տնտեսության աղքատ եղբոր» կարգավիճակով ակնկալում է միայն ներդրումներ՝ չդառնալով զարգացման հնարավորություն:

Համայնքների ինչպես պաշտոնական, այնպես էլ ոչ պաշտոնական զարգացման ծրագրերում և երազանքներում մշակութային ժառանգությունը դիտարկված չէ որպես զարգացման հնարավորություն, նորարարական նախաձեռնությունների ոլորտ, որպես բարենպաստ և անվտանգ միջավայր ստեղծելու գործոն:

Համայնքներում համայնքային և պետական բյուջեի միջոցներով պահպանվում են մշակութային ենթակառուցվածքներ՝ արվեստի դպրոց, երաժշտական դպրոց, մշակույթի տներ, որոնք, սակայն, հայեցակարգային մոտեցման բացակայության պայմաններում կատարում են մշակույթի սիմվոլիկ պահպանների ֆունկցիաներ:

¹¹⁹ Մանրամասն տես՝ «Տարածքի տեղական զարգացման 2022-2026թթ. ռազմավարություն», էջ 6: [Արագած հովիտ Ռազմավարություն.pdf \(aragatsvalleylag.am\)](#)

Համայնքներում մշակութային ժառանգության վրա հիմնված եզակի բիզնես նախաձեռնությունը Պեմգաշենի “Stone Art” հյուրատունն է: Համայնքներում չկան մշակութային ժառանգության վրա հիմնված ապրանքային առաջարկներ, միջավայրեր, և նրանք դուրս են գրոսաշրջային ուղիներից: Ինչպես հայաստանյան, այնպես էլ Շիրակի մարզի պատմամշակութային հուշարձանները ներառված չեն գրոսաշրջային այցելությունների ուղիներում: Հիմնական այցելուները տեղացիներն են և պատահական այցելուները, ինչը ևս շատ կարևոր, բայց ոչ բավարար ցուցանիշ է համայնքային ժառանգությունը կենսունակ պահելու համար:

Գյուղատնտեսության ոլորտում նորարարությունների ցածր մակարդակի պատճառով գյուղատնտեսական մթերքի մշակման նախաձեռնությունները ևս թույլ են, ապրանքային առաջարկները՝ քիչ և ներփակ ցանցերով, որի հետևանքով գյուղատնտեսական զբաղվածությունն ունի բազմաթիվ խոչընդոտներ ու խնդիրներ՝ մնալով ոչ ցանկալի զբաղվածության ոլորտ:

Հետազոտության ընթացքում ուսումնասիրված բոլոր ոլորտները՝

- Համայնքը և համայնքի մշակութային տարածք,
- Բնակչության կազմ, կառուցվածք, ծագում,
- Համայնքի տնտեսական կյանքի պրակտիկաներ և ավանդույթներ. գյուղատնտեսական, արհեստագործական,
- Տոնածիսական մշակույթ՝ պրակտիկաներ և ավանդույթներ, հիմնականում սոցիալական և գենդերային տեսանկյունները,
- Խոհանոցային ավանդույթների և համայնքային պրակտիկաների հետազոտությունը ցույց տվեց, որ առկա են ներուժ ու ժառանգություն, որը գիտակցված և թիրախային ներդնելու դեպքում կնպաստի ՏԱԽ-ի ռազմավարական առաջանահերթությունների զարգացմանը:

Ռազմավարության առաջնահերթություններով սահմանված գործողություններից յուրաքանչյուրում հնարավոր է մշակութային ժառանգության որևէ կամ մի քանի բաղադրիչի ներառում՝ տարբեր ձևաչափերով:

Նախատեսվող կրթական ծրագրերի բոլոր բաղադրիչներում տեղական մշակութային ժառանգության մասին գիտելիքը կարող է ներառել՝

- հետազոտական նախագծեր,

- կրթական ուսումնասիրություններ,

- տեղական մշակութային ժառանգության գիտելիքի հավաքագրում և հանրայնացում հատկապես համայնքի էջերով ու Վիկիպեդիայով,

- համայնքների մասին գրքերի հրատարակության խթանման նախաձեռնություններ,

- տեղական մշակութային ժառանգության զբոսաշրջայնացման հնարավորությունների շուրջ նախագծերի իրականացում, որի արդյունքում կարող են իրականացվել՝

- համայնքային զբոսաշրջային ուղիների մշակում՝ սոցիալական ձեռնարկատիրության գաղափարով, հասույթն ուղղելով կրթական որևէ խնդրի բարելավմանը,

- ցուցանակների պատրաստում,

- առանձին բնակավայրերին յուրահատուկ հուշանվերների պատրաստում,

- Տեղական արհեստների շուրջ կրթական ծրագրերի կազմակերպում, օրինակ, գորգագործություն, կավագործություն, թելի մշակում, քարի մշակում ու փորագրություն և այլն,



-տեղական խոհանոցի ուտեստների ուսուցում. տարիքով ավագները իրենց փորձը կփոխանցեն երիտասարդներին,

-տեղական խաղերի վերականգնում,

-տեղական ժողովրդական տոների նախաձեռնում՝ հիմնված բացառապես տեղական պատմությունների և սովորույթների վրա, ինչպես, օրինակ, Համբարձման տոնը՝ որպես զուտ երիտասարդական:

-տեղական որևէ առանձնահատուկ կամ ընդհանուր մշակութային ժառանգության փառատոների և տոնավաճառների կազմակերպում, ինչպես, օրինակ, Պեմզաշենում՝ խորհրդային հանքարդյունաբերության՝ քարի մշակման կամ տուֆի, Ձիթհանքովում՝ ձեթի, տեղական ուտեստների և դրանց պատմությունների շուրջ, տեղական ավանդական արհեստների և ստեղծարար արդյունաբերության դրսևորումների շուրջ և այլն:

Այս ոլորտում հիմնական գործընկերներ կարող են հանդիսանալ նախակրթարանները, դպրոցները, տարբեր մշակութային խմբակները, գրադարանները, երիտասարդները:

Ռազմավարության հաջորդ առաջնահերթության՝ գյուղատնտեսությունից ստացվող եկամտի աճն ապահովելու գործում տեղական մշակութային ժառանգության դերը հիմնականում կարող է կապված լինել ավանդական գյուղատնտեսական գիտելիքի վերականգնման ու ցուցադրության, օրինակ, ավանդական ցուցադրական վարելահողի ստեղծում, վարող գործիքների ժամանակագրական տարբեր փոփոխությունների ներկայացում, էկոլոգիական գյուղատնտեսության կոնցեպտի շրջանակներում տեղական ավանդույթների կիրառման և ներկայացման, օրինակ, ձիթհանքի վերականգնում, այցելությունների կազմակերպում, գյուղատնտեսական զբոսաշրջային առաջարկների խթանման, տեղական ավանդական ինգրեդիենտների ստացման և

վերամշակման, գյուղատնտեսական մթերքի նորարարական վերամշակման, ապրանքայնացման, օրինակ, կտավատի ձեթի շշալցում, տեղական պանիրների, վայրի ուտելի բույսերի, թեյաբույսերի, վայրի պտուղների փաթեթավորման առաջարկների ներկայացման հետ:

Այս բաղադրիչի դեպքում հիմնական գործընկերներ կարող են դառնալ համայնքապետարանը, ֆերմերային տնտեսությունները, գյուղատնտեսությամբ եկամուտ ստացող ընտանիքները:

Մասնակցության սկզբունքները պետք է հիմնված լինեն մշակութային ժառանգության կենսունակությունը պահպանելու, չվնասելու, չաղավաղելու, մշակութային համատեքստից կտրված չներկայացնելու, էթիկական կանոնները պահպանելու, այդ ժառանգության կրողներին, այսինքն՝ դրան առնչվող սովորությունները, փորձը պահպանողներին առաջնային դեր տալով միջսերնդային կապերը պահպանելու սկզբունքների կիրառմամբ: